«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ

ԿԱՆՈՆՆԵՐ

Բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության ապահովագրություն

Հաստատվել է Ընկերության խորհրդի
կողմից 2008թ.-ի մարտի 3-ին
(արձանագրություն թիվ 2)

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Գործադիր տնօրեն՝
Լևոն Ալթունյան

ԵՐԵՎԱՆ
2008

ԲԱԺԻՆ Ա
ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 1

Աշխատակցի անազնվություն

Ցանկացած Աշխատակցի պատճառած անազնիվ կամ հանցավոր գործողությունների պատճառով, անկախ նրանից, թե դրանք իրագործվել են առանձին, թե այլ մարդկանց հետ միասին, որոնք կատարվել են վերոհիշյալ Աշխատակցի կողմից Ապահովագրվողին վնաս պատճառելու կամ իր համար ապօրինի ֆինանսական շահ ստանալու նպատակով:

Հատուկ Պայմաններ

1. Հաշվի չառնելով վերոհիշյալը՝ ընդունված է, որ Վարկերի կամ Առևտրի համար սույն Ապահովագրական Հոդվածը ծածկում է միայն այնպիսի ֆինանասական կորուստներ, որոնք ծագում են Աշխատակցի կողմից կատարված անազնիվ կամ հանցավոր գործողությունների արդյունքում, որով վերոհիշյալ Աշխատակիցը ստանում է ապօրինի ֆինանսական շահ:

2. Աշխատավարձը, վճարները, կոմիսիոնները, բոնուսները, աշխատավարձի բարձրացունները և վճարման այլ տեսակներ չեն համարվում ապօրինի ֆինանսական շահ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2

Տարածքներ

Այն դեպքում, երբ

(a) Տարածքում գտնվող Սեփականության կորուստի պատճառ է հանդիսանում:
   (i) տարածքում ներկա գտնվող անձանց կողմից կատարված գողությունը, կամ
   (ii) խորհրդավոր, անբացատրելի անհետացումը, կամ
   (iii) վնասումը, ոչնչացումը կամ սխալ վայր տեղափոխումը, չնայած, որ տվյալ Սեփականությունը գտնվում է Տարածքում, կամ

(b) Ապահովագրվողի որևէ հաճախորդի, կամ հաճախորդի որևէ ներկայացուցիչի տիրապետման տակ գտնվող Սեփականության Գողության հետևանքով կորուստը, երբ տվյալ հաճախորդը, կամ նրա ներկայացուցիչը գտնվում է Ապահովագրվողի Տարածքում, միշտ ենթարկվում է սույն Պայմանագրի Ընդհանուր Պայման No 12-ին, սակայն ցանկացած դեպքում բացառում է տվյալ հաճախորդի կամ նրա ներկայացուցչի պատճառած կորուստը:

Հատուկ Բացառություն

Սույն Պայմանագրի սույն Ապահովագրական Հոդվածը ՉԻ ծածկում Ահաբեկչության ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստները կամ վնասները: Սակայն, դա չի նշանակում, որ սույն Հատուկ Բացառությունը նաև տարածվում է Գողության կամ նմանատիպ գործողության արդյունքում ծագած կորուստների կամ վնասների վրա: Սույն Պայմանագրով կորստի կամ վնասի համար հատուցում ստանալու համար ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՅՑԻ կամ միջոցառման ժամանակ, լինի դա դատական գործ, թե այլ գործընթաց, Ապահովագրվողը ինքը պետք է ապացուցի, որ իր կրած վնասը կամ կորուստը սույն Հատուկ Բացառությանը չի պատկանում.

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 3

Տեղափոխում

Այն դեպքում, երբ

(a) որևէ վայր տեղափոխման ժամանակ Աշխատակցի տիրապետման տակ գտնվող Սեփականության, կամ Ինկասացիոն Ընկերության տիրապետման տակ գտնվող վերոհիշյալ Սեփականության Ապահովագրվողի անունից զրահապատ մեքենայով տեղափոխության ժամանակ ինչ-ինչ պատճառներով ծագած կորուստը կամ վնասը, կամ

(b) Ինկասացիոն Ընկերության տիրապետման տակ գտնվող այլ վայր տեղափոխման ժամանակ ըստ

ներկայացնողի գործիքի ինչ-ինչ պատճառներով ծագած կորուստը կամ վնասը:

Հատուկ Պայման

Տեղափոխումը սկսված է համարվում այն պահից ի վեր, երբ տեղափոխող անձը Ապահովագրվողից կամ նրա անունից ստանում է տվյալ ապրանքները, իսկ ավարտված համարվում է այն ժամանակ, երբ առաքվում են որպես այդպիսին ճանաչված ստացողին կամ նրա գործակալին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 4

Կեղծված Չեկեր

(a) Ապահովագրվողի կողմից թողարկված Չեկերի Կեղծված Ստորագրության, կամ ցանկացած Չեկերի, Մուրհակների, Բանկային Ակցեպտների, Ակրեդիտիվների, Փոխանցման հրահանգների, Ավանդային Սերտիֆիկատների և Բանկային Մուրհակների Կեղծ Փոփոխման պատճառով կամ

(b) Ապահովագրվողի կողմից վճարվելիք և վճարված Ստացականի կամ Սովորական Մուրհակների Կեղծված Ստորագրության կամ Կեղծ Փոփոխման պատճառով:

Հատուկ Պայման

Բոլոր վերոհիշյալ գործիքները պետք է լինեն գրավոր ձևով, որոնց բնույթին, դրանց հետ առնչվող Աշխատակիցը, պետք է քաջատեղյակ լինի: Ապահովագրվողը պետք է հիմնված լինի Կեղծված Ստորագրությանը կամ Կեղծ Փոփոխմանը, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է կորուստի պատճառ դառնա:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 5

Կեղծված Արժեթղթեր

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը գործունեության ընթացքում գործել է Արժեթղթերով կամ Նմանատիպ Գրավոր Գործիքներով, որոնք

(i) իրենց վրա կրում են Կեղծված Ստորագրություն, կամ
(ii) ունեն են Կեղծ Փոփոխում, կամ
(iii) լիովին Կեղծված են,
(iv) կորած կամ գողացված են

Հատուկ Պայմաններ

1. Ապահովագրվողի կողմից Արժեթղթերի կամ Նմանատիպ Գրավոր Գործիքների գործարքներ կատարելիս դրանց փաստացի ֆիզիկական տնօրինումը կամ ապահովագրվողի մասնակցությամբ վարկերի գծով ապահովագրվողի թղթակից բանկի կողմից Արժեթղթերի կամ Նմանատիպ Գրավոր Գործիքների փաստացի ֆիզիկական տնօրինումը պարտադիր պայման է սույն Հոդվածով հատուցում ստանալու համար: Վարկերի վերաբերյալ տվյալ ֆիզիկական տնօրինումը պետք է լինի շարունակական և ընդգրկի այն ժամանակահատվածը, երբ տվյալ Արժեթղթերի կամ Նմանատիպ Գրավոր Գործիքների գծով վնասները բացահայտվել են:

2. Այնպիսի Արժեթղթերը կամ Նմանատիպ Գրավոր Գործիքները, որպիսիք Ապահովագրվողը /կամ նրա թղթակից բանկը/ ապահովության համար պահպանում է այլ Բանկային Կազմակերպությունում կամ որևէ ճանաչված Դեպոզիտորիայում կամ որպիսիք գտնվում են Ապահովագրվողի /կամ նրա թղթակից բանկի/ տեղափոխող կամ գրանցման գործակալի իրավասության ներքո գործունեության ժամանակ փոխանակման, փոխակերպման, գրանցման կամ տեղափոխման նպատակով, համարվում են շարունակական ֆիզիկական տիրապետման մեջ:

3. Վերոհիշյալ Արժեթղթերը կամ Նմանատիպ Գրավոր Գործիքները պետք է լինեն գրավոր ձևով, որոնց բնույթին դրանց հետ առնչվող Աշխատակիցները պետք է քաջատեղյակ լինեն: Ապահովագրյալը պետք է հիմնված լինի Կեղծված Ստորագրությանը կամ Կեղծ Փոփոխմանը, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է կորուստի պատճառ հանդիսանա:

Հատուկ Սահմանումներ

"Արժեթղթեր կամ Նմանատիպ Գրավոր Գործիքներ" ինչպես կիրառվում է սույն Պոլիսում, ասելով հասկանում ենք միայն օրիգինալ գործիքները, որոնց բացատրությունները բերված են ստորև.

(a) Բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված Բաժնետիրական սերտիֆիկատները, ոչ-անվանական բաժնետոմսը, բաժնետոմսի սերտիֆիկատները, բաժանորդագրվելու իրավունքը կամ իրավասությունը, բաժնետոմսերի տրամադրման նամակները, մուրհակները կամ պարտքային պարտավորության մուրհակները, կամ

(b) Գործընկերությունների կողմից թողարկված այնպիսի կորպորատիվ մուրհակների տեսքով մուրհակները, որպիսիք ապահովված են գրավներով, տրաստային վկայագրերով կամ ապահովամիջոցի տրաստային համաձայնագրերով, կամ

(c) Պետական կամ Պետության կողմից երաշխավորված և Տեղական Իշխանությունների այնպիսի բաժնետոմսերը, պարտավորվածության սերտիֆիկատները, մուրհակները և իրավասությունները, որպիսիք թողարկվել են ցանկացած երկրի Կառավարության կամ դրա որևէ համապատասխան Գործակալությունների, Նահանգների, Շրջանների, Երկրների, Քաղաքների կողմից, կամ

(d) Տրաստային վկայագրերը, գրավներ՝ անշարժ գույքով և դրանցում ունեցած տոկոսներով և նման գրավների տրամադրումը, կամ

(e) Սովորական Մուրհակներ, բացառությամբ՝

(i) նրանցից, որոնք թողարկվել կամ պետք է, որ թողարկված լինեին որպես արտարժույթ կիրառվելու համար, կամ

(ii) նրանցից, որոնք ապահովվել կամ պետք է, որ ապահովված լինեին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրված հաշիվներով կամ այն հաշիվներով, որոնք ենթադրվում են տրամադրված:

(iii) այն դեպքերից, երբ վճարման ենթակա են և վճարված են Ապահովագրվողի կողմից, կամ

(f) Ապահովագրվողի համար Վարկի դիմաց որպես գրավ օգտագործվող Ավանդային Սերտիֆիկատները, բացառությամբ Ապահովագրվողի կողմից թողարկված Ավանդային Սերտիֆիկատների:

(g) Ակրեդիտիվներ

"Կեղծված", ինչպես օգտագործվում է սույնում, ասելով հասկանում ենք այնպիսի իսկական Արժեթղթերը կամ Նմանատիպ Գրավոր Գործիքները, որպիսիք բնութագրված են վերը և որոնց որակյալ կրկնօրինակումը թույլ է տալիս Ապահովագրվողին մտածելու, թե դրանք չկեղծված և օրիգինալ գործիքներ են: Շինծու գործիքները, որոնցում ներկայացված են սխալմամբ աղավաղված փաստեր, չեն համարվում "Կեղծված":

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 6

Կեղծված Արտարժույթ

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը առանց կասկածի, գործի բերումով ստացել է այնպիսի կեղծված թղթադրամ կամ մետաղադրամ, որպիսիք թողարկվել կամ պետք է, որ թողարկված լինեն որպես օրինական վճարային միջոց բոլոր արտարժույթներով:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 7

Գրասենյակներ և Պարունակություն

(a) Ապահովագրվողի Տարածքները կամ դրանց ներքին հարդարանքը վնասելու արդյունքում ծագած կորուստ, որի ուղղակի պատճառ է հանդիսացել Գողությունը, կամ այդ կատարելու փորձը, բարբարոսությունը, չարամտությունը կամ

(b) Ապահովագրվողիի Տարածքների Պարունակությանը վնասելու արդյունքում ծագած կորուստը, որի ուղղակի արդյունք է հանդիսացել Գողությունը, կամ այդ կատարելու փորձը, բարբարոսությունը կամ չարամտությունը:

Հատուկ Սահմանում

"Պարունակություն" ինչպես օգտագործվում է սույն Ապահովագրական Հոդվածում, ասելով հասկանում ենք այն կահույքը, սարքերը, սարքավորանքները, գրասենյակային պիտույքները, սեյֆերը, որոնք պատկանում են Ապահովագրվողին կամ, որոնց կորստի համար վերջինս պատասխանատու է,

սակայն, այն իր մեջ չի ներառում համակարգիչները, համակարգչային ծրագրերը, համակարգչային երիզները, սկավառակները և այլ միջոցներ, համակարգչային տվյալները, ինչպես նաև այլ համակարգչային կամ համակարգչի հետ առնչվող սարքավորանքներ:

Հատուկ Բացառություններ

1. Սույն Ապահովագրական Հոդվածը չի ծածկում այս կամ այն պատճառով ծագած հրդեհի արդյունքում առաջացած կորուստը

2. Սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածը ՉԻ ծածկում Ահաբեկչության ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստները կամ վնասները: Սակայն, դա չի նշանակում, որ սույն Հատուկ Բացառությունը նաև տարածվում է Գողության կամ նմանատիպ գործողության արդյունքում ծագած կորուստների կամ վնասների վրա: Սույն Պայմանագրով կորստի կամ վնասի դիմաց հատուցում ստանալու համար ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՅՑԻ կամ միջոցառման ժամանակ, լինի դա դատական գործ, թե այլ գործընթաց, Ապահովագրվողն ինքը պետք է ապացուցի, որ իր կրած վնասը կամ կորուստը սույն Հատուկ Բացառությանը չի պատկանում.

"Ընդհանուր Սահմանումները", "Ընդհանուր Բացառությունները" և "Ընդհանուր Պայմանները" կիրառելի են ողջ Պայմանագրի համար: Սույն Պոլիսում ի հայտ եկող ցանկացած "Հատուկ Սահմանումները", "Հատուկ Բացառությունները" և "Հատուկ Պայմանները" համարվում են դրանց լրացումները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Ինչպես կիրառվում է ողջ Պայմանագրի ընթացքում՝

1. **"Ապահովագրվող"** ասելով հասկանում ենք այն Ապահովագրվողին, ում անունը առաջինն է նշվում Պայմանագրին կից Ծրագրում և ցանկացած ամբողջությամբ սեփականաություն հանդիսացող ընկերություն, որը ընդգրկված է բանկային գործունեության մեջ, որոնք նշված են Հարցաթերթիկում կամ Պայմանագրին կից Ծրագրում: Այն իր մեջ չի ներառում՝

   (a) մասնակի սեփականաություն հանդիսացող բանկային կազմակերպություն, կամ

   (b) լրիվ կամ մասնակի սեփականաություն հանդիսացող ոչ բանկային կազմակերպություն, եթե միայն այն չնշվի Հարցաթերթիկում կամ Պայմանագրին կից Ծրագրում իր հիմնական գործունեության տեսակի և Ապահովագրվողի բաժնեմասի արտացոլմամբ:

2. **"Բանկային Ակցեպտ"** ասելով հասկանում ենք Մուրհակ, որով արտահայտվում է թողարկող բանկի համաձայնությունը՝ ընդունել ներկայացնող Բանկի պահանջը:

3. **"Բանկային Մուրհակ"** ասելով հասկանում ենք որևէ բանկի կողմից կամ նրա անունից թողարկված ցպահանջ վճարվող մուրհակ, որը ենթակա է վճարման Ապահովագրվողի Գլխամասային կամ այլ գրասենյակներում:

4. **"Մուրհակ"** ասելով հասկանում ենք գրավոր ոչ պայմանական հանձնարարագիր, որը հասցեագրված է մեկ անձից մյուսին, ստորագրված է տրամադրողի կողմից, պահանջում է ցպահանջ, նշված կամ որոշվելիք ժամկետում վճարել որոշակի գումար հասցեատիրոջը, նրա ներկայացուցչին կամ մուրհակը ներկայացնողին:

5. **"Ավանդային Սերտիֆիկատ"** ասելով հասկանում ենք բանկի կողմից գումարային ավանդի գրավոր ճանաչում, որը ենթադրում է ֆիքսված ժամանակահատվածում ավանդատուին կամ այլ անձին տոկոսագումարների վճարում:

6. **"Չեկ"** ասելով հասկանում ենք բանկի կողմից տրամադրված **Մուրհակ**, համաձայն որի ցպահանջ վճարվում է նշված գումարը:

7. **"Աշխատակից"** կամ **"Աշխատակիցներ"** ասելով հասկանում ենք

   (a) Ապահովագրվողի պաշտոնյաներին և այլ աշխատակիցներին, որոնք վարձատրվում են, և որոնց Ապահովագրվողը կառավարելու և ուղղորդելու իրավունք ունի (ներառյալ Ապահովագրվողի տնօրենին, որը ծառայում է որպես վարձատրվող պաշտոնյա կամ աշխատակից), Ապահովագրվողի Տարածքում կամ Տարածքից իրականացվող աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ,

   (b) Ապահովագրվողի որևէ տնօրենին, (բայց ոչ նրան, ով աշխատում է որպես վարձատրվող

պաշտոնյա կամ աշխատակից), բայց միայն Ապահովագրվողի Տնօրենների Խորհուրդի որոշմամբ աշխատակցի սովորական պարտականություններից բխող գործողությունները Ապահովագրվողի Տարածքում կամ Տարածքից իրականացնելու ժամանակ,

(c) Ապահովագրվողի Տարածքներից որևիցէ մեկում ուսումնասիրություններ կամ պարտականություններ իրականացնող հրավիրված ուսանողներին,
(d) Ապահովագրվողի համար Ապահովագրվողի ղեկավարության ներքո, Ապահովադրի տարածքում կամ դրանից դուրս աշխատողի պարտականություններ կատարելու նպատակով աշխատանքի տեղավորման գործակալության կողմից ուղարկված անձը.

(e) Ապահովագրվողի տարածքում գտնվելու համար Ապահովադրի կողմից հատուկ լիազորված կապալառուները.

(f) Ապահովագրվողի համար ժամանակավորապես ծառայություններ մատուցող անվտանգության աշխատակիցները և տեխնիկական սպասարկման կապալառուները.

8. **"Կեղծ Ստորագրություն"** ասելով հասկանում ենք չլիազորված և խաբեության մտադրությամբ ձեռագիր ստորագրություն կամ այլ անձի անվան բնորինակի լրացում: Այն իր մեջ չի ներառում լիազորված կամ չլիազորված անձի սեփական ստորագրությունը կամ անվան լրիվ կամ մասնակի լրացումը, անկախ պաշտոնից և նպատակից:

9. **"Կեղծ Փոփոխում"** ասելով հասկանում ենք գործիքը չպատրաստող անձի կողմից, հանցավոր նպատակներով տվյալ գործիքի նյութական փոփոխումը:

10. **"Ակրեդիտիվ"** ասելով հասկանում ենք հաճախորդի պահանջով, բանկի կողմից պատրաստված գրավոր փաստաթուղթ՝ ըստ որի Թողարկողը կատարում է մուրհակների կամ այլ վճարային պահանջների մարում համաձայն Ակրեդիտիվում նշված պայմանների:

11. **"Վարկ"** և **"Վարկեր"** ասելով հասկանում ենք

(a) որևէ վարկ, կամ նմանատիպ գործարք, վարկի երկարաձգում, ներառյալ Ապահովագրվողի հատկացված կամ Ապահովագրվողից վերցված վարձակալությունները,

(b) Ապահովագրվողին կամ Ապահովագրվողի կողմից հատկացված կամ վաճառված կամ այլ կերպ ձեռք բերված ցանկացած մուրհակ, հաշիվ, հաշիվ-ֆակտուրա, համաձայնագիր կամ այլ պարտքի նշան,
(c) Հաճախորդի հաշվից կատարված ցանկացած վճարումներ կամ գումարի ստացումներ, որոնք կատարվում են ի հաշիվ դեռ չստացված միջոցներին և այլ համանման գործարքներ:

12. **"Տարածքներ"** ասելով հասկանում ենք Ապահովագրվողի Գլխամասային գրասենյակը և Ապահովագրվողի կողմից զբաղեցված ցանկացած մշտական կամ ժամանակավոր գրասենյակը, որտեղ Ապահովագրվողը իրականոցնում է իր գործունեությունը և որոնք ներառված են Հարցաթերթիկում, այլ Բանկերի կամ լիազորված Դեպոզիտորիայի գրասենյակները, որտեղ պահպանվում է Սեփականություն, գրանցման կամ փոխանցման գործակալների գրասենյակները, որտեղ պահպանվում է Սեփականություն գործերի սովորական ընթացքի ժամանակ փոխանակման, փոխակերպման, գրանցման կամ վաճառքի/փոխանցման նպատակներով:

13. **"Սովորական Մուրհակ"** ասելով հասկանում ենք մեկ անձի կողմից մեկ այլ անձին տրված, տվողի կողմից ստորագրված ոչ պայմանական գրավոր խոստում, համաձայն որի, որոշակի անձին, նրա ներկայացուցչին կամ ներկայացնողին պահանջվում է վճարել որոշակի գումար ցպահանջ, նշված կամ որոշվելիք ժամկետում:

14. **"Սեփականություն"** ասելով հասկանում ենք միայն հետևյալ նյութական առարկաները՝ թղթադրամ, մետաղադրամ, ոսկու ձուլակտորներ, ցանկացած տեսակի և ձևի թանկարժեք մետաղներ, դրանցից պատրաստված զարդեր, թանկարժեք (ներառյալ չմշակվածները) և կիսա-թանկարժեք քարեր, ապահովագրական վկայագրեր, կնիքներ, ճանապարհային չեկեր, **Չեկեր**, բաժնետոմսերի սերտիֆիկատներ, մուրհակներ, կուպոններ և արժեթղթերի մնացած տեսակները, կոնոսամենտներ, պահեստային ստացականներ, տրաստային ստացականներ, **Մուրհակներ**, **Բանկային Ակցեպտ, Բանկային Մուրհակ, Ավանդային սերտիֆիկատ, Ակրեդիտիվ, Սովորական Մուրհակ,** դրամային փոխանցման հանձնարարագրեր, գանձապետարան դրամային փոխանցման հանձնարարագրեր, սեփականության վկայականներ, և ցանկացած այլ տեսակի անվանական և ըստ ներկայացնողի գործիքներ կամ դրամական կամ այլ սեփականության (անշարժ կամ անձնական) վերաբերյալ պայմանագրեր և այլ արժեքավոր փաստաթղթեր, ներառյալ հաշվեմատյաններ և գործունեության ընթացքում Ապահովագրվողի կողմից գործածվող այլ գրավոր հաշվետվություններ, որոնցով

Ապահովագրվողը ստանում է եկամուտ, կամ որոնք պահպանվում են Ապահովագրվողի կողմից ցանկացած նպատակների համար՝ անկախ այն փաստից, դրանք պահպանվում են անվճար, թե այլ հիմունքներով, և թե Ապահովագրվողը դրանց համար օրենքով սահմանված կերպով պատասխանատու է, թե ոչ: Սեփականություն ասելով չենք հասկանում էլեկտրոնային եղանակով գրանցված ցանկացած տեսակի տվյալներ կամ հաշիվների դեբետները ու կրեդիտները:

15. **"Ինկասացիոն Ընկերություն"** նշանակում է ընկերություն, որը պետական մարմի կողմից արտոնագրված է որպես արժեքավոր առարկաներ տեղափոխող ինկասացիոն ընկերություն:

16. **"Ահաբեկչություն"** նշանակում է ցանկացած անձի ցանկացած գործողություն, որը գործում է այնպիսի կազմակերպության անունից կամ գործակցությամբ, որի գործունեությունն ուղղված է որևէ պետական կարգի դե-յուրե կամ դե-ֆակտո տապալմանը կամ նրա վրա ուժով կամ բռնությամբ ներգործմանը, կամ բռնությունը քաղաքական նպատակներով կիրառելուն:

17. **"Գողություն"** նշանակում է կոտրանք, ավազակություն, հարձակում, և Սեփականության անազնիվ ֆիզիկական խլում և հեռացում՝ Ապահովագրվողին Սեփականությունից անվերադարձ զրկելու մտադրությամբ:

18. **"Առևտուր"** նշանակում է որևէ գործարքներ արժեթղթերով, մետաղներով, ապրանքներով, ֆյուչերսներով, օպցիոններով, դրամական միջոցներով, արժույթներով, արտարժույթով, և այլն:

19. **"Ստացական"** նշանակում է գրավոր ձև, որը Ապահովագրվողի կողմից տրամադրվում է հաշվետիրոջը՝ վերջինիս կողմից Ապահովագրվողի մոտ ունեցած դեպոզիտային հաշվից գումարների ստացումը հավաստելու նպատակով:

ԵԹԵ 1-19 ԿԵՏԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐՆ Ի ՀԱՅՏ ԳԱՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ, ԱՊԱ "ԻՆՉՊԵՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է" ԲԱՌԵՐԸ ԿՄԻԱՁՈՒԼՎԵՆ ՏԵՔՍՏԻՆ ՄԻԱՆԳԱՄԻՑ ՀԱՋՈՐԴԵԼՈՎ ՀԻՇՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻՆ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Պայմանագիրը իր մեջ չի ներառում.

1. Ցանկացած կորուստ, որը

   (a) տեղի է ունեցել նախքան սույն պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ ցանկացած կորուստ, որն իր մեջ ներառել է նախքան սույն պայմանագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած կամ սկսված գործողություններ, գործարքներ, իրադարձություններ, կամ
   (b) հայտնաբերվել է նախքան Պայմանագրի Ծրագրում նշված Պայմանագրի գործողության ժամկետի սկզբի ամսաթիվը, կամ
   (c) հայտնաբերվել է Պայմանագրի դադարումից հետո, կամ

   (d) տեղեկացվել է նախկին ապահովագրողին.

2. Ապահովագրվողի որևէ Տնօրենի կամ Տնօրենների ցանկացած գործողության կամ բացթողնման ուղղակի կամ անուղղակի հետևանքով ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքի, երբ կատարված գործողությունները բխում են Ապահովագրվողի աշխատակցի սովորական պարտականությունների շրջանակից և տարբերվում են Ապահովագրվողի անունից գործող Տնօրենի հիմնական կառավարական գործողություններից:
3. Որևէ աշխատակցի անազնիվ կամ հանցավոր գործողությունների ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքի, եթե նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1.-ի համաձայն:

4. Ցանկացած կորուստ, որի լրիվ կամ մասնակի արդյունք է հանդիսանում որևէ Վարկի լրիվ կամ մասնակի չմարումը, անկախ նրանից այն լիազորված է, թե ոչ, իրական է, թե շինծու, իրականցվել է վստահությամբ, մոլորեցմամբ թե խաբեությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, 4 կամ 5-ի համաձայն:

5. Ցանկացած կորուստ, որի լրիվ կամ մասնակի արդյունք է հանդիսանում այնպիսի վճարումները կամ ստացումները, որոնք իրենց մեջ ներառում են Ապահովագրվողի կողմից ստացված գործիքները, որոնք ինչ-ինչ պատճառներով, ինչպես նաև մոլորեցման, խաբեության կամ կեղծված լինելու պատճառով վերջնականապես վճարված չեն, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, կամ 5-ի համաձայն:

6. Ցանկացած կորուստ, որի արդյունք է հանդիսանում այնպիսի վճարումները կամ ստացումները, որոնք իրենց մեջ ներառում են այնպիսի գումարներ, որպիսիք սխալմամբ փոխանցվել, վճարվել, տրամադրվել են Ապահովագրվողին կամ Ապահովագրվողի կողմից, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:

7. Ցանկացած գործիքի կորուստը կամ վնասումը (Սեփականությունը ներառյալ), որոնք

   (a) գտնվել են հաճախորդի սեյֆում կամ ավանդային արկղերում, կամ

   (b) հաճախորդների անունից պահպանվում են Ապահովագրվողի ապահով տնօրինման տակ, բայց ոչ այն հայտնի արժեթղթերը, որոնք Ապահովագրվողը պահպանում է հիշյալ հաճախորդների համար, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը կամ վնասը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:

8. Որևէ մեկին մարմնական վնաս հասցնելու կամ Ապահովագրվողի սեփականությանը վնասելու սպառնանքով սեփականության հանձնման արդյունքում ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքերի, երբ

   (a) նման սպառնանքը իրականացվում է որևէ Աշխատակցի կողմից այլ Աշխատակցի համար ֆինանսական շահ ստանալու նպատակով և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն, կամ

   (b) սեփականության հանձնումը տեղի է ունենում Տարածքի ներսում, որի ուղղակի արդյունք է հանդիսանում Տարածքի ներսում գտնվող անձի՝ Տարածքում ներկա գտնվող որևէ ֆիզիկական անձին մարմնական վնաս հասցնելու սպառնանքը և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 2-ի համաձայն, կամ բացառությամբ վերոնշյալ (a) կետի, երբ ապահովագրված է Ապահովագրության հոդված 1-ով, կամ Ապահովագրության հոդված 12-ի ողջ սահմանաչափով՝ «Շորթում-սպառնալիքներ գույքի նկատմամբ», երբ այն հավելվածով կցվի այս պայմանագրին:

   (c) սեփականության հանձնումը տեղի է ունենում Տեղափոխման ընթացքում, որի ուղղակի արդյունք է հանդիսանում տեղափոխող անձին կամ անձանց մարմնական վնաս հասցնելու սպառնանքը, եթե տեղափոխման սկսման ժամանակ Ապահովագրվողը նման սպառնալիքի մասին որևէ պատկերացում չի ունեցել և նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 3-ի համաձայն:

9. Ցանկացած կեղծիքի ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, 4, 5 կամ 6-ի համաձայն:

10. Ճանապարհային չեկերի կամ ճանապարհային ակրեդիտիվների կեղծումից կամ փոփոխումից ծագած ցանկացած կորուստ, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:

11. Վաճառքի նպատակով Ապահովագրվողի տնօրինմանը հանձնված չվաճառված ճանապարհային չեկերի կորուստը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդվածներ No. 1, 2, 3-ի համաձայն և նաև, եթե հետագայում տվյալ չեկեր վճարվեն դրանց թողարկողի կողմից իսկ Ապահովագրվողը այդ կորուստի համար օրենքով սահմանված կարգով պատասխանատու լինի:

12. Որևէ կորուստ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագում է որևէ գործիքներից, որոնք հանդիսանում են հետևյալը կամ կամ ենթադրվում են այդպիսիք հանդիսացող՝ կոնոսամենտներ, բեռնառաքման փաստաթղթեր, պահեստի ստացականներ, տրաստային ստացականներ, դեբիտորական պարտքի մուրհակներ, կամ ցանկացած այլ մուրհակներ, փաստաթղթեր, կամ ստացականներ, որոնք նման բնույթի են կամ ծառայում են միևնույն նպատակի, բացառությամբ այն չափի, որքանով նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված N.1-ով, կամ բացառությամբ որևէ նման գործիքի ֆիզիկական կորստի՝ այն չափի, որքանով նման ֆիզիկական կորուստը ծածկված է Ապահովագրական Հոդված N.2 կամ 3-ով:

13. Որևէ կորուստ, որը ծագում է որևէ վարկային, դեբետային, վճարային, մուտքի, հանրային, անձը հաստատող կամ այլ քարտերի կիրառումից կամ ենթադրվող կիրառումից՝ լինեն դրանք թողարկված Ապահովագրվողի, թե որևէ այլ անձի կողմից թողարկված, բացառությամբ այն չափի, որքանով նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված N.1-ով:

14. Շահույթի կամ եկամուտի ցանկացած կորուստ կամ աղավաղում, ներառյալ տոկոսների, շահաբաժինների, վճարների, կոմիսիոնների և այլնի կորուստը և աղավաղումը:

15. Ֆինանսական կամ դեպոզիտորիական կազմակերպության (նաև դրա ստացողը կամ լուծարողը) ձախողման ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը

    (a) վճարելու, վերադարձնելու կամ տրամադրելու ցանկացած ծավալներով իր կողմից պահվող գումարները կամ սեփականությունը, կամ

    (b) Ապահովագրվողին հատուցել ցանկացած կորուստի դիմաց, որոնց համար պատասխանատու են Ֆինանսական կամ դեպոզիտորիական կազմակերպությունը կամ դրա աշխատակիցները, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն:

16. Այնպիսի վնասներ (լինի դա տույժեր, տուգանքներ, պատժիչ, օրինակելի թե այլ), որոնց համար Ապահովագրվողը օրենքով սահմանված կարգով է պատասխանատվություն կրում, բայց ոչ ուղղակի հատուցվող վնասները, որոնք շնորհվում են երրորդ կողմին, գումարների կամ սեփականության դիմաց վերջինիս հատուցելու համար, որոնք փաստացի կորած են և իրենցից ներկայացնում են սույն Պայմանագրով ծածկված ուղղակի ֆինանսական կորուստ:

17. Ցանկացած տեսակի անուղղակի կորուստներ.

18. Վճարներ և այլ ծախսեր, որոնք կատարվում են Ապահովագրվողի կողմից ապացուցելու կամ ապացուցել փորձելու համար, որ տվյալ կորուստը կամ կորած գումարը ծածկվում է սույն Պայմանագրով:

19. Հայցը պաշտպանելու ժամանակ Ապահովագրվողի կողմից կատարված վճարներ և այլ ծախսեր, բացի իրավաբանական վճարներից և իրավաբանական ծախսերից, քանի որ դրանք փոխհատուցվում են, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 1-ում:

20. Առևտրի ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած ցանկացած կորուստ բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1, 4, և 5-ի համաձայն:

21. Ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը մաշվածության, աստիճանաբար վատացման, ցեցերի կամ այլ վնասատուների պատճառով:

22. Ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը, որի ուղղակի պատճառ է հանդիսանում տայֆունը, փոթորիկը, ցիկլոնը, հրաբխային ժայթքումը, երկրաշարժը, ստորգետնյա հրդեհը կամ այլ բնական ցնցումներ, ինչպես նաև հրդեհը, ջրհեղեղը և դիակապտություն:

23. Պատերազմի, հարձակման, թշնամության կամ պատերազմանման գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի արդյունքում պատճառված կորուստը կամ վնասը: Ցանկացած դատական գործի ժամանակ այս Պայմանագրի սահմաններում Ապահովագրվողն ինքը պետք է ապացուցի, որ իր կրած վնասը կամ կորուստը այս բացառությունների թվին չի պատկանում:

24. Հետևյալ ուղղակի կամ անուղղակի պատճառներից ի հայտ եկած ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը կամ դրանցից առաջ եկած ծախսերը՝

    (a) իոնային ճառագայթումներ, կամ ցանկացած միջուկային վառելիքի ռադիոակտիվության պատճառած աղտոտումից կամ միջուկային վառելիքի այրումից առաջ եկած միջուկային թափոնից, կամ

    (b) Ցանկացած պայթուցիկ միջուկային նյութերի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր տարրերից կամ էլ դրանց միջուկային բաղադրիչներից:

25. Էլեկտրոնային տվյալների ներդրման, ձևափոխման կամ ոչնչացման արդյունքում պատճառված կորուստը, ներառյալ ծրագրերը, բացառությամբ այն դեպքի, երբ նման կորուստը ծածկվում է Ապահովագրական Հոդված No. 1-ի համաձայն

26. Որևէ կորուստ, որը ծագում է Ապահովագրվողին ուղարկված և նրա կողմից ստացված, կամ

Ապահովագրվողի կողմից իր համակարգչային համակարգեր կամ որևէ հեռատիպային տերմինալ, կամ հեռատպիչ, տեսատերմինալ, և այլն ներմուծված հրահանգներից կամ հաղորդագրություններից, բացառությամբ այն չափի, որով նման կորուստը ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:

27. Որևէ կորուստ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագում է այն պատճառով, որ Ապահովագրվողը պատրաստել է (կամ չի կարողացել պատրաստել) որևէ փաստաթուղթ, որը հանդիսանում էր կամ պետք է որ հանդիսանար պոլիս, պայմանագիր կամ պայմանավորվածություն՝ ապահովագրության, վերաապահովագրության, կամ որևէ պարտավորության վերաբերյալ, որում Ապահովագրվողը հանդես է գալիս որպես գործակալ կամ գլխավոր կողմ՝ որևէ տեսակի ապահովագրության կամ վերաապահովագրության առնչությամբ, ներառյալ կնքելը (կամ չկնքել չկարողանալը) որևէ փաստաթուղթ, որը հանդիսանում էր կամ պետք է որ հանդիսանար պոլիս, սերտիֆիկատ, կովերնոտա, պայմանագիր կամ պայմանավորվածություն ապահովագրության կամ վերաապահովագրության պոլիսի վերաբերյալ, անհնարին կամ ինդոսամենտ, կամ պայմանագիր, կամ համաձայնագիր՝ ապահովագրության, վերաապահովագրության, կամ երաշխավորության վերաբերյալ, սակայն ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ, որ սույն Ընդհանուր Բացառությունը չի վերաբերվի պարգևի գումարների կամ հայցերի դիմաց վճարումներից հասույթի կորստին, երբ նման կորստի անմիջական պատճառը նման գումարների յուրացումն է աշխատակցի կողմից, երբ դա ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:

28. Այն Սեփականության որևէ կորուստ, որը գտնվելիս է եղել որևէ պետական փոստային ծառայության խնամատարության տակ, բացառությամբ երբ այն ծածկված է Ապահովագրական Հոդված N.1-ով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Ապահովագրողը կհատուցի Ապահովագրվողին նրա կողմից կատարած խելամիտ վճարները կամ ծախսերը, որոնք նախապես համաձայնեցվում են Ապահովագրողի հետ, Ապահովագրվողի դեմ սկսված դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար, համաձայն որի Ապահովագրվողը հաստատում է, որ տեղի ունեցած գործողությունը կամ գործողությունները, իրադարձությունը կամ իրադարձությունները նրան սույն Պայմանագրով հատուցում ստանալու իրավունք կտան: Դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար Ապահովագրողի կողմից կատարված իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ենթարկվում են Ընդհանուր Պայման 8-ին Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցմանը:

Ապահովագրվողը պետք է Ապահովագրողներին տրամադրի վերոհիշյալ դատական գործի կամ դատական այլ գործընթացի սկսող կազմակերպության ծանուցագիրը և Ապահովագրողի պահանջով նրան ներկայացնի բոլոր դիմումների պատճենները և դրանց հետ առնչվող այլ փաստաթղթերը:

Եթե դատական գործի կամ դատական այլ գործընթացի ընթացքում գործողության բազմաթիվ պատճառներ են կասկածի տեղիք տալիս և օգտագործվում են Ապահովագրվողի դեմ, ապա սույն Պայմանգրով դրանք հավաքական կորուստ չեն համարվում: Այն իր մեջ ներառում է պատժիչ, հետևանք հանդիսացող կամ այլ չհատուցվող վնասները: Ապահովագրվողն իր սեփական միջոցներով պետք է կատարի նման գործողության կասկածելի պատճառների պաշտպանության համար գանձվող իրավական վճարները և իրավական ծախսերը:

Եթե Ապահովագրվողի կրած կորստի գումարի չափը գերազանցում է սույն Պայմանագրով հատուցվող գումարի չափին, կամ եթե կարելի է կիրառել Ֆրանշիզա, ուրեմն համաձայն Ընդհանուր Պայմանների առաջին բաժնի Ապահովագրողի պարտավորությունները սահմանափակվում են Ապահովագրվողի կողմից կատարված իրավական վճարների կամ իրավական ծախսերի համաձայն կամ Ապահովագրողի կողմից, ըստ որի սույն Պայմանագրով հատուցվող գումարը հավասարազոր է այդ գումարի չափին՝ գումարած չհատուցվող գումարը: Նման կերպ բաշխված գումարը կիրառվում է Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցման համար:

Ապահովագրողը իրավասու չէ ապահովագրելու Ապահովագրվողին իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի դիմաց նախքան դատական գործի կամ այլ դատական գործընթացի ավարտը:

Ապահովագրողը պարտավորված չէ իրականացնել սույն Ընդհանուր Պայմանի առաջին բաժնում նշված այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը: Ապահովագրողի ընտրության ժամանակ Ապահովագրվողը թույլ է տալիս նրանց իր անունից կատարելու այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը՝ Ապահովագրողի կողմից ներկայացվող իրավական ներկայացուցիչի միջոցով: Ապահովագրվողը Ապահովագրողին պետք է տրամադրի դատական գործընթացի պաշտպանության համար անհրաժեշտ ինֆորմացիա:

Դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանության համար Ապահովագրյալի կողմից վճարվող իրավական վճարները կամ իրավական ծախսերը կիրառվում են Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցման համար:

Եթե Ապահովագրվողը նախընտրում է, որ իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը կատարի Ապահովագրողը նման իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի իրենց համամասնական չափը գերազանցելով, ապա Ապահովագրվողը պետք է հատուցի ավելացած գումարը:

Ապահովագրվողը չպետք է հրաժարվի Ապահովագրողի կողմից իրականացված դատական գործի կամ այլ դատական գործընթացի կարգավորումից:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

(a) Լուծարում և այլն

Ապահովագրվողի ինքնակամ կամ հարկադրական լուծարման, Իրավահաջորդի կամ Կառավարչի նշանակման, կամ որևէ Լուծարային Գործընթաց կամ պարտատերերի հետ համաձայնություն սկսելու դեպքում, կամ եթե Ապահովագրվողի նկատմամբ վերահսկողությունը ստանձնվի որևէ Կառավարության կամ Կառավարական մարմնի կամ գերատեսչության կողմից, սույն Պայմանագիրն անմիջապես կդադարի որևէ ծածկույթ ապահովել որևէ տեսակի կորստի համար, որը համապատասխանաբար հայտնաբերվել և ծանուցվել է Ապահովագրողին:

Ինչպես վերևում է նշված, Հարցաթերթիկում կամ Ծրագրում նշված Ապահովագրվողի դուստր-ձեռնարկության լուծարման և այլնի դեպքում, այս Պայմանագիրը միանգամից կդադարի հետագայում հայտնաբերված և Ապահովագրողի ուշադրությանը ներկայացվող վերոհիշյալ կազմակերպության հետ որևէ կերպ առնչվող ցանկացած տեսակի կորստի ապահովագրումը:

(b) Ակտիվների Փոխանակում կամ Բաժնետոմսերի Սեփականություն

Ապահովագրվողը պետք է միանգամից ծանուցի Ապահովագրողին այլ բիզնեսի հետ միաձուլման կամ համախմբման, գնման, փոխանցման, գրավի, ակտիվների կամ բաժնետոմսերի այն վաճառքի մասին, որոնք սեփականության կամ վերահսկման մեջ փոփոխության պատճառ կարող են դառնալ: Ինչպես կիրառվում է այս Ընդհանուր Պայմանի մեջ, վերահսկում նշանակում է քվեարկող բաժնետոմսերի սեփականությամբ Ապահովագրվողի ղեկավարությունը կամ քաղաքականությունը որոշելու լիազորությունը: Քվեարկող բաժնետոմսերի սեփականության մեջ առկա որևէ փոփոխություն, որը բաժնետիրոջը կամ բաժնետերերի փոխկապակցված խմբին այս բաժնետոմսերի տաս (10%) կամ ավել տոկոսի ուղղակի կամ անուղղակի սեփականատեր է դարձնում, կարելի է պահանջված ծանուցման իմաստով վերահսկման փոփոխություն համարել:

Որպես սույն Պայմանագրի շարունակության պայման, Ապահովագրվողը պետք է

(i) տվյալ օրվանից հաշված երեսուն օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր, և

(ii) ապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և

(iii) ձեռք բերի Ապահովագրողիի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված որոշ կամ բոլոր ծածկույթները շարունակելու համար, և

(iv) 10 (տաս) օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր Ապահովագրողի կողմից ներկայացվող նման փոփոխության համար պահանջների պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, և

(v) վճարի Ապահովագրողին որևէ հավելավճար:
Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (i) –ի, կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (iv)–ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:

Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Անդերրայթերներին չէր լինի լիարժեք, եթե չգրվեր Ապահովագրյալի կողմից և չճանաչվեր Ապահովագրողի կողմից:

3. ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ՀԱՄԱԽՄԲՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԲԻԶՆԵՍԻ ԳՆՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼ ԲԻԶՆԵՍԻՆ ՄԻԱՁՈՒԼՈՒՄԸ

Ապահովագրվողը Պայմանագրի գործողության ժամկետում ստեղծի նոր մասնաճյուղային գրասենյակներ, բայց ոչ համախմբմամբ, գնի կամ այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա նման մասնաճյուղային գրասենյակները ավտոմատ կերպով անմիջապես կապահովագրվի դրանց հաստատման օրվանից առանց Ապահովագրողին ներկայացվելիք ծանուցման կամ Պայմանագրի գործողության ժամկետի մնացորդի համար հավելյալ վճարի:

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը Պայմանագրի գործողության ժամկետում միանա կամ համախմբվի, գնի կամ այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա սույն Պայմանագրով կորուստը չի ապահովագրվի հետևյալ դեպքերում՝

(a) եթե, դա պատահել է, կամ կարող է հետագայում պատահել ցանկացած գրասենյակում կամ շենքում, կամ

(b) եթե դա պատահել կամ կարող է պատահել նման բիզնեսի տնօրենի կամ աշխատակցի պատճառով, կամ

(c) եթե ծագել է կամ կարող է ծագել Ապահովագրվողի կողմից միաձուլման, համախմբման կամ գնման արդյունքում ձեռք բերված ակտիվներից, պարտավորություններից կամ նման այլ երևույթներից, եթե միայն Ապահովագրվողը

(i) նախքան ուժի մեջ մտնելը Ապահովագրողին չներկայացնի նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման վերաբերյալ գրավոր ծանուցագիր, և

(ii) չապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և

(iii) ձեռք չբերի Ապահովագրողի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված նման միաձուլման, համխմբման, գնման կամ ձեռք բերման ծածկույթը երկարաձգելու համար, և

(iv) Ապահովագրողին չներկայացնի գրավոր ծանուցում ծածկույթի պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, որը միանգամայն տրամաբանական է նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման համար, և

(v) չվճարի Ապահովագրողին որևէ հավելավճար:

Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (i) –ի կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (iv) –ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:

Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Ապահովագրողին չի լինի լիարժեք, եթե չգրվի Ապահովագրվողի կողմից և չճանաչվի Ապահովագրողի կողմից:

4. ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պայմանագրի գործողությունը կդադարի անկախ չվաստակած պարգևի վճարվելուց կամ չվճարվելուց,

(a) հենց որ՝

(i) կատարվի Ապահովագրվողի ունեցած վերահսկողության մեջ փոփոխություն հարուցող դեպք՝ ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2(a)-ում,

(ii) Ապահովագրվողը չտեղեկացնի ակտիվների կամ բաժնետիրական սեփականության փոփոխության մասին, կամ որևէ այլ կերպ խախտի Ընդհանուր Պայման No. 2(b)-ում նշված պայմանները,

(iii) Ապահովագրողը հրաժարվի ապահովագրությունը շարունակելուց՝ սեփականատերերների կամ վերահսկողության փոփոխությունից հետո, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2(b)-ում,

(b) անմիջապես՝ Ապահովագրվողի ցանկացած դուստր-ձեռնարկության նկատմամբ, եթե վերջինիս հետ կատարվի նրա վերահսկողության կամ սեփականատերերների փոփոխություն, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 2-ում:

(c) Ապահովադրի Տնօրենին կամ Աշխատակցին անմիջապես առնչվող, Ապահովադրի՝ վերը նշված անձանց հետ գաղտնի պայմանավորվածություն չունեցող Տնօրենի կամ ղեկավարի կողմից նշված անձանց կողմից

երբևէ կատարած որևէ անազնիվ կամ խարդախ գործողության մասին առաջին անգամ տեղեկանալուն պես՝ անկախ այն բանից այդ գործողության տեսակը փոխհատուցվում է սույն պայմանագրի 1-ին հոդվածով թե ոչ, սակայն ամեն դեպքում չնվազեցնելով Ապահովադրի Տնօրենի կամ ղեկավարի կողմից նման անազնիվ կամ խարդախ արարքի մասին տեղեկանալու պահին տվյալ անձի վերահսկողության տակ տեղափոխվող Գույքի կորստի նշանակությունը:

(d) Սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին Ապահովագրողի ծանուցումը Ապահովագրվողի կողմից ստացվելուց երեսուն (30) օր հետո: Եթե ուղարկված է նախավճարված, պատվիրված փոստով և հասցեագրված Ապահովագրվողի Գլխամասի Հասցեին՝ համաձայն Օրագրում նշվածի, ապա նման ծանուցումը կհամարվի ստացված՝ ուղարկվելուն պես:

(e) անմիջապես՝ սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին իր որոշման մասին Ապահովագրվողի ծանուցումը Ապահովագրողի կողմից ստացվելուն պես:

(f) անմիջապես՝ Օրագրի Կետ 4-ում նշված ժամկետի լրացման ամսաթվին:

Ապահովագրողը կփոխհատուցի որևէ չվաստակված պարգև, որը կհաշվարկվի Տարեկան Պարգևի կարճաժամկետ տոկոսադրույքով, եթե գործողության դադարեցումը տեղի ունենա ըստ սույն Ընդհանուր Պայմանի (a) կամ (d) պարբերության, սակայն համամասն Տարեկան Պարգևին, եթե դադարեցվի Ապահովագրողի կողմից՝ ըստ սույն Ընդհանուր Պայմանի (c) պարբերության:

Ապահովագրողը կփոխհատուցի որևէ չվաստակված պարգև, որը կհաշվարկվի Տարեկան Պարգևի կարճաժամկետ տոկոսադրույքով, եթե գործողության դադարեցումը տեղի ունենա ըստ սույն Ընդհանուր Պայմանի (a) կամ (d) պարբերության, սակայն համամասն Տարեկան Պարգևին, եթե դադարեցվի Ապահովագրողի կողմից՝ ըստ սույն Ընդհանուր Պայմանի (c) պարբերության:

5. ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՈՒՆ ԿԱՄ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ընդունված է, որ այն կորուստի դեպքում, որը ծածկվում է նաև այլ ապահովագրությամբ կամ փոխհատուցվում է, սույն Պայմանագիրը, վճարում է միայն այլ ապահովագրության կամ փոխհատուցման կողմից ծածկված գումարները գերազանցող հայցերը (չգերազանցելով Համընդհանուր Սահմանաչափը կամ այլ կիրառվող Ենթա-Սահմանները): Որպես հավելյալ ապահովագրում սույն Պայմանագիրը չի կատարում որևէ կորուստի վճարում, միչև որ այլ ապահովագրման գումարը չսպառվի:

6. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԸ

(a) Ապահովագրողի ամբողջական պարտավորությունը սույն Պայմանագրի Օրագրի 4 կետում նշված Պայմանագրի գործողության Ժամկետում հայտնաբերված կորուստի կամ կորուստների համար, իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ներառյալ, սահմանափակվում է սույն Պայմանագրի Օրագրի 6 կետում նշված Համընդհանուր Սահմանաչափով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից: Ցանկացած գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահման համարվում է Համընդհանուր Սահմանաչափի մաս, այլ ոչ թե լրացում, իսկ բոլոր տեսակի կորուստների, ինչպես նաև իրավական վճարների կամ իրավական ծախսերի հանդեպ ունեցած Ապահովագրողի ընդհանուր պարտավորությունները, որոնք վերաբերվում են ցանկացած նմանատիպ Ենթա-Սահման ունեցող Ապահովագրական Հոդվածին, սահմանափակվում են Ենթա-Սահմանի գումարով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից:

Համընդհանուր Սահմանաչափը նվազում է սույն Պայմանագրի համաձայն վճարված գումարներր չափով: Նման վճարումների արդյունքում սպառված Համընդհանուր Սահմանաչափի հետևանքով Ապահովագրողը այլևս պատասխանատու չի լինի

(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն հատուցել Ապահովագրվողին կորուստի կամ կորուստների դիմաց, և

(ii) հատուցել Ապահովագրվողին իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի դիմաց, և

(iii) շարունակել Ապահովագրվողի պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրողը դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:

(b) Ի լրումն նվազեցված Համընդհանուր Սահմանաչափին, Ծրագրի 6 կետում նշված գործող Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների Ենթա-Սահմանը կնվազի վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի հետ առնչվող վճարման գումարի չափով: Նման վճարումների արդյունքում վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահմանի սպառման պատճառով Ապահովագրողը այլևս պատասխանատվություն չի ունենա:

(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն Ապահովագրողին հատուցել կորուստը կամ կորուստները, և

(ii) հատուցել Ապահովագրողին իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը, որ կատարվել են կապված վերոհիշյալ կորուստի (կորուստների), կամ վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի (Հոդվածների) հետ:

(iii) շարունակել Ապահովագրվողի պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրող դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:

Եթե սույն Պայմանագրին համաձայն կատարված վճարումների պատճառով Համընդհանուր Սահմանաչափը սույն Պայմանագրի Ծրագրի 6 կետում ցանկացած Ենթա-Սահմանի համար նշված գումարի չափից էլ է պակասում, ապա ցանկացած Ենթա-Սահմանի գումարը համապատասխանաբար կնվազի, այնպես, որ կորուստի /կորուստների/, ինչպես նաև իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի համար անհրաժեշտ ցանկացած Ենթա-Սահմանի գումարը չի գերազանցի Համընդհանուր Սահմանաչափի պակասեցված գումարի չափը:

Համընդհանուր Սահմանաչափը և որևէ Ենթա-Սահման լիովին կամ մասնակի չեն վերականգնվի սույն Պայմանագրի համաձայն կատարված վճարմանը հաջորդող փոխհատուցմամբ, եթե միայն նման փոխհատուցումը փաստացիորեն չստացվի Ապահովագրողի կողմից Ծրագրի 4 կետում նշված ժամանակահատվածում կամ էլ դրան հաջորդող տասներկու /12 / օրացուցային ամիսների ընթացքում:

Եթե կորուստը ենթակա է հատուցման մեկից ավելի Ապահովագրական Հոդվածներով, ապա կորստին համապատասխան վճարվելիք առավելագույն գումարը չի գերազանցի ամենամեծ գումար ունեցող Ապահովագրական Հոդվածի չափին:

(c) Կորած Արժեթղթեր: Այն դեպքում, երբ արժեթղթի կորուստը փոխարինվում է կորած արժեթղթերի մուրհակի գործածմամբ կամ Ընդհանուր Պայման 14 կետի հատուցման համաձայնագրով, նման կորուստը չի նվազեցնի Համընդհանուր Սահմանաչափը կամ որևէ Ենթա-սահման, որոնք պահպանվում են կորուստի կամ կորուստների վճարման համար, եթե Պայմանագրի գործողության ժամկետում Ապահովագրողին չեն դիմում վճարում կատարել համաձայն կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման
պայմանագրի: Այնուամենայնիվ, նման կորստի համար կամ կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագի համաձայն Ապահովագրողի կատարած վճարումը կդիտվի որպես սույն Պայմանագրով կատարված վճարում:

Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը չի ազդի Ապահովագրողի պարտավորությունների վրա՝ կապված կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագրի հետ, որոնք թողարկվել են նախքան Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը:

7. ԿՈՐՈՒՍՏԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Որպես սույն Պայմանագրով հատուցելու պայման, Ապահովագրվողը պետք է կորուստի հայտնաբերումից հետո, 30 օրերի ընթացքում, դրա մասին տեղյակ պահի Ապահովագրողին:
Համաձայն սույն Պայմանագրի, կորուստը համարվում է հայտնաբերված այն ժամանակ, երբ Ապահովագրվողը առաջին անգամ տեղեկացվում է այն փաստերի մասին, որոնք կարող են խելամիտ անձին ստիպել մտածելու, որ այս Պայմանագրով ապահովագրված այս կամ այն տեսակի կորուստը արդեն պատահել կամ դեռ պատահելու է՝ հաշվի չառնելով, թե դրան հանգեցնող գործողությունները, գործարքները կամ իրադարձությունները երբ են տեղի ունեցել, ինչպես նաև հաշվի չառնելով այն, թե արդյոք Ապահովագրվողի այդ պահի տեղեկացվածությունը բավարար է ապացուցելու համար, որ նման տեսակի կորուստը համապատասխանում է սույն Պայամանագրի պայմաններին, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:

Կորուստը նաև համարվում է հայտնաբերված, երբ Ապահովագրվողը ստանում է փաստացի կամ պոտենցիալ հայցի ծանուցագիր, որում ենթադրվում է, որ նա պատասխանատվություն է կրում ինչ-որ երրորդ կողմի հանդեպ, որը, ճշմարտացի լինելու դեպքում, կարող է սույն Պայմանագրով ապահովագրված կորուստ համարվել, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:

Ապահովագրվողի կողմից հայտնաբերված բոլոր տեսակի կորուստները, որոնք հանդիսանում են մեկ անձի անուշադրության արդյունք կամ, եթե տվյալ անձը ներգրավված է այդ կորուստի մեջ անկախ նրա Աշխատակից լինել կամ չլինելուց, կհամարվեն որպես մեկ կորուստ:

8. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որպես սույն Պայմանագրով ապահովագրվելու նախապայման, Ապահովագրվողը պետք է Պայմանագրում նշված կորուստներին վերաբերող բոլոր հարցերով համագործակցի Ապահովագրողի և նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների հետ: Ապահովագրվողը Ապահովագրողի պահանջով, նշված ժամին ու վայրում պետք է ապահովի գործի հետ առնչվող բոլոր հաշվետվությունները (իր հաշիվների աուդիտորական հաշվետվությունները ներառյալ) , իր Աշխատակիցներից մեկին կամ այլ անձանց պատրաստի հարցազրույցի: Ապահովագրվողը համաձայն է կազմել բոլոր փաստաթղթերը, աջակցել բոլոր իրավունքների, շահերի և հիմքերի պաշտպանությանը, որպիսիք նա կարող է ունենալ անձի կամ կազմակերպության հանդեպ՝ կապված նշված կորուստների հետ, և չիրականացնել ոչինչ, որը կվնասի տվյալ իրավունքներին և հիմքերին:

9. ԿՈՐՈՒՍՏԻ ԱՊԱՑՈՒՅՑ

Կորուստի հայտնաբերումից հետո վեց ամիսների ընթացքում, Ապահովագրվողը պետք է Ապահովագրողին գրավոր ներկայացնի կորուստի ապացույց, որը պատշաճ կերպով կազմում է Ապահովագրվողի գլխավոր ֆինանսական պաշտոնյան՝ բոլոր տվյալների հետ մեկտեղ:

Ապացույցի որոնման պատասխանատվությունը ընկնում է Ապահովագրվողի վրա հետևյալ կորուստների համար

(a) կորուստ, որի համար հայց է ներկայացվել համաձայն Ապահովագրական Հոդված 1-ի, նման կորուստի համար պատասխանատու անձին հայտնեբերելու, պարզելու համար այն անազնիվ և հանցավոր գործողությունները, որոնք նմանատիպ կորուստի պատճառ են հանդիսացել, հայտնաբերելու համար վարկային կամ առևտրային գործարքների արդյունքում ձեռք բերած չվաստակած անձնական ֆինանսական շահը, ինչպես նաև ապացուցելու համար, որ նման կորուստի պատճառ են հանդիսացել այդ անազնիվ և հանցավոր գործողությունները, կամ

(b) կորուստ, որի համար հայց է ներկայացվել համաձայն Ապահովագրական Հոդված 4 և 5-ի, որն իր մեջ ներառում է որևէ իր, որն ունի Կեղծ Ստորագրություն, Կեղծ Փոփոխում կամ պարզապես Կեղծված է, ապացուցելու համար, որ եթե դրանք լինեին իսկական, չունենային Կեղծ Ստորագրություն, Կեղծ Փոփոխում կամ պարզապես Կեղծված չլինեին, ապա Ապահովագրվողը կրած չէր լինի այն կորուստը, որի համար հայց էր ներկայացված, կամ

(c) որևէ Ապահովագրական Հոդվածի համաձայն ներկայացված կորուստի հայց ապացուցելու համար, որ նման կորուստի ուղղակի պատճառ է հանդիսացել ապահովագրված ռիսկը, այլ ոչ թե տնտեսական պայմանները կամ այլ պատճառներ:

10. ԿՈՐՈՒՍՏԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Եթե Ապահովագրողը ստուգումն ավարտելուց հետո Ապահովագրվողին չի վճարում այն կորուստի դիմաց, որը վերջինիս կարծիքով պետք է հատուցվեր սույն Պայմանագրի պայմանների և այլ դրույթների համաձայն, ապա Ապահովագրվողի պահանջով Ապահովագրողը կարող է ենթարկվել ցանկացած իրավասու հայկական դատարանի որոշմանը:

Ցանկացած նմանատիպ դատական գործընթացների դատական ծանուցում կատարվում է Օրագրում նշված անձանց միջոցով, ովքեր օրենքով սահմանված կարգով իրավասու են Ապահովագրողի անունից ընդունելու դատական ծանուցումը: Ապահովագրողներ դեմ սկսված նմանատիպ դատական գործընթացների ժամանակ, մյուս Ապահովագրողները ստիպված կլինեն հաշտվել Դատարանի վերջնական որոշման, իսկ

բողոքարկման դեպքում՝ Վճռաբեկ Դատարանի վերջնական որոշման հետ:

Եթե Ապահովագրվողը երեք ամիսների ընթացքում չներկայացնի կորուստի ապացույցը, ինչպես նշված է Ընդհանուր Պայման 9-ում, ապա կորուստի հատուցման դատական գործընթացները համաձայն սույնի չեն սկսվի: Դատական գործընթացը չի սկսվի նաև նման կորուստի հայտնաբերումից հետո երկու տարին լրանալու դեպքում:

Եթե վերոհիշյալ երկու տարիների սահմանափակման ժամանակահատվածը արգելված է սույն Պայմանագրի կազմումը ղեկավարող օրենքով, ապա նման սահմանափակումը ենթարկվում է փոփոխման, այնպես որ համապատասխանի տվյալ օրենքով թույլատրվող նվազագույն ժամանակահատվածին:

11. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Սույն Պայմանագրի դրույթների, բացառությունների, սահմանափակումների և պայմանների ձևակերպումն ու մեկնաբանությունը որոշվում է ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համաձայն սույն Պայմանագրում առկա անգլերեն և հայերեն տեքստի:

12. ԲԱՑԱՌԻԿ ՊՈԼԻՍԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայնեցվում է, որ սույնով տրամադրվող Ապահովագրությունը կլինի բացառապես սույնում առաջինը նշված Ապահովագրվողի օգտին, և որևէ դեպքում որևէ մեկը, բացի հիշյալ Ապահովագրվողից, չի ունենա սույն Պայմանագրի շրջանակներում գործելու որևէ իրավունք:

13. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

(a) Որևէ կորստի դիմաց սույն Պայմանագրի համաձայն վճարվելիք գումարը որոշելիս, ցանկացած տվյալ կորստի պատճառը հանդիսացած աղբյուրին առնչվողից ստացված ամբողջ գումարը, ներառյալ մայր գումարի, տոկոսների, շահաբաժինների, կոմիսիոն վճարների, և այլնի վճարումը կամ ստացումը, երբ էլ ստացված լինի, պետք է նվազեցվի փաստացի վճարված, կանխավճարված, վերցված կամ այլ կերպ կորսված գումարից: Ցանկացած աղբյուրից ստացված այն գույքի արժեքը, որը ստացվել է տվյալ կորստի պատճառը հանդիսացած որևէ խնդրի առնչությամբ, երբ էլ ստացված լինի, պետք է նմանապես նվազեցվի Ապահովագրվողի կողմից հայցվող կորստից:

(b) Այն կորստի համար, որի վերաբերյալ հայց է ներկայացվելու, որևէ արժեթղթերի, օտարերկրյա դրամական միջոցների, արժույթների կամ թանկարժեք մետաղների արժեքը կորոշվի կորստի հայտնաբերմանը նախորդող օրվա փակման շուկայական արժեքով:

Եթե նման օրը շուկայական գին կամ արժեք առկա չէ, ապա արժեքը պետք է փոխհամաձայնեցվի Ապահովագրվողի ու Ապահովագրողի միջև, իսկ դրա անհնարության դեպքում՝ արբիտրաժով: Ինչևէ, եթե նման արժեթղթերը, օտարերկրյա դրամական միջոցները, արժույթները կամ թանկարժեք մետաղները փոխարինելի են, ապա Ապահովագրվողը, համաձայն Ընդհանուր Պայման 14-ի, կարող է փոխարինել նշված գործիքները Ապահովագրողի համաձայնությամբ, և արժեք կհանդիսանա փոխարինող գործիքների փաստացի գինը:

Եթե սույն Պայմանագիրը ենթակա է Ֆրանշիզայի, կամ եթե Ծրագրի Կետ 6-ի այն Պայնանագրի Սահմանաչափը, որը մնացել է որևէ կորստի կամ կորուստների հատուցման համար, իր գումարով բավարար չէ Ապահովագրվողին լրիվ հատուցելու այն արժեթղթերի կորստի համար, որոնց համար ըստ սույնի հայց է ներկայացվել, ապա սույն Պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվությունը սահմանափակվում է փոխհատուցմամբ կամ կրկնօրինակմամբ՝ նման արժեթղթերի այնքան մասի, որքանը որ ունի սույն Պայմանագրի կիրառելի Ապահովագրական Հոդվածով նախատեսված ստացվելիք գումարին հավասար արժեք:

(c) Այն դեպքում, երբ կորչում կամ վնասվում է Ապահովագրողիի գործունեության իրականացման ընթացքում օգտագործվող հաշվեմատյանների կամ այլ գրառումների տեսքով սեփականություն, ապա Ապահովագրողը պատասխանատու կլինի սույն Պայմանագրով միայն այն դեպքում, երբ նման հաշվեմատյանները կամ գրառումները փաստացի վերարտադրվեն, և ապա՝ ոչ ավելի, քան դատարկ հաշվեմատյանների, դատարկ էջերի, կամ այլ նյութերի արժեքն է, գումարած այն տվյալների գրառման կամ արտագրման համար ծախսված աշխատանքն է, որոնք պետք է տրամադրված լինեն Ապահովագրվողի կողմից, որպեսզի վերարտադրվեն նման հաշվեմատյանները կամ գրառումները:

14. ԿՈՐՍՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Արժեթղթերի սույն Պայմանագրով ծածկված կորստին առնչվող հայցի դեպքում, Ապահովագրվողը, համաձայն ստորև նշված պայմանների, պետք է նախ փորձի փոխարինել կորսված արժեթղթերն իր կողմից

տրված հատուցման նամակի միջոցով: Եթե նա ի վիճակի չէ այդ անել, ապա, Ապահովագրողի նախօրոք համաձայնությամբ, պետք է ապահովի կորած արժեթղթերի մուրհակ՝ կրկնօրինակ արժեթղթերի թողարկման հնարավորություն ստանալու համար:

Համաձայնեցվում է նաև, որ Ապահովագրողը Ապահովագրվողին կհատուցի այնպիսի գումարի կամ գումարների չափով, որոնք գերազանցում են Ծրագրում նշված կիրառելի Ֆրանշիզան, և չեն գերազանցում Ծրագրում նշված Համընդհանուր Սահմանաչափը, կամ նման կորստի առնչությամբ որևէ կիրառելի Ենթասահմանաչափը, որը կմնա որևէ կորստի հատուցման համար Ապահովագրվողի կողմից հատուցման նամակի ստորագրման կամ կորսված արժեթղթերի մուրհակի թողարկման ժամանակ, և որը Ապահովագրվողից կարող է պահանջվել վճարել Պայմանագրի գործողության ժամկետի կամ դրան հաջորդող ցանկացած ժամանակ՝ ըստ որևէ հատուցման համաձայնագրի, որը Ապահովագրվողի կողմից ստորագրվել կամ տրվել է կորսված բաժնետոմսերի մուրհակ թողարկող Ընկերությանը:

Համաձայնեցվում է նաև, որ Ապահովագրվողի հաշվին կլինի հատուցման համաձայնագրի կամ կորսված բաժնետոմսերի մուրհակի ձեռքբերման ծախսը՝ կորստի այն չափով, որը Ծրագրում նշված կիրառելի Ֆրանշիզայի սահմաններում է, կամ որը գերազանցում է այն Համընդհանուր Սահմանաչափը, որը մնում է նշված կորստի հատուցման համար կամ որը գերազանցում է որևէ կիրառելի Ենթասահմանաչափ, որը մնում է նշված կորստի հատուցման համար:

Ապահովագրողի հաշվին կլինի նման հատուցման համաձայնագրի կամ կորսված բաժնետոմսերի մուրհակի ձեռքբերման ծախսը՝ այն կորստի մասով, որը ծածկված կլինի սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածներով, և որը գերազանցում է Ֆրանշիզան, սակայն գտնվում է այն Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթասահմանաչափի մեջ, որը մնում է որևէ կորստի հատուցման համար:

15. ՍՈՒԲՈՐԳԱՑԻԱ, ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՓՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Համաձայնեցվում է, որ Ապահովագրողին, սույնով նախատեսված որևէ կորստի հատուցման պես, կփոխանցվեն նման կորստի առնչությամբ Ապահովագրվողի բոլոր իրավունքները, շահերը և գործողությունների հիմքերը:

Հատուցումից հետո որևէ կորստի վերականգնման դեպքում, վերականգնված գումարը, նվազեցված այդ վերականգնումն իրականացնելու փաստացի ծախսերի չափով՝ բացառությամբ Ապահովագրվողի սեփական աշխատանքների կամ անձնակազմի ծախսերի, պետք է տնօրինվի հետևյալ հաջորդականությամբ.

(a) Ապահովագրվողին լրիվ փոխհատուցելու կորուստի այն մասը՝ եթե առկա է, որը գերազանցում է սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը (անկախ ցանկացած կիրառելի Ֆրանշիզայի գումարից):
(b) Ապահովագրողին փոխհատուցման համար՝ տարբերությունը կամ ամբողջ զուտ վերականգնված գումարը, եթե նման կորստի որևէ մաս չի գերազանցում սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը:

(c) և վերջապես, Ծրագրում նշված Ֆրանշիզայի հետևանքով Ապահովագրվողի կրած նման կորստի այդ մասի և/կամ բացի սույն Պայմանագրից, որևէ այլ պայմանագրով ծածկված նման կորստի այդ մասի համար:

16. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

Ապահովագրողը պատասխանատու կլինի միայն Ծրագրի կետ 7-ում նշված համապատասխան Ապահովագրական Հոդվածի համար կիրառելի Ոչ պայմանական չհատուցվող գումարը գերազանցող չափով: Այն դեպքում, երբ ավելի քան մեկ Ապահովագրական Հոդված լինի կիրառելի, կգործի ամենամեծ Ոչ պայմանական չհատուցվող գումարը, որն առնչվում է համապատասխան Ապահովագրական Հոդվածին:

Ոչ պայմանական չհատուցվող գումարը կկիրառվի յուրաքանչյուր և ամեն կորստի նկատմամբ, անկախ Պայմանագրի գործողության ընթացքում նման կորուստների քանակի:

17. ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

Եթե Ապահովագրվողը որևէ հայց ներկայացնի, իրազեկ լինելով, որ այն կեղծ կամ ապօրինի է՝ կապված որևէ գումարի կամ այլ բանի հետ, ապա սույն Պայմանագիրը կկորցնի իր ուժն ու նրա շրջանակներում բոլոր հայցերը կմերժվեն:

ԲԱԺԻՆ Բ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 1
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը փոխանցել է, վճարել կամ տրամադրել է գումար կամ որևէ սեփականություն, տրամադրել է վարկ, հաշիվ է դեբիտագրել կամ էլ հանձնել է որևէ արժեքավոր իր, հանդիսանում է ուղղակի արդյունք հետևյալի

(a) էլեկտրոնային տվյալների կեղծ ներմուծում՝

(i) Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ,

(II) Համակահգքային Համակահգի Ծալայըղթյըղննեեի Բյըղհը,
(iii) որևէ էլեկտրոնային Դրամական Միջոցների Փոխանցման Համակարգ,

(iv) Հաճախորդի Հաղորդակցման Համակարգ, կամ

(b) վեՐը նշծած համակահգեեիծ մեկըղմ, Աժահըծագիծըղի Համակահգքային Համակահգըղմ կամ էլ Համակահգքային Համակահգի Ծալայըղթյըղննեեի Բյըղհըյըղմ ժահժանծըղ կամ էլ գըհծածծըղ էլեկկհընային կծյալնեեի հանծածըհ ձևափըխըղմը կամ դհանծ ծնախըղմը, կամ
(c) Հեռախոսային Բանկային Համակարգի միջոցով էլեկտրոնային տվյալների հանցավոր ներմուծումը Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ

երբ հանցավոր գործողությունները հանձնարարվել կամ կատարվել են մի անձի կողմից, որը ցանկացել է Ապահովագրվողին վնաս հասցնել կամ էլ իր կամ մեկ այլ անձի համար ֆինանսական շահ ստանալ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 2
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը փոխանցել է, վճարել կամ ստացել է գումար կամ որևէ գույք, տրամադրել է վարկեր, հաշիվ է դեբիտագրել կամ էլ տրամադրել է որևէ արժեքավոր իր, հանդիսանում է էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի ուղղակի արդյունք, որի կեղծ գործողությունները հանձնարարվել կամ կատարվել են մի անձի կողմից, որը ցանկացել է Ապահովագրվողին վնաս հասցնել կամ էլ իր կամ մեկ այլ անձի համար ֆինանսական շահ ստանալ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 3
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ և ՄԻՋՈՑՆԵՐ

Այն դեպքում, երբ

(a) ձանկածած մահդը կըղմիծ էլեկկհընային կծյալնեեի կեղծ փըփըխման, ծնախման կամ էլ այդ անելը փըհծի ժակճալը, եթե դհանմ ժահժանծեն Աժահըծագիծըղի Համակահգքային Համակահգըղմ կամ էլ Ծալայըղթյըղննեեի Բյըղհըյի Համակահգքային Համակահգըղմ, կամ գհանձծած լինեն Աժահըծագիծըղի շենմըղմ կամ գհախենյակնեեիղմ գկնծըղ էլեկկհընային Կծյալնեեի Մշակման Միիըձնեեիղմ կամ էլ գկնծեն Աժահըծագիծըղի կըղմիծ ըհժեխ իհածախըղ ճանաթծած անձի / կամ էլ ծեհիհնիխ անաշխակըղնակըղթյան դեժմըղմ նհա ժահկականըղթյըղննեեը կակահը մեկ այլ անձի/, կնյհինման կակ, մինթ դել էլեկկհընային կծյալնեեի Մշակման միիըձնեեը, ըհընձ ծհա գհանձծած են կծյալնեեի, կահը են կեղափըխծել ձանկածած ծայհ. նման կեղափըխըղթյըղն կահելի է կակահել միայն ծեհըհիշյալ իհածախըղիծ խկածծած խկածականի միիըձը և անմիհաժեխ ածահկել կեղափըխըղմը ըհժեխ այդժիխին ճանաթծած խկածըղին կամ էլ նհա գըհծակալին դհանմ ըղղահկելըղծ հեկը: Խա հնահածըհ է իհագըհծել այն դեժմըղմ, եթե Աժահըծագիծըղը հանդիխանա նման էլեկկհընային կծյալնեեի կամ էլ Կծյալնեեի Մշակման Միիըձնեեի խեփականակեի կամ էլ յհենմըծ խահմանծած կահգըծ ժակախխանակըղ լինի դհանձ ծնախման կամ կըհխկի համահ, և

(b) Եթե էլեկտրոնային տվյալների մշակման միջոցները գողանան, վնասվեն, ոչնչանան կամ էլ

անբացատրելի պայմաններում անհետանան, այն դեպքում, եթե դրանք պահպանվեն ցանկացած վայրում տեղակայված շենքերում կամ գրասենյակներում կամ էլ գտնվեն Ապահովագրվողի կողմից որպես իրավասու ճանաչված անձի / կամ էլ վերջինիս անաշխատունակության դեպքում նրա պարտականությունները կատարող մեկ այլ անձի/, տնօրինման տակ, մինչ դեռ էլեկտրոնային տվյալների Մշակման միջոցները, որոնց վրա գրանցված են տվյալներ, կարող են տեղափոխվել ցանկացած վայր. նման տեղափոխություն կարելի է կատարել միայն վերոհիշյալ իրավասուից ստացված ստացականի միջոցով և անմիջապես ավարտել տեղափոխումը որպես այդպիսին ճանաչված ստացողին կամ էլ նրա գործակալին դրանք ուղարկելուց հետո: Սա հնարավոր է իրագործել այն դեպքում, եթե Ապահովագրյալը հանդիսանա նման էլեկտրոնային տվյալների կամ էլ Տվյալների Մշակման Միջոցների սեփականատեր կամ էլ օրենքով սահմանված կարգով պատասխանատու լինի դրանց վնասման կամ կորստի համար, և

(c) էլեկկիրնային Համակահգթային Ծհագհեհի կեղծ փրփրխման կամ ծնախման ժակճալրծ, եթե դհանմ ժահժանծեն Աժահրծագհծրղի Համակահգթային Համակահգրղմ, ըղ եթե Աժահրծագհծրղը հանդիխանա նման էլեկկիրնային Համակահգթային Ծհագհեհի խեփականակեհ կամ էլ յհենմրծ խահմանծած կահգրծ ժակախխանակրղ լինի դհանճ ծնախման կամ կրհխկի համահ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 4
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՎԻՐՈՒՍ

Այն դեպքում, երբ

(a) Ապահովագրվողը փոխանցել է, վճարել կամ տրամադրել է գումար կամ որևէ սեփականություն, տրամադրել է վարկեր, հաշիվ է դեբիտագրել կամ էլ հանձնել է որևէ արժեքավոր իր, ինչը հանդիսանում է համակարգչային վիրուսի հետ կապված Ապահովագրվողի էլեկտրոնայն տվյալների ոչնչացման կամ դրա փորձի ուղղակի արդյունք, որի պատճառ կարող է դառնալ ցանկացած անձ, երբ նմամատիպ էլեկտրոնային տվյալները պահպանվում են Ապահովագրվողի Համակարգչային Համակարգում կամ Ծառայությունների Բյուրոյի Համակարգչային Համակարգում, և

(b) ինչը հանդիսանում է համակարգչային վիրուսի հետևանքով Ապահովագրվողի էլեկտրոնայն տվյալների ոչնչացման կամ դրա փորձի ուղղակի արդյունք, որի պատճառ կարող է դառնալ ցանկացած անձ, երբ նմամատիպ էլեկտրոնային տվյալները պահպանվում են Ապահովագրվողի Համակարգչային Համակարգում կամ Ծառայությունների Բյուրոյի Համակարգչային Համակարգում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 5
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ և ՖԱՔՍՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը փոխանցել է, վճարել կամ տրամադրել է գումար կամ որևէ սեփականություն, տրամադրել է վարկեր, հաշիվ է դեբիտագրել կամ էլ հանձնել է որևէ արժեքավոր իր վստահելով Ապահովագրվողին ուղղված որևէ էլեկտրոնային հաղորդակցությանը, որը լիազորում կամ պարզապես ճանաչում է գումարի կամ սեփականության փոխանցումը, վճարումը, առաքումն ու ստացումը, որոնց հաղորդակցությունները արդեն փոխանցվել են կամ ենթադրվում են փոխանցված՝

(a) էլեկտրոնային Հաղորդակցության Համակարգով, կամ

(b) ֆաքսով, թելեքսով, հեռատիպով կամ կապի այլ միջոցներով

անմիջապես Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ կամ Ապահովագրվողի Հաղորդակցության տերմինալ և ցույց են տալիս, թե իբր դրանք ուղարկվել են հաճախորդի, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակի, Ապահովագրվողի գրասենյակի կամ մեկ այլ ֆինանսական հաստատության կողմից, բայց որոնց հաղորդագրությունները կամ չեն ուղարկվել կամ էլ էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների ֆիզիկական փոխադրման ժամանակ սխալմամբ ուղարկվել են Ապահովագրվողին կամ էլ էլեկտրոնային Փոխանցման ժամանակ՝ Ապահովագրվողի Համակարգչային Համակարգին կամ էլ Ապահովագրվողի Հաղորդակցության Տերմինալին:

Հատուկ պայման

Վերը նշված ֆաքսը, թելեքսը, հեռատիպը կամ կապի այլ միջոցները պետք է լինեն Ստուգված կամ լիազորված անձին, բայց ոչ փոխանցումը նախաձեռնողին, հետ զանգելու սկզբունքով օժտված: Ցանկացած նման Ֆաքս պետք է բացահայտի Կեղծ Ստորագրություն կամ Կեղծ Փոփոխում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 6
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Այն դեպքում, երբ Ապահովագրվողի հաճախորդը, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակը կամ մեկ այլ ֆինանսական հաստատություն փոխանցել, վճարել կամ տրամադրել է գումար կամ որևէ սեփականություն, տրամադրել է վարկեր, հաշիվ է դեբիտագրել կամ էլ հանձնել է որևէ արժեքավոր իր,

(a) վստահելով որևէ էլեկտրոնային հաղորդակցության, համաձայն որի, դրանք ուղարկվել են Ապահովագրվողի հաճախորդի, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակի կամ էլ գումարի կամ սեփականության փոխանցումը, վճարումը, առաքումն ու ստացումը լիազորող կամ ճանաչող ֆինանսական հաստատության կողմից, որոնց հաղորդակցությունները փոխանցվել կամ ենթադրվում են փոխանցված էլեկտրոնային Հաղորդակցման համակարգով, Ստուգված Ֆաքսով, Ստուգված Թելեքսով, Ստուգված Հեռատիպով կամ կապի այլ ստուգված միջոցներով ուղիղ վերը նշված հաճախորդի Համակարգչային Համակարգ կամ Հաղորդակցման Տերմինալ, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակ կամ ֆինանսական այլ հաստատություն ու ցույց են տալիս, թե իբր դրանք ուղարկել է Ապահովագրվողը կամ էլ հանդիսանում են Ապահովագրվողի մոտից էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների ֆիզիկական փոխադրման կամ Ապահովագրվողի Համակարգչային Համակարգից կամ էլ Ապահովագրվողի Հաղորդակցության Տերմինալից էլեկտրոնային Փոխադրման ընթացքում էլեկտրոնային Տվյալների սխալ ձևափոխման ուղղակի արդյունք, կամ

(b) որպես սխալ ներմուծման, Ապահովագրվողի Համակարգչային Համակարգի մեջ պահպանվող կամ օգտագործվող էլեկտրոնային Տվյալների սխալ ձևափոխման կամ ոչնչացման, կամ Ապահովագրվողի Համակարգչային Համակարգից դեպի հաճախորդի Համակարգչային Համակարգ էլեկտրոնային Փոխադրման ուղղակի արդյունք, մինչ դեռ Ապահովագրվողը վերը նշված հաճախորդի համար հանդիսանում է որպես Ծառայությունների Բյուրո, և որի կորստի համար Ապահովագրվողը հաճախորդին, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակին կամ ֆինանսական հաստատությանը պատասխանատու է օրենքով սահմանված կարգով:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 7
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Այն դեպքում, երբ Կենտրոնական Դեպոզիտորիան փոխանցել, վճարել կամ տրամադրել է գումար կամ որևէ սեփականություն, դեբիտագրել է Ապահովագրվողի որևէ հաշիվ վստահելով որևէ էլեկտրոնային հաղորդակցության, ըստ որի այն Ապահովագրվողի կողմից ուղղված է եղել Կենտրոնական Դեպոզիտորիային և լիազորել է փոխանցումը, վերը նշված գումարների կամ սեփականության վճարումը կամ առաքումը, կամ Ապահովագրվողի հաշվի դեբիտագրումը կապված էլեկտրոնային արժեթղթերի գնման, վաճառքի, փոխանցման կամ գրավադրման հետ, որի հաղորդակցությունները փոխանցվել են կամ էլ թվում են փոխանցված

(a) էլեկտրոնային Հաղորդակցման Համակարգով, կամ
(b) Ստուգված Ֆաքսով, Ստուգված Թելեքսով, Ստուգված Հեռատիպով կամ Ստուգված Հաղորդակցման այլ միջոցներով

ուղղակիորեն վերոհիշյալ Կենտրոնական Դեպոզիտորիայի Համակարգչային Համակարգ կամ Հաղորդակցման Տերմինալ: Համաձայն դրանց, Ապահովագրվողն է ուղարկել հաղորդակցությունները Կենտրոնական Դեպոզիտորիա, սակայն այդ հաղորդակցությունները կամ չեն ուղարկվել Ապահովագրվողի կողմից Կենտրոնական Դեպոզիտորիա կամ էլ Ապահովագրվողի մոտից էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների ֆիզիկական փոխադրման կամ էլ Ապահովագրվողի Հաղորդակցության Տերմինալից դեպի Կենտրոնական Դեպոզիտորիա էլեկտրոնային Փոխադրման ընթացքում էլեկտրոնային Տվյալների սխալ ձևափոխման արդյունք են դարձել, որի կորստի համար Ապահովագրվողը Կենտրոնական Դեպոզիտորիայի առջև պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ 8
ՉԱՅՆՈՎ ԳՈՐԾԱՐԿՎՈՂ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Այն պատճառով, որ

(a) Ապահովագրվողը փոխանցել է գումարներ կամ տրամադրել է որևէ սեփականություն վստահելով իրեն ուղղված այլ բանկերում Հաճախորդի կողմից ճանաչված անձանց օգտին Հաճախորդի հաշվին գումարների փոխանցումը կամ սեփականության տրամադրումը լիազորող ձայնով

գործարկվող հրահանգներին, որոնց հանձնարարականները կատարվել են հեռախոսի միջոցով Ապահովագրվողի այն աշխատակիցներին, որոնք լիազորված են Ապահովագրվողի գրասենյակում ստանալու վերոհիշյալ հանձնարարագրերը: Համաձայն այդ կեղծ հանձնարարագրերի, դրանք պատրաստվել են Հաճախորդի կողմից լիազորված մարդու կողմից, ով իրավունք ունի հեռախոսով պահանջելու այս կամ այն գումարի փոխանցումը կամ որևէ սեփականության տրամադրումը, սակայն վերոհիշյալ Հաճախորդի կամ տնօրենի, գործընկերոջ, կամ Հաճախորդի աշխատակցի կողմից նման հանձնարարականներ չեն կատարվել կամ էլ կատարվել են վերոհիշյալ անձանց կեղծ գործողությունների արդյունքում, քանի որ նրանց աշխատանքային պարտականությունները իրենց չեն ներում պատրաստել, նախաձեռնել, լիազորել, վավերացնել կամ էլ հաստատել հաճախորդի ձայնով գործարկվող հրահանգները, որոնց կեղծ գործողությունները ի կատար են ածվել այն անձի կողմից, ով Ապահովագրվողին կամ Հաճախորդին վնասելու կամ էլ իր կամ մեկ այլ անձի համար ֆինանսական շահ ստանալու նպատակ է ունեցել:

(b) Ապահովագրվողը փոխանցել է գումարներ կամ տրամադրել է սեփականություն վստահելով ձայնով գործարկվող հրահանգներին, որոնք հաղորդակցվել են Ապահովագրվողի գրասենյակների միջև և լիազորել են գումարների փոխանցումը և սեփականության տրամադրումը հաճախորդի հաշվին Ապահովագրվողի գրասենյակների միջև Հաճախորդի կողմից ճանաչված անձանց օգտին, որոնց հանձնարարականները կատարվել են հեռախոսազանգով Ապահովագրվողի և նրա կողմից լիազորված աշխատակիցների միջև, ովքեր հատուկ լիազորված են ստանալու վերոհիշյալ միջգրասենյակային հանձնարարագրերը: Համաձայն կեղծ հանձնարարագրերի դրանք կատարվել են Ապահովագրվողի աշխատակցի կողմից, ով լիազորված է եղել հեռախոսով պահանջելու այս կամ այն գումարի փոխանցումը կամ սեփականության տրամադրումը, որի կեղծ գործողությունները կատարվել են մի անձի կողմից (բայց ոչ Ապահովագրվողի աշխատակցի կողմից), ով Ապահովագրվողին կամ Հաճախորդին վնասելու կամ էլ իր կամ մեկ այլ անձի համար ֆինանսական շահ քաղելու նպատակ է ունեցել:

Հատուկ սահմանում

”Հաճախորդը”, ինչպես նշվում է այս Ապահովագրական Հոդվածում, հանդիսանում է ցանկացած կորպորատիվ կողմ, գործընկերություն, տրաստային հաճախորդ կամ նմանատիպ անձ, ով ձայնով գործարկվող գումարների փոխանցման համար ունի Ապահովագրվողի հետ կնքված գրավոր համաձայնագիր: Այդ համաձայնագիրը պետք է ունենա կորպորատիվ եզրակացության ձև և իր մեջ պարունակի այն ֆիզիկական անձանց անունները, ովքեր լիազորված են նախաձեռնելու և վավերացնելու ձայնով գործարկվող գումարների փոխանցումը, այն պետք է նաև պարունակի բոլոր նախաձեռնողների և վավերացնողների հեռախոսահամարները և դրամական հնարավորությունները: Նման գրավոր հանձնարարագրերը պետք է նաև պարզաբանեն այն պայմաններն, ըստ որոնց մատուցվում են ծառայություններ՝ ներառյալ Ապահովագրվողի կողմից ընդունված իրավասության սահմանափակումները:

Հատուկ պայման

Հաճախորդի կողմից ստացված գումարների փոխանցման կամ սեփականության տրամադրման համար նախատեսված բոլոր տեսակի ձայնով գործարկվող հրահանգները պետք է Ստուգվեն հետ զանգելով որևէ լիազորված անձին, բայց ոչ փոխանցումը նախաձեռնողին:

II. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. **"Ապահովագրվող"** ասելով հասկանում ենք այն Ապահովագրվողին, ում անունը առաջինն է նշվում Պայմանագրին կից Ծրագրում և ցանկացած ամբողջությամբ սեփականաություն հանդիսացող ընկերություն, որը ընդգրկված է բանկային գործունեության մեջ, որոնք նշված են Հարցաթերթիկում կամ Պայմանագրին կից Ծրագրում: Այն իր մեջ չի ներառում՝

   (a) մասնակի սեփականաություն հանդիսացող բանկային կազմակերպություն, կամ

   (b) լրիվ կամ մասնակի սեփականաություն հանդիսացող ոչ բանկային կազմակերպություն, եթե միայն այն չնշվի Հարցաթերթիկում կամ Պայմանագրին կից Ծրագրում իր հիմնական գործունեության տեսակի և Ապահովագրվողի բաժնեմասի արտացոլմամբ:

2. "Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ" ասելով հասկանում ենք Ապահովագրվողի կողմից շահագործվող այն համակարգչային համակարգերը, որոնք հանդիսանում են Ապահովագրվողի սեփականությունը կամ հատկացվել են նրան վարձակալական հիմունքներով կամ էլ հայտարարագրված են Հարցաթերթիկում:

3. "Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակ" ասելով հասկանում ենք ցանկացած կորպորացիա կամ ընկերություն, որը շահագործում է որևէ էլեկտրոնային քլիրինգային և փոխանցման մեխանիզմ ֆինանսական կազմակերպությունների միջև ֆինանսական կազմակերպության հաճախորդների անունից նախապես լիազորվող կրկնվող պարտքային պարտավորությունների և վարկերի փոխանցումներն իրականացնելու համար:

4. "Կենտրոնական Դեպոզիտորիա" ասելով հասկանում ենք ցանկացած քլիրինգային կորպորացիա ներառյալ Միացյալ Նահանգների Ֆեդերալ Ռեզերվային Բանկը, ուր որպես էլեկտրոնային քլիրինգային և փոխանցման մեխանիզմի ուղղակի արդյունք մուտքերը կատարվում են փոխանցողի գրանցամատյանի վրա գրավատուի կամ գրավառուի հաշիվը նվազեցնելու նպատակով: Իսկ հանձնառուի, գրավատուի կամ գրավառուի հաշիվը ավելացնելու համար մուտքերը կատարվում են պարտավորության գումարի, բաժնետոմսերի քանակի կամ փոխանցված գրավադրված կամ ազատ արձակված իրավունքների հիման վրա, որի քլիրինգային կորպորացիան հայտարարագրված է Առաջարկների Ձևում կամ ինչպես հետագայում կսահմանվի պայմանագրի գործողության ժամկետում:

5. «Հաղորդակցության Տերմինալ» ասելով հասկանում ենք ցանկացած հեռատիպ, հեռատպիչ, POS տեմինալ և ֆաքս կամ ինֆորմացիա ուղարկելու և ստանալու ունակություն ունեցող ցանկացած սարք՝ անկախ մկնիկի, ստեղնաշարի կամ զգայուն էկրանի գոյությունից: Այս սահմանումը նույնպես ճշգրտվում է՝ ներառելու համար անձնական համակարգիչները, եթե դրանք օգտագործվում են որպես Հաղորդակցության Տերմինալներ:

6. «Համակարգչային Համակարգ» ասելով հասկանում ենք համակարգիչ և/կամ անձնական համակարգիչ, որը հարմար է բազմապիսի գործողություններ կատարելու համար, որն ուղղում է ծրագրային ապահովումը, սարքավորումը, տվյալների աղբյուրներն ըստ էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի, որն օգտագործողը ձևավորում և ներկայացնում է Համակարգչի շահագործման համակարգին: Բոլոր ներմուծման, դուրս գրման, մշակման, պապանման և հաղորդակցման միջոցները նորառյալ հարակից հաղորդակցությունները կամ բաց համակարգերի ցանցը, որ միացված են այն սարքին և սարքի off-line տվյալների պահեստարանին, որոնք համարվում են վերոհիշյալ համակարգչային համակարգի մաս: Այն իր մեջ ներառում է միանգամյա կիրառման համար նախատեսված համակարգիչները:

7. «Համակարգչային Վիրուս» ասելով հասկանում ենք չլիազորված ծրագրային կամ այլ հրահանգների փաթեթ, որոնք ի հայտ են գալիս Ապահովագրվողի Համակարգչային Համակարգի և/կամ ցանցերի միջոցով, որոնց հրահանգը չարամտորեն տալիս է ինչ-որ մեկը, այլ ոչ թե որևէ հայտնի աշխատակից:

8. «Հաճախորդի Հաղորդակցման Համակարգ» ասելով հասկանում ենք Հարցաթերթիկում հայտարարագրված կամ համաձայն Պայմանագրի գործողության ժամկետում հետագայում սահմանվածի՝ այն հաղորդակցությունների համակարգերը, որոնք Ապահովագրվողի հաճախորդների համար ազատ մուտք են ապահովում դեպի Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ:

9. «Էլեկտրոնային Հաղորդակցությունների Համակարգ» ասելով հասկանում ենք Fedwire-ի, Քլիրինգային Գրասենյակի Միջբանկային Վճարային Համակարգերի (CHIPS), Համաշխարհային Միջբանկային Ֆինանսական Հեռահաղորդակցման Ընկերակցության (SWIFT), Քլիրինգային Գրասենյակի Ավտոմատացված Վճարային Համակարգերի (CHAPS) միջոցով իրականացվող էլեկտրոնային հաղորդակցության գործառնություններ, Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակի նախապես լիազորվող, կրկնվող պարտքային պարտավորությունների և վարկերի գումարների փոխանցման համակարգ, որը հանդիսանում է Ազգային Ավտոմատացված Քլիրինգային Գրասենյակային Ասոցիացիայի և նմանատիպ ավտոմատացված հաղորդակցության համակարգերի անդամ, ինչպես հայտարարագրված է Հարցաթերթիկում կամ ինչպես հետագայում կսահմանվի Պայմանագրի գործողության ժամկետում:

10. "Էլեկտրոնային Համակարգչային Ծրագրեր" ասելով հասկանում ենք համակարգչային ծրագրեր, այսինքն փաստեր կամ հաղորդակցություններ, որոնք փոխակերպված են այնպիսի ձևի, որը կարելի է կիրառել Համակարգչային Համակարգում որպես էլեկտրոնային Տվյալներ:

11. "Էլեկտրոնային Տվյալներ" ասելով հասկանում ենք Համակարգչային Համակարգում գործածելի ձևի վերափոխված փաստեր կամ ինֆորմացիա, որոնք պահպանվում են էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցներում հետագայում համակարգչային ծրագրերում կիրառվելու նպատակով:

12. "Էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցներ" ասելով հասկանում ենք մագնիսական կամ օպտիկական երիզներ կամ սկավառակներ կամ նմանատիպ այլ հարմարանքներ, որոնց վրա

գրանցվում են էլեկտրոնային տվյալները:

13. "Էլեկտրոնային Գումարների Փոխանցման Համակարգ" ասելով հասկանում ենք բանկոմատները և վաճառքի տերմինալները աշխատեցնող համակարգերը, որոնք իրենց մեջ ներառում են նշված համակարգի համար նախատեսված ընդհանուր ցանցեր կամ միջոցներ, ուր իր մասնակցությունն է ունենում Ապահովագրվողը:

14. "Էլեկտրոնային Արժեթղթեր" ասելով հասկանում ենք բաժնեմաս, մասնակցություն կամ այլ նմանատիպ գործողություն թողարկողի սեփականության կամ ձեռնարկության կամ էլ պարտավորությունների մեջ, որը

    (a) արժեթղթերի առք ու վաճառքի կամ արժեթղթերի շուկաներում հաճախ կիրառվող ձև է, և

    (b) իր դասակարգից կամ սերիաներից մեկն է, կամ ելնելով դրա պայմաններից, այն կարելի է բաշխել բաժնեմասերի, մասնակցությունների, տոկոսների, պարտավորությունների, դասակարգի կամ սերիաների, և

    (c) (i) այն թի նեհկայածծըղմ ըհևէ գըհծիմի կըղմիծ, կամ
        (ii) մասթեր կամ գլոբալ սերտիֆիկատի մաս է հանդիսանում, կամ

        (iii) ներկայացնում է ֆինանսական կազմակերպության կողմից հանձնված սերտիֆիկատը, ինչպես նաև, թե որ սերտիֆիկատն է վերափոխվել մասթեր դեպոզիտորական ստացականի և այդ սերտիֆիկատները հանվում են շրջանառությունից և այդ արժեթուղթը ներկայացվում է որպես էլեկտրոնային մուտք դեպի փոխանցողի, գրավատուի, գրավառուի հաշիվ Կենտրոնական Դեպոզիտորիայի գրանցամատյանի վրա:

15. "Էլեկտրոնային Փոխանցում" ասելով հասկանում ենք էլեկտրոնային Տվյալների փոխանցումը հաղորդակցության տվյալների միջոցով ներառյալ արբանյակային կապերով, ռադիո հաճախականությամբ, ինֆրակարմիր կապերով կամ տվյալների փոխանցման համար կիրառվող նմանատիպ այլ միջոցներով:

16. "Պարտքի Նշաններ" ասելով հասկանում ենք Ապահովագրվողի հաճախորդի կողմից կիրառվող գործիքները, որոնք գործի ընթացքում գործածվում են որպես հաճախորդի՝ Ապահովագրվողի հանդեպ ունեցած պարտքը հայտնաբերելու գործիք, ներառյալ գանձումների գրանցումներն ու ստացվելիք գումարները:

17. "Կեղծ Ստորագրություն" ասելով հասկանում ենք ինչ-որ մեկի անվան ձեռագիր կեղծ ստորագրումը կամ էլ վերոհիշյալ մարդու ստորագրության չլիազորված և կեղծված պատճեն: Այն իր մեջ չի ներառում լիազորված կամ չլիազորված անձի սեփական ստորագրությունը կամ անվան լրիվ կամ մասնակի լրացումը, անկախ պաշտոնից և նպատակից:

18. "Կեղծ Փոփոխում" ասելով հասկանում ենք կեղծ նպատակով ֆաքսի նյութական փոփոխումը, որը կատարվում է ոչ թե գործիքը ստորագրող կամ պատրաստող անձի կողմից, այլ մեկ ուրիշ մարդու կողմից:

19. "Ծառայությունների Բյուրո" ասելով հասկանում ենք գրավոր համաձայնագրով լիազորված մարդ, գործընկերություն կամ կորպորացիա, ով իրավասու է կատարելու տվյալների մշակման ծառայություն՝ օգտագործելով Համակարգչային Համակարգը:

20. "Ծառայությունների Բյուրոյի Համակարգչային Համակարգ" ասելով հասկանում ենք Ծառայությունների Բյուրոյի կողմից շահագործվող այն Համակարգչային Համակարգերը, որոնք կամ պատկանում են Ծառայությունների Բյուրոյին կամ էլ հատկացվել են նրանց վարձակալական հիմունքներով:

21. "Ֆաքս" ասելով հասկանում ենք մի համակարգ, որով էլեկտրոնային ազդանշաններով կառավարվող հեռախոսի միջոցով գրավոր փաստաթղթերը փոխանցվում են վերոհիշյալ փաստաթղթերի պատճենները ստանալու համար նախատեսված սարքի վրա, որը Ապահովագրյալը պահպանում է հատուկ պայմաններում:

22. "Հեռախոսային Բանկային Համակարգ" ասելով հասկանում ենք Հարցաթերթիկում հայտարարագրված հեռախոսային Բանկային հաղորդակցությունների համակարգ, որը Ապահովագրվողի համար ապահովում է մուտք դեպի Ապահովագրվողի Համակարգչային Համակարգ ավտոմատացված տոնային հեռախոսային ծառայության միջոցով, որը պահանջում է

Ստուգված կոդի կիրառումը, որպեսզի այն ներգործի բանկային գործարքների վրա, սակայն, այն չի ենթադրում սեփական մասնաճյուղային փոխանակում, ձայնային նամակների մշակում, ավտոմատացված զանգային սպասարկում կամ նմանատիպ ունակություններով օժտված համակարգչային համակարգ, որոնք կիրառվում են ձայնային հաղորդակցությունների ցանցում հեռախոսային զանգերի ուղղության կամ ընթացքի համար:

23. "Ստուգված" նշանակում է հաղորդակցության բովադակության հաստատման մեթոդ, ըստ որի դրան ավելացվում է օրինակման ստուգման բանալի, որը փոխանակվում է Ապահովագրվողի և հաճախորդի, Ավտոմատացված Քլիրինգային Համակարգի, Կենտրոնական Դեպոզիտորիայի, այլ ֆինանսական կազմակեպության և Ապահովագրվողի գրասենյակների միջև հաղորդակցության ամբողջականությունը բիզնեսի ընթացքում պահպանելու նպատակով:

ԵԹԵ 1-23 ԿԵՏԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐՆ Ի ՀԱՅՏ ԳԱՆ ՍՈՒՅՆ ՊՈԼԻՍԻ ՄԵՋ, ԱՊԱ "ԻՆՉՊԵՍ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է" ԲԱՌԵՐԸ ԿՄԻԱՁՈՒԼՎԵՆ ՏԵՔՍՏԻՆ ՄԻԱՆԳԱՄԻՑ ՀԱՋՈՐԴԵԼՈՎ ՀԻՇՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻՆ:

III. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Պայմանագիրը իր մեջ չի ներառում.

1. Կորուստը, որի պատճառ է հանդիսացել Ապահովագրվողի Ֆինանսական Կազմակերպության Պարտավորվածության գծով ապահովագրված ռիսկը:

2. Ապահովագրվողի տնօրենի կամ աշխատակցի կամ էլ վերոհիշյալ տնօրենի կամ աշխատակցի հետ գաղտնի կապեր ունեցող մարդու կամ մարդկանց պատճառած կորուստը:

   Եթե աշխատակիցներից որևէ մեկը նախապես իմացել է, որ որոշակի մարդկանց /բայց ոչ Ապահովագրվողի աշխատակիցների/ կողմից կատարվել կամ կատարվելու է խարդախություն, ապա համաձայն սույն Պայմանագրի, դա կհամարվի գաղտնի համագործակցություն, քանի որ վերոհիշյալ աշխատակիցը պետք է Ապահովագրվողին ինքնակամորեն պատմի իրեն հայտնի ինֆորմացիան:

   Աշխատակցի կողմից տեղեկությունների թաքցնելը Ապահովադրից՝ որևէ անձին ֆիզիկական վնաս կամ Ապահովադրի տարածքին կամ գույքին վնաս հասցնելու սպառնալիքի պատճառով, չի համարվում կամ հանդիսանում գաղտնի պայմանավորվածություն:

3. Պոտենցիալ եկամուտի կորուստը՝ տոկոսներն ու շահաբաժինները ներառյալ:

4. Ցանկացած բնույթի անուղղակի կամ հետևանք հանդիսացող կորուստը:

5. Ապահովագրվողի ենթադրվող պարտավորությունները համաձայն ցանկացած պայմանագրի սահմաններում գործող համաձայնագրի, եթե միայն նման պարտավորությունները չկցվեն Ապահովագրվողին նույնիսկ նման համաձայնագրի բացակայության դեպքում:

6. Ծախսերն ու միջնորդավճարները, որ Ապահովագրվող կատարել է

   (a) սույն Պայմանագրին համաձայն կորստի գումարի գոյությունը հաստատելու համար, կամ

   (b) որպես որևէ իրավաբանական գործընթացի մի կողմ բացառությամբ Ընդհանուր Պայման 6-ի:
   (c) կամ եթե չի ապահովագրված Մաքրման ծախսերի ընդլայնմամբ՝ ըստ կցվածի:

7. Պատերազմի, հարձակման, թշնամության կամ պատերազմանման գործողությունների /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի արդյունքում պատճառված կորուստը կամ վնասը: Ցանկացած դատական գործի ժամանակ այս Պայմանագրի սահմաններում Ապահովագրվողը պետք է ապացուցի, որ իր կրած վնասը կամ կորուստը այս բացառությունների թվին չի պատկանում:

8. Հետևյալ ուղղակի կամ անուղղակի պատճառներից ի հայտ եկած ցանկացած սեփականության կորուստը կամ վնասումը կամ դրանցից առաջ եկած ծախսերը՝

(a) ճառագայթումների իոնացումից, կամ ցանկացած միջուկային վառելիքի ռադիոակտիվության պատճառած աղտոտումից կամ միջուկային վառելիքի այրումից առաջ եկած միջուկային թափոնից, կամ

(b) Ցանկացած պայթուցիկ միջուկային նյութերի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր տարրերից կամ էլ դրանց միջուկային բաղադրիչներից:

9. Կորուստ սպառնանքի արդյունքում

(a) մարմնական վնաս հասցնել ցանկացած մարդու, բացառությամբ որպես իրավասու հանդես եկող անձի կողմից տեղափոխման ընթացքի մեջ գտնվող էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների կամ էլեկտրոնային Տվյալների կորստի, եթե միայն նման տեղափոխում կատարելիս Ապահովագրվողը որևէ սպառնանքի մասին տեղյակ չի եղել, կամ

(b) վնաս հասցնել Ապահովագրվողի շենքերին կամ սեփականությանը:

10. էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների կամ էլեկտրոնային Տվյալների կորուստը՝ փոստում կամ այլ վարձու առաքիչի, բայց ոչ զրահապատ մեքենաներ կիրառող ընկերության մոտ գտնվելու ժամանակ:

11. էլեկտրոնային Տվյալների, էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների կամ էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի կորուստը բացառությամբ Ընդհանուր Պայման 11-ում նկարագրվածի:

12. Կորուստ, որի ուղղակի կամ անուղղակի պատճառն է՝

(a) գրավոր հրահանգները կամ խորհրդատվությունը, կամ

(b) հեռագրային կամ կաբելային հրահանգները կամ խորհրդատվությունը, կամ

(c) Հեռախոսի միջոցով ձայնով գործարկվող հրահանգները կամ խորհրդատվությունը, եթե միայն նման հրահանգները բնութագրված չեն Ապահովագրական Հոդված 8-ում, կամ

(d) ֆաքսով հրահանգները կամ խորհրդատվությունը, եթե միայն հիշյալ հրահանգները կամ խորհրդատվությունը բնութագրված չեն Ապահովագրական Հոդված 5-ում, 6-ում, 7-ում:

13. էլեկտրոնային Տվյալների պատրաստման համար որպես ռեսուրսային թղթաբանություն ծառայող կեղծ կամ փոփոխված բանակցելի գործիքների, արժեթղթերի, փաստաթղթերի կամ գրավոր հրահանգների ուղղակի կամ անուղղակի արդյունքում ի հայտ եկած կորուստը:

14. Ըստ ներկայացնողի գործիքների, արժեթղթերի, փաստաթղթերի կամ գրավոր հրահանգների կորուստը բացի էլեկտրոնային Տվյալների վերափոխվածների այնուհետև միայն այդ վերափոխված ձևով օգտագործվողների:

15. Ցանկացած գաղտնի ինֆորմացիայի բացահայտումից առաջ եկած ուղղակի կամ անուղղակի կորուստը ներառյալ առևտրային գաղտնի ինֆորմացիան, համակարգչային ծրագրերը կամ հաճախորդին վերաբերող ինֆորմացիան, եթե այդ ինֆորմացիան չի կիրառվում որևէ խարդախ արարքի նպատակով, որը հիմք է հանդիսանում այս Պայմանագրով սահմանված ուղղակի ֆինանսական կորստի համար:

16. Տեխնիկական խափանման, սխալ կառուցման կամ նախագծման, դեֆեկտի, մաշվածության, էլեկտրական անսարքության, էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների խափանման, ծրագրավորման ընթացքում ծագած սխալմունքների ուղղակի կամ անուղղակի արդյունում առաջ եկած կորուստը:

17. էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի սխալ պատրաստման և ձևափոխման, ոչնչացման կամ փոփոխման ուղղակի կամ անուղղակի արդյունքում ծագած կորուստը, եթե միայն այն բնութագրված չէ Ապահովագրական Հոդված 2-ում 3-ում, 4-ում:

18. էլեկտրոնային Գումարների Փոխանցման Համակարգի կամ Հաճախորդի Հաղորդակցության Համակարգի լիազորված էլեկտրոնային տերմինալ էլեկտրոնային Տվյալների ներմուծման պատճառով ի հայտ եկած կորուստը, որը կատարվել է հաճախորդի ինքնության հավաստման

մեխանիզմ մուտք ունեցող մարդու կողմից:

19. էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերում առկա անօրինական բաղադրիչ մասերի պատճառած կորուստը, որոնք մշակվել են վաճառքի համար կամ արդեն վաճառվել են բազմաթիվ հաճախորդներին վաճառողից կամ խորհրդատուից դրանց ձեռք բերման ժամանակ: Սակայն նշվում է նաև, որ այս բացառությունը չի գործի, եթե

i) նշված էլեկտրոնային համակարգչային ծրագրերի ոչ մի գնորդ չի հայտնաբերել նման անօրինական բաղադրիչի հետևանքով ծագած ապահովագրված կորուստ՝ Ապահովագրվողի կողմից այդ կորստի հայտնաբերումից հետո 60 օրվա ընթացքում, կամ

ii) կորստի դեպքում նման անօրինական բաղադրիչները պարունակվում են միայն Ապահովագրվողի էլեկտրոնային համակարգչային ծրագրերում և առկա չեն այլ հաճախորդների վաճառված էլեկտրոնային համակարգչային ծրագրերում կամ որոնց անօրինական բաղադրիչները ներմուծվել են էլեկտրոնային համակարգչային ծրագրերի ձեռքբերումից հետո:

20. Համակարգչային Վիրուսների անուղղակի կամ ուղղակի արդյունքում ի հայտ եկած կորուստը, եթե միայն այն բնութագրված չէ Ապահովագրական Հոդված 4-ում:

21. Ցանկացած տեսակի կորուստ, որ

(a) տեղի է ունեցել նախքան Ռետրոակտիվ Ամսաթիվը կամ ցանկացած տեսակի կորուստ, որն իր մեջ ներառում է գործողություն, գործարք կամ իրադարձություն, որ տեղի են ունեցել կամ սկսվել են նախքան Ռետրոակտիվ Ամսաթիվը, կամ

(b) հայտնաբերվել է Ծրագրի մեջ նշված Պայմանագրի գործողության Ժամկետի մեկնարկման ամսաթվից առաջ, կամ

(c) հայտնաբերվել է Պայմանագրի ավարտից հետո, կամ

(d) կորուստ, որի մասին հայտարարվել է նախկին ապահովագրողին:

22. Հեռախոսային Բանկային Համակարգից, սեփական մասնաճյուղային փոխանակման լիազորված կամ չլիազորված գործածումից, ձայնային նամակների մշակումից, ավտոմատացված զանգային սպասարկումից, ձայնային հաղորդակցությունների ցանցում կամ բջջային հեռախոսների համակարգում հեռախոսային զանգերի ուղղության կամ ընթացքի համար կիրառվող նմանատիպ ունակություններով օժտված համակարգչային համակարգից ծագած ուղղակի կամ անուղղակի կորուստը, եթե միայն այդ կորուստը բնութագրված չէ Ապահովագրական Հոդված 1 (c)-ում:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԼՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրոնային և Համակարգչային Հանցագործության Պայմանագիրը համարվում է Ապահովագրվողի Ֆինանսական Կազմակերպության Պարտավորվածության լրացման պայմանագիր և տրամադրում է համակարգչային հարակից հանցագործությունների ապահովագրություն, ինչպես սահմանված է Ապահովագրական Հոդվածներում, որը չի ապահովագրվում Ապահովագրվողի Ֆինանսական Կազմակերպության Պարտավորվածության ապահովագրության պայմանագրում: Քանի որ, այն Ապահովագրողները, ովքեր ապահովագրել են Lloyd's էլեկտրոնային և Համակարգչային Հանցագործության Պայմանագրով, կարող են նաև ապահովագրել Ապահովագրվողի Ֆինանսական Կազմակերպության Պարտավորվածության ապահովագրության հիմնական պայմանագրով կամ հավելյալ ապահովագրությամբ կամ վերաապահովագրությամբ և քանի որ, նրանք մտադրված չեն ավելացնել կամ կրկնապատկել իրենց ապահովագրական ծածկույթը, այս Պայմանագիրը պետք է դիտվի որպես հավելյալ կամ համատեղ ապահովագրության ծածկույթ:

2. ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Այն առաջադրված անձի կրած կորուստը, որը նշանակվել է Ապահովագրվողի կողմից որոշակի գործարքներ վարելու նպատակով և ընտրվել է բացառապես իր պաշտոնյաներից ու այլ աշխատակիցներից՝ կդիտվի որպես Ապահովագրվողի կողմից կրած կորուստ համաձայն այս Պայմանագրի բոլոր պայմաններին:

3. ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ, ՀԱՄԽՄԲՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԲԻԶՆԵՍԻ ԳՆՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼ ԲԻԶՆԵՍԻՆ ՄԻԱՁՈՒԼՈՒՄԸ

Եթե Ապահովագրվողը Պայմանագրի գործողության Ժամկետում ստեղծի նոր մասնաճյուղային

գրասենյակներ, կամ լրացնի Ապահովագրվողի համակարգչային համակարգը, բայց ոչ համախմբմամբ, գնի կամ այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա նման մասնաճյուղային գրասենյակները կամ լրացված Ապահովագրվողի համակարգչային համակարգերը ավտոմատ կերպով անմիջապես կապահովագրվի դրանց հաստատման օրվանից առանց Ապահովագրողին ներկայացվելիք ծանուցման կամ Պայմանագրի գործողության ժամկետի մնացորդի համար հավելյալ վճարի:

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը Պայմանագրի գործողության ժամկետում միանա կամ համախմբվի, գնի կամ այլ կերպ ձեռք բերի այլ բիզնեսին պատկանող ակտիվներ, ապա սույն Պայմանագրով կորուստը չի ապահովագրվի հետևյալ դեպքերում՝

(a) եթե, դա պատահել է, կամ կարող է հետագայում պատահել ցանկացած գրասենյակում կամ շենքում, կամ

(b) եթե ծագել է կամ կարող է ծագել Ապահովագրվողի կողմից միաձուլման, համախմբման կամ գնման արդյունքում ձեռք բերված ակտիվներից, պարտավորություններից կամ նման այլ երևույթներից, եթե միայն Ապահովագրվողը

(i) նախքան ուժի մեջ մտնելը Ապահովագրողին չներկայացնի նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման վերաբերյալ գրավոր ծանուցագիր, և

(ii) չապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և

(iii) ձեռք չբերի Ապահովագրողի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված նման միաձուլման, համխմբման, գնման կամ ձեռք բերման ծածկույթը երկարաձգելու համար, և

(iv) Ապահովագրողին չներկայացնի գրավոր ծանուցում ծածկույթի պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, որը միանգամայն տրամաբանական է նման միաձուլման, համախմբման, գնման կամ ձեռք բերման համար, և

(v) չվճարի Ապահովագրողին որևէ հավելավճար:

Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (i) –ի կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (iv) –ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:

Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Ապահովագրողին չի լինի լիարժեք, եթե չգրվի Ապահովագրվողի կողմից և չճանաչվի Ապահովագրողի կողմից:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

(a) Լուծարում և այլն

Ապահովագրվողի ինքնակամ կամ հարկադրական լուծարման, Իրավահաջորդի կամ Կառավարչի նշանակման, կամ որևէ Լուծարային Գործընթաց կամ պարտատերերի հետ համաձայնություն սկսելու դեպքում, կամ եթե Ապահովագրվողի նկատմամբ վերահսկողությունը ստանձնվի որևէ Կառավարության կամ Կառավարական մարմնի կամ գերատեսչության կողմից, սույն Պայմանագիրն անմիջապես կդադարի որևէ ծածկույթ ապահովել որևէ տեսակի կորստի համար, որը համապատասխանաբար հայտնաբերվել և ծանուցվել է Ապահովագրողին:

Ինչպես վերևում է նշված, Հարցաթերթիկում կամ Օրագրում նշված Ապահովագրվողի դուստր-ձեռնարկության լուծարման և այլնի դեպքում, այս Պայմանագիրը միանգամից կդադարի հետագայում հայտնաբերված և Ապահովագրողի ուշադրությանը ներկայացվող վերոհիշյալ կազմակերպության հետ որևէ կերպ առնչվող ցանկացած տեսակի կորստի ապահովագրումը:

(b) Ակտիվների Փոխանակում կամ Բաժնետոմսերի Սեփականություն

Ապահովագրվողը պետք է միանգամից ծանուցի Ապահովագրողին այլ բիզնեսի հետ միաձուլման կամ համախմբման, գնման, փոխանցման, գրավի, ակտիվների կամ բաժնետոմսերի այն վաճառքի մասին, որոնք սեփականության կամ վերահսկման մեջ փոփոխության պատճառ կարող են դառնալ: Ինչպես կիրառվում է այս Ընդհանուր Պայմանի մեջ, վերահսկում նշանակում է քվեարկող բաժնետոմսերի սեփականությամբ Ապահովագրվողի ղեկավարությունը կամ քաղաքականությունը որոշելու

լիազորությունը: Քվեարկող բաժնետոմսերի սեփականության մեջ առկա որևէ փոփոխություն, որը բաժնետիրոջը կամ բաժնետերերի փոխկապակցված խմբին այս բաժնետոմսերի տաս (10%) կամ ավել տոկոսի ուղղակի կամ անուղղակի սեփականատեր է դարձնում, կարելի է պահանջված ծանուցման իմաստով վերահսկման փոփոխություն համարել:

Որպես սույն Պայմանագրի շարունակության պայման, Ապահովագրվողը պետք է

(i) տվյալ օրվանից հաշված երեսուն օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր, և

(ii) ապահովի Ապահովագրողին անհրաժեշտ լիարժեք ինֆորմացիայով, և

(iii) ձեռք բերի Ապահովագրողիի գրավոր համաձայնությունը այս Պայմանագրով ապահովված որոշ կամ բոլոր ծածկույթները շարունակելու համար, և

(iv) 10 (տաս) օրերի ընթացքում Ապահովագրողին ներկայացնի գրավոր ծանուցագիր Ապահովագրողի կողմից ներկայացվող նման փոփոխության համար պահանջների պայմաններին համաձայն լինելու վերաբերյալ, և

(v) վճարի Ապահովագրողին որևէ հավելավճար:

Եթե Ապահովագրողին ծանուցագիր չի ներկայացվում համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (i) –ի, կամ Ապահովագրվողը չի հայտնում իր համաձայնությունը Ապահովագրողին համաձայն վերոհիշյալ պարբերություն (b) (iv) –ի, ապա դա կարող է Ապահովագրվողի ծածկույթը չշարունակելու հիմք հանդիսանալ:

Սույնով պահանջվող ծանուցագրի ներկայացումը Անդերրայթերներին չէր լինի լիարժեք, եթե չգրվեր Ապահովագրյալի կողմից և չճանաչվեր Ապահովագրողի կողմից:

5. ՀԱՄԱՏԵՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ

(a) Եթե երկու կամ ավելի Ապահովագրվողներ են ապահովագրվում սույն Պայմանագրի ներքո, ապա առաջինը նշված Ապահովագրվողը հանդես է գալիս բոլոր ապահովագրվողների անունից: Որևէ Ապահովագրվողի կրած կորստի համար Ապահովագրողի վճարումը առաջին Ապահովագրվողին լիովին ազատում է Ապահովագրողին տվյալ կորստի գծով պարտավորությունից: Եթե առաջին Ապահովագրվողը դադարում է ապահովագրվել սույն Պայմանագրի ներքո, ապա առաջին Ապահովագրվող է համարվում նրան հաջորդող Ապահովագրվողը:

(b) Որևէ մեկ Ապահովագրվողի ունեցած ինֆորմացիան կամ նրա կողմից կատարված որևէ հայտնաբերում համարվում է բոլոր Ապահովագրվողների ունեցած ինֆորմացիան կամ հայտնաբերումը:

(c) Բոլոր Ապահովագրվողների կրած կորստի կամ կորուստների հանդեպ Ապահովագրողի ունեցած պարտավորությունները չպետք է գերազանցեն այն գումարի չափը, որի համար Ապահովագրողը պատասխանատվություն է կրում, եթե նման կորուստ կամ կորուստներ կրել է միայն մեկ Ապահովագրվողը:

(d) Ապահովագրողը պատասխանատու չէ մի Ապահովագրվողի կողմից կրած կորստի համար հանուն մեկ այլ Ապահովագրվողի շահի:

(e) Որոշված է, որ սույնով շնորհված Ապահովագրությունը բացառապես կգործի հանուն առաջին Ապահովագրվողի շահերի, և բացի վերոհիշյալ Ապահովագրվողից ոչ ոք իրավունք չի ունենա գործել սույն Պայմանագրի սահմաններում:

6. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Ապահովագրողը կհատուցի Ապահովագրվողին նրա կողմից կատարած խելամիտ վճարները կամ ծախսերը, որոնք նախապես համաձայնեցվում են Ապահովագրողի հետ, Ապահովագրվողի դեմ սկսված դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար, համաձայն որի Ապահովագրվողը հաստատում է, որ տեղի ունեցած գործողությունը կամ գործողությունները, իրադարձությունը կամ իրադարձությունները նրան սույն Պայմանագրով հատուցում ստանալու

իրավունք կտան: Դատական գործի կամ դատական այլ գործընթացի պաշտպանության համար:

Ապահովագրողի կողմից կատարված իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ենթարկվում են Ընդհանուր Պայման 8-ին Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցմանը:

Ապահովագրվողը պետք է Ապահովագրողներին տրամադրի վերոհիշյալ դատական գործի կամ դատական այլ գործընթացի սկսող կազմակերպության ծանուցագիրը և Ապահովագրողի պահանջով նրան ներկայացնի բոլոր դիմումների պատճենները և դրանց հետ առնչվող այլ փաստաթղթերը:

Եթե դատական գործի կամ դատական այլ գործընթացի ընթացքում գործողության բազմաթիվ պատճառներ են կասկածի տեղիք տալիս և օգտագործվում են Ապահովագրվողի դեմ, ապա սույն Պայմանգրով դրանք հավաքական կորուստ չեն համարվում: Այն իր մեջ ներառում է պատժիչ, հետևանք հանդիսացող կամ այլ չհատուցվող վնասները: Ապահովագրվողն իր սեփական միջոցներով պետք է կատարի նման գործողության կասկածելի պատճառների պաշտպանության համար գանձվող իրավական վճարները և իրավական ծախսերը:

Եթե Ապահովագրվողի կրած կորստի գումարի չափը գերազանցում է սույն Պայմանագրով հատուցվող գումարի չափին, կամ եթե կարելի է կիրառել Ֆրանշիզա, ուրեմն համաձայն Ընդհանուր Պայմանների առաջին բաժնի Ապահովագրողի պարտավորությունները սահմանափակվում են Ապահովագրվողի կողմից կատարված իրավական վճարների կամ իրավական ծախսերի համաձայն կամ Ապահովագրողի կողմից, ըստ որի սույն Պայմանագրով հատուցվող գումարը հավասարազոր է այդ գումարի չափին՝ գումարած չհատուցվող գումարը: Նման կերպ բաշխված գումարը կիրառվում է Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- սահմանի նվազեցման համար:

Ապահովագրողը իրավասու չէ ապահովագրելու Ապահովագրվողին իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի դիմաց նախքան դատական գործի կամ այլ դատական գործընթացի ավարտը:

Ապահովագրողը պարտավորված չէ իրականացնել սույն Ընդհանուր Պայմանի առաջին բաժնում նշված այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը: Ապահովագրողի ընտրության ժամանակ Ապահովագրվողը թույլ է տալիս նրանց իր անունից կատարելու այս կամ այն դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը՝ Ապահովագրողի կողմից ներկայացվող իրավական ներկայացուցիչի միջոցով: Ապահովագրվողը Ապահովագրողին պետք է տրամադրի դատական գործընթացի պաշտպանության համար անհրաժեշտ ինֆորմացիա:

Դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանության համար Ապահովագրյալի կողմից վճարվող իրավական վճարները կամ իրավական ծախսերը կիրառվում են Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի և գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա- Սահմանի նվազեցման համար:

Եթե Ապահովագրվողը նախընտրում է, որ իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը կատարի Ապահովագրողը նման իրավաբանական վճարների կամ իրավաբանական ծախսերի իրենց համամասնական չափը գերազանցելով, ապա Ապահովագրվողը պետք է հատուցի ավելացած գումարը:

Ապահովագրվողը չպետք է հրաժարվի Ապահովագրողի կողմից իրականացված դատական գործի կամ այլ դատական գործընթացի կարգավորումից:

7. ԿՈՐՈՒՍՏԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Որպես սույն Պայմանագրով հատուցելու պայման, Ապահովագրվողը պետք է կորուստի հայտնաբերումից հետո, 30 օրերի ընթացքում, դրա մասին տեղյակ պահի Ապահովագրողին:

Համաձայն սույն Պայմանագրի, կորուստը համարվում է հայտնաբերված այն ժամանակ, երբ Ապահովագրվողը առաջին անգամ տեղեկացվում է այն փաստերի մասին, որոնք կարող են խելամիտ անձին ստիպել մտածելու, որ այս Պայմանագրով ապահովագրված այս կամ այն տեսակի կորուստը արդեն պատահել կամ դեռ պատահելու է՝ հաշվի չառնելով, թե դրան հանգեցնող գործողությունները, գործարքները կամ իրադարձությունները երբ են տեղի ունեցել, ինչպես նաև հաշվի չառնելով այն, թե արդյոք Ապահովագրվողի այդ պահի տեղեկացվածությունը բավարար է ապացուցելու համար, որ

նման տեսակի կորուստը համապատասխանում է սույն Պայմանագրի պայմաններին, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:

Կորուստը նաև համարվում է հայտնաբերված, երբ Ապահովագրվողը ստանում է փաստացի կամ պոտենցիալ հայցի ծանուցագիր, որում ենթադրվում է, որ նա պատասխանատվություն է կրում ինչ-որ երրորդ կողմի հանդեպ, որը, ճշմարտացի լինելու դեպքում, կարող է սույն Պայմանագրով ապահովագրված կորուստ համարվել, եթե նույնիսկ կորուստի գումարի չափը կամ այլ մանրամասներ այդ պահին առկա չլինեն:

Ապահովագրվողի կողմից հայտնաբերված բոլոր տեսակի կորուստները, որոնք հանդիսանում են մեկ անձի անուշադրության արդյունք կամ, եթե տվյալ անձը ներգրավված է այդ կորուստի մեջ անկախ նրա Աշխատակից լինել կամ չլինելուց, կհամարվեն որպես մեկ կորուստ:

8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԸ

(a) Ապահովագրողի ամբողջական պարտավորությունը սույն Պայմանագրի Օրագրի 4 կետում նշված Պայմանագրի գործողության ժամկետում հայտնաբերված կորուստի կամ կորուստների համար, իրավաբանական վճարները և իրավաբանական ծախսերը ներառյալ, սահմանափակվում է սույն Պայմանագրի Օրագրի 6 կետում նշված Համընդհանուր Սահմանաչափով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից: Ցանկացած գործող Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահման համարվում է Համընդհանուր Սահմանաչափի մաս, այլ ոչ թե լրացում, իսկ բոլոր տեսակի կորուստների, ինչպես նաև իրավական վճարների կամ իրավական ծախսերի հանդեպ ունեցած Ապահովագրողի ընդհանուր պարտավորությունները, որոնք վերաբերվում են ցանկացած նմանատիպ Ենթա-Սահման ունեցող Ապահովագրական Հոդվածին, սահմանափակվում են Ենթա-Սահմանի գումարով՝ անկախ նման կորուստի կամ կորուստների գումարի չափից:

Համընդհանուր Սահմանաչափը նվազում է սույն Պայմանագրի համաձայն վճարված գումարներր չափով: Նման վճարումների արդյունքում սպառված Համընդհանուր Սահմանաչափի հետևանքով Ապահովագրողը այլևս պատասխանատու չի լինի

(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն հատուցել Ապահովագրվողին կորուստի կամ կորուստների դիմաց, և

(ii) հատուցել Ապահովագրվողին իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի դիմաց, և

(iii) շարունակել Ապահովագրվողի պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրողը դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:

(b) Ի լրումն նվազեցված Համընդհանուր Սահմանաչափին, Օրագրի 6 կետում նշված գործող Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների Ենթա-Սահմանը կնվազի վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի հետ առնչվող վճարման գումարի չափով: Նման վճարումների արդյունքում վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի Ենթա-Սահմանի սպառման պատճառով Ապահովագրողը այլևս պատասխանատվություն չի ունենա:

(i) սույն Պայմանագրի Ապահովագրական Հոդվածի կամ Հոդվածների համաձայն Ապահովագրողին հատուցել կորուստը կամ կորուստները, և

(ii) հատուցել Ապահովագրողին իրավաբանական վճարները կամ իրավաբանական ծախսերը, որ կատարվել են կապված վերոհիշյալ կորուստի (կորուստների), կամ վերոհիշյալ Ապահովագրական Հոդվածի (Հոդվածների) հետ:

(iii) շարունակել Ապահովագրվողի պաշտպանությունը այն դեպքում, երբ Ապահովագրող դատական գործի կամ այլ դատական գործընթացի պաշտպանությունը իրականացնելու ցանկություն հայտնի: Ապահովագրողի կողմից ներկայացված Համընդհանուր Սահմանաչափի սպառման վերաբերյալ ծանուցագրի համաձայն, Ապահովագրվողը պետք է իր վրա վերցնի դրա պաշտպանության պատասխանատվությունը:

Եթե սույն Պայմանագրին համաձայն կատարված վճարումների պատճառով Համընդհանուր Սահմանաչափը սույն Պայմանագրի Ծրագրի 6 կետում ցանկացած Ենթա-Սահմանի համար նշված գումարի չափից էլ է պակասում, ապա ցանկացած Ենթա-Սահմանի գումարը համապատասխանաբար կնվազի, այնպես, որ կորուստի /կորուստների/, ինչպես նաև իրավաբանական վճարների և իրավաբանական ծախսերի համար անհրաժեշտ ցանկացած Ենթա-Սահմանի գումարը չի գերազանցի Համընդհանուր Սահմանաչափի պակասեցված գումարի չափը:

Համընդհանուր Սահմանաչափը և որևէ Ենթա-Սահման լիովին կամ մասնակի չեն վերականգնվի սույն Պայմանագրի համաձայն կատարված վճարմանը հաջորդող փոխհատուցմամբ, եթե միայն նման փոխհատուցումը փաստացիորեն չստացվի Ապահովագրողի կողմից Ծրագրի 4 կետում նշված ժամանակահատվածում կամ էլ դրան հաջորդող տասներկու /12 / օրացուցային ամիսների ընթացքում:

Եթե կորուստը ենթակա է հատուցման մեկից ավելի Ապահովագրական Հոդվածներով, ապա կորստին համապատասխան վճարվելիք առավելագույն գումարը չի գերազանցի ամենամեծ գումար ունեցող Ապահովագրական Հոդվածի չափին:

(c) Կորած Արժեթղթեր: Այն դեպքում, երբ արժեթղթի կորուստը փոխարինվում է կորած արժեթղթերի մուրհակի գործածմամբ կամ Ընդհանուր Պայման 14 կետի հատուցման համաձայնագրով, նման կորուստը չի նվազեցնի Համընդհանուր Սահմանաչափը կամ որևէ Ենթա-Սահման, որոնք պահպանվում են կորուստի կամ կորուստների վճարման համար, եթե Պայմանագրի գործողության ժամկետում Ապահովագրողին չեն դիմում վճարում կատարել համաձայն կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման պայմանագրի: Այնուամենայնիվ, նման կորստի համար կամ կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագի համաձայն Ապահովագրողի կատարած վճարումը կդիտվի որպես սույն Պայմանագրով կատարված վճարում:

Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը չի ազդի Ապահովագրողի պարտավորությունների վրա՝ կապված կորած արժեթղթերի մուրհակի կամ հատուցման համաձայնագրի հետ, որոնք թողարկվել են նախքան Համընդհանուր Սահմանաչափի կամ Ենթա-Սահմանի սպառումը կամ նվազումը:

9. ԿՈՐՈՒՍՏԻ ԱՊԱՑՈՒՅՑ

Կորուստի հայտնաբերումից հետո վեց ամիսների ընթացքում, Ապահովագրվողը պետք է Ապահովագրողին գրավոր ներկայացնի կորուստի ապացույց, որը պատշաճ կերպով կազմում է Ապահովագրվողի գլխավոր ֆինանսական պաշտոնյան՝ բոլոր տվյալների հետ մեկտեղ:

Ապացույցի պատասխանատվությունը ընկնում է Ապահովագրվողի վրա, նա պետք է պատրաստի այն կորուստի բոլոր ապացույցները, որի համար Ապահովագրական Հոդվածի համաձայն հայց է ներկայացվում, ապացուցելու համար, որ նման կորուստ տեղի է ունեցել ապահովագրված ռիսկի, այլ ոչ թե տնտեսական պայմանների կամ այլ պատճառների արդյունքում:

10. ԿՈՐՈՒՍՏԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Եթե Ապահովագրողը ստուգումն ավարտելուց հետո Ապահովագրվողին չի վճարում այն կորուստի դիմաց, որը վերջինիս կարծիքով պետք է հատուցվեր սույն Պայմանագրի պայմանների և այլ դրույթների համաձայն, ապա Ապահովագրվողի պահանջով Ապահովագրողը կարող է ենթարկվել ցանկացած իրավասու հայկական դատարանի որոշմանը:

Ցանկացած նմանատիպ դատական գործընթացների դատական ծանուցում կատարվում է Ծրագրում նշված անձանց միջոցով, ովքեր օրենքով սահմանված կարգով իրավասու են Ապահովագրողի անունից ընդունելու դատական ծանուցումը: Ապահովագրողներ դեմ սկսված նմանատիպ դատական գործընթացների ժամանակ, մյուս Ապահովագրողները ստիպված կլինեն հաշտվել Դատարանի վերջնական որոշման, իսկ բողոքարկման դեպքում՝ Վճռաբեկ Դատարանի վերջնական որոշման հետ:

Եթե Ապահովագրվողը երեք ամիսների ընթացքում չներկայացնի կորուստի ապացույցը, ինչպես նշված է Ընդհանուր Պայման 9-ում, ապա կորուստի հատուցման դատական գործընթացները համաձայն սույնի չեն սկսվի: Դատական գործընթացը չի սկսվի նաև նման կորուստի հայտնաբերումից հետո երկու տարին լրանալու դեպքում:

Եթե վերոհիշյալ երկու տարիների սահմանափակման ժամանակահատվածը արգելված է սույն

Պայմանագրի կազմումը ղեկավարող օրենքով, ապա նման սահմանափակումը ենթարկվում է փոփոխման, այնպես որ համապատասխանի տվյալ օրենքով թույլատրվող նվազագույն ժամանակահատվածին:

11. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

(a) Հաշվարկում
Որևէ կորստի դիմաց սույն Պայմանագրի համաձայն վճարվելիք գումարը որոշելիս, ցանկացած տվյալ կորստի պատճառը հանդիսացած աղբյուրին առնչվողից ստացված ամբողջ գումարը, ներառյալ մայր գումարի, տոկոսների, շահաբաժինների, կոմիսիոն վճարների, և այլնի վճարումը կամ ստացումը, երբ էլ ստացված լինի, պետք է նվազեցվի փաստացի վճարված, կանխավճարված, վերցված կամ այլ կերպ կորսված գումարից: Ցանկացած աղբյուրից ստացված այն գույքի արժեքը, որը ստացվել է տվյալ կորստի պատճառը հանդիսացած որևէ խնդրի առնչությամբ, երբ էլ ստացված լինի, պետք է նմանապես նվազեցվի Ապահովագրվողի կողմից հայցվող կորստից:

(b) Գումարներ
Այն կորուստների չափը, որոնք արտահայտված են արտարժույթով, որոշվում է համաձայն կորուստի հայտնաբերմանը նախորդող աշխատանքային օրվա շուկայական փոխարժեքով: Եթե այդ օրվա շուկայական գները կամ արժեքները հայտնի չեն, ապա դրանք համաձայնեցվում են կամ Ապահովագրվողի և Ապահովագրողի միջև կամ էլ դատարանի միջոցով:

(c) Չհատուցվող գումար
Եթե սույն Պայմանագիրը ենթակա է Ֆրանշիզայի, կամ եթե Ծրագրի Կետ 6-ի այն Պայնանագրի Համընդհանուր Սահմանաչափը, որը մնացել է որևէ կորստի կամ կորուստների հատուցման համար, իր գումարով բավարար չէ Ապահովագրվողին լրիվ հատուցելու այն արժեքդեթերի կորստի համար, որոնց համար ըստ սույնի հայց է ներկայացվել, ապա սույն Պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվությունը սահմանափակվում է փոխհատուցմամբ կամ կրկնօրինակմամբ՝ նման արժեքդեթերի այնքան մասի, որքանը որ ունի սույն Պայմանագրի կիրառելի Ապահովագրական Հոդվածով նախատեսված ստացվելիք գումարին հավասար արժեք:

(d) Կորած Արժեքդեթեր
Արժեքդեթերի սույն Պայմանագրով ծածկված կորստին առնչվող հայցի դեպքում, Ապահովագրվողը, համաձայն ստորև նշված պայմանների, պետք է նախ փորձի փոխարինել կորսված արժեքդեթերն իր կողմից տրված հատուցման նամակի միջոցով: Եթե նա ի վիճակի չէ այդ անել, ապա, Ապահովագրողի նախօրոք համաձայնությամբ, պետք է ապահովի կորած արժեքդեթերի մուրհակ՝ կրկնօրինակ արժեքդեթերի թողարկման հնարավորություն ստանալու համար:

(e) Էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցներ
Իր գործունեության ընթացքում Ապահովագրվողի կողմից շահագործվող էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների կորստի կամ վնասման դեպքում, սույն Պայմանագրի համաձայն, Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն երբ դրանք փաստացիորեն առաջանում են նմանատիպ կամ նման որակի այլ էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների վերարտադրման համար, ինչպես նաև դատարկ միջոցների և կրկնօրինակման համար կատարվող աշխատանքի համար, որոնք ներկայացվում են Ապահովագրվողի կողմից նորից նման էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցներ ստեղծելու նպատակով, որն, անկասկած, ենթակա է կիրառվող Պատասխանատվության Սահմանաչափին:

(f) Այլ Սեփականություն
Ցանկացած սեփականության կորստի կամ վնասի դեպքում, բայց ոչ արտարժույթի, արժեքդեթերի կամ էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների, Ապահովագրողը պատասխանատու է միայն սեփականության փաստացի դրամական արժեքի համար: Ապահովագրողը, իր ընտրությամբ, կարող են վճարել սեփականության արժեքը, փոխարինել կամ պարզապես վերանորոգել այն: Ապահովագրողի և Ապահովագրվողի միջև ծագած տարաձայնությունները հատուցման ձևի վերաբերյալ, լուծվում են դատարանով:

(g) էլեկտրոնային Տվյալներ/էլեկտրոնային Համակարգչային Ծրագրեր
Ապահովագրվողի կողմից շահագործվող էլեկտրոնային Տվյալների կամ էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի կորստի դեպքում, սույն Պայմանագրի համաձայն, Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն երբ դրանք փաստացիորեն վերարտադրվում են նմանատիպ կամ նման որակի այլ էլեկտրոնային Տվյալներով կամ էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերով, ինչպես նաև Ապահովագրվողի կողմից ստեղծված էլեկտրոնային Տվյալների կամ էլեկտրոնային Համակարգչային Ծրագրերի կազմման կամ կրկնօրինակման համար կատարվող աշխատանքի համար, որն, անկասկած, ենթակա է կիրառվող Պատասխանատվության Սահմանաչափին:

Ամեն դեպքում, եթե նման էլեկտրոնային Տվյալները անհնար է նորից վերականգնել, և եթե դրանք իրենց մեջ ներառում են արժեթղթեր կամ արժեք ունեցող ֆինանսական գործիքներ, Պարտքի Նշանները ներառյալ, ապա կորուստը կգնահատվի այնպես, ինչպես նկարագրված է այս բաժնի Արժեթղթեր և Այլ Սեփականություն պարբերություններում:

12. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որպես սույն Պայմանագրով ապահովագրվելու նախապայման, Ապահովագրվողը պետք է Պայմանագրում նշված կորուստներին վերաբերող բոլոր հարցերով համագործակցի Ապահովագրողի և նրանց կողմից նշանակված ներկայացուցիչների հետ: Ապահովագրվողը Ապահովագրողի պահանջով, նշված ժամին ու վայրում պետք է ապահովի գործի հետ առնչվող բոլոր հաշվետվությունները (իր հաշիվների աուդիտորական հաշվետվությունները ներառյալ) , իր Աշխատակիցներից մեկին կամ այլ անձանց պատրաստի հարցազրույցի: Ապահովագրվողը համաձայն է կազմել բոլոր փաստաթղթերը, աջակցել բոլոր իրավունքների, շահերի և հիմքերի պաշտպանությանը, որպիսիք նա կարող է ունենալ անձի կամ կազմակերպության հանդեպ՝ կապված նշված կորուստների հետ, և չիրականացնել ոչինչ, որը կվնասի տվյալ իրավունքներին և հիմքերին:

13. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ, ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՓՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Համաձայնեցվում է, որ Ապահովագրողին, սույնով նախատեսված որևէ կորստի հատուցման պես, կփոխանցվեն նման կորստի առնչությամբ Ապահովագրվողի բոլոր իրավունքները, շահերը և գործողությունների հիմքերը:

Հատուցումից հետո որևէ կորստի վերականգնման դեպքում, վերականգնված գումարը, նվազեցված այդ վերականգնումն իրականացնելու փաստացի ծախսերի չափով՝ բացառությամբ Ապահովագրվողի սեփական աշխատանքների կամ անձնակազմի ծախսերի, պետք է տնօրինվի հետևյալ հաջորդականությամբ.

(a) Ապահովագրվողին լրիվ փոխհատուցելու կորուստի այն մասը՝ եթե առկա է, որը գերազանցում է սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը (անկախ ցանկացած կիրառելի Ֆրանշիզայի գումարից):

(b) Ապահովագրողին փոխհատուցման համար՝ տարբերությունը կամ ամբողջ զուտ վերականգնված գումարը, եթե նման կորստի որևէ մաս չի գերազանցում սույն Պայմանագրով փոխհատուցված կորստի գումարը:

(c) և վերջապես, Ծրագրում նշված Ֆրանշիզայի հետևանքով Ապահովագրվողի կրած նման կորստի այդ մասի և/կամ բացի սույն Պայմանագրից, որևէ այլ պայմանագրով ծածկված նման կորստի այդ մասի համար:

14. ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ընդունված է, որ այն կորուստի դեպքում, որը ծածկվում է նաև այլ ապահովագրությամբ կամ փոխհատուցվում է, սույն Պայմանագիրը, վճարում է միայն այլ ապահովագրության կամ փոխհատուցման կողմից ծածկված գումարները գերազանցող հայցերը (չգերազանցելով Համընդհանուր Սահմանաչափը կամ այլ կիրառվող Ենթա-Սահմանները): Որպես հավելյալ ապահովագրում սույն Պայմանագիրը չի կատարում որևէ կորուստի վճարում, միչև որ այլ ապահովագրման գումարը չսպառվի:

15. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Պայմանագիրը վերաբերվում է այն սեփականության, էլեկտրոնային Տվյալների Մշակման Միջոցների և էլեկտրոնային Տվյալների կորուստին, որոնք պատկանում են Ապահովագրվողին կամ, որոնց համար Ապահովագրվողը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում: Սույն Պայմանագիրը բացառապես կարող է կիրառվել միայն Ծրագրում նշված Ապահովագրվողի շահերի համար:

16. ՖՐԱՆՇԻԶԱՅԻ ԳՈՒՄԱՐ/ ՖՐԱՆՇԻԶԱՅԻ ԿՈՐՈՒՍՏԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ապահովագրողը պատասխանատու է միայն Ծրագրի 7 կետում նշված ֆրանշիզան գերազանցող վնասի համար: Ֆրանշիզան կիրառվում է բոլոր կորուստների դեպքում անկախ Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած կորուստների թվից:

Ապահովագրվողը ժամանակին և Պայմանագրով սահմանված կարգով Ապահովագրողին է ներկայացնում սույն Պայմանագրի պայմաններին համաձայն ապահովագրվող կորուստի ծանուցումը, անկախ նրանից, Ապահովագրողը պատասխանատու է դրանց համար, թե ոչ, և Ապահովագրողի պահանջով կազմում է ամփոփ հաշվետվություն, ուր նշում է տվյալ կորուստին վերաբերող բոլոր մանրամասները:

17. ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պայմանագրի գործողությունը կդադարի անկախ չվաստակած պարգևի վճարվելուց կամ չվճարվելուց,

(a) հենց որ՝

(i) կատարվի Ապահովագրվողի ունեցած վերահսկողության մեջ փոփոխություն հարուցող դեպք՝ ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 4(a)-ում,

(ii) Ապահովագրվողը չտեղեկացնի ակտիվների կամ բաժնետիրական սեփականության փոփոխության մասին, կամ որևէ այլ կերպ խախտի Ընդհանուր Պայման No. 4(b)-ում նշված պայմանները,

(iii) Ապահովագրողը հրաժարվի ապահովագրությունը շարունակելուց՝ սեփականատերերների կամ վերահսկողության փոփոխությունից հետո, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 4(b)-ում,

(b) անմիջապես՝ Ապահովագրվողի ցանկացած դուստր-ձեռնարկության նկատմամբ, եթե վերջինիս հետ կատարվի նրա վերահսկողության կամ սեփականատերերների փոփոխություն, ինչպես նշված է Ընդհանուր Պայման No. 4-ում:

(c) Սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին Ապահովագրողի ծանուցումը Ապահովագրվողի կողմից ստացվելուց երեսուն (30) օր հետո: Եթե ուղարկված է նախավճարված, պատվիրված փոստով և հասցեագրված Ապահովագրվողի Գլխամասի Հասցեին՝ համաձայն Ծրագրում նշվածի, ապա նման ծանուցումը կհամարվի ստացված՝ ուղարկվելուն պես:

(d) անմիջապես՝ սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին իր որոշման մասին Ապահովագրվողի ծանուցումը Ապահովագրողի կողմից ստացվելուն պես:

(e) տեղական ժամանակով կեսօրին՝ Գլխավոր Հասցեում, Ծրագրի Կետ 3-ում նշված ժամկետի լրացման ամսաթվին:

Ապահովագրողը կփոխհատուցի որևէ չվաստակված պարգև, որը կհաշվարկվի Տարեկան Պարգևի կարճաժամկետ տոկոսադրույքով, եթե գործողության դադարեցումը տեղի ունենա ըստ սույն Ընդհանուր Պայմանի (a) կամ (d) պարբերության, սակայն համամասն Տարեկան Պարգևին, եթե դադարեցվի Ապահովագրողի կողմից՝ ըստ սույն Ընդհանուր Պայմանի (c) պարբերության:

Սույն Պայմանագիրը կդադարի գործելուց անմիջապես Պատասխանատվությունից Ազատման Ընդհանուր Սահմանաչափի սպառումից հետո՝ սույնով ծածկված կորուստի մեկ կամ մի քանի վճարումներով, որի դեպքում պարգևը լիովին վաստակված է համարվում:

Սույն Պայմանագիրը գործողությունը Ծառայությունների Բյուրոյի նկատմամբ կդադարի հենց, որ

(a) Ծառայությունների Բյուրոյի որևէ գործընկերոջ, տնօրենի, պաշտոնյայի կամ այլ աշխատակցի հետ հանցավոր համաձայնության մեջ չգտնվող որևէ Ապահովագրվող, տնօրեն կամ պաշտոնյա իմանա՝ վերոհիշյալի կողմից Ապահովագրվողի կամ այլ անձի դեմ իրագործված անազնիվ կամ հանցավոր արարքի մասին, սակայն ոչ ի վնաս որևէ գույքի, որն այդ ժամանակ փոխադրվում է նման անձի վերահսկողությամբ, կամ

(b) Ապահովագրողի կողմից Ապահովագրվողին ներկայացված գրավոր ծանուցումից տասնհինգ օր հետո, ուր նշվում է, որ սույն Պայմանագիրը տվյալ անձի համար դադարում է գործելուց:

Որևէ Ապահովագրվողի նկատմամբ սույն Պայմանագրի դադարեցմամբ դադարում է նաև տվյալ Պայմանագրիի գործողության դադարումից հետո ի հայտ եկած Ապահովագրվողի կողմից կրած կորուստի հանդեպ ունեցած պատասխանատվությունը:

18. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԿԱՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԴԵՄ

Սույն Պայմանագիրը չի ապահովում ծածկույթ՝ հօգուտ որևէ Ծառայությունների Բյուրոյի կամ հաճախորդի, ինչպես նշված է վերը, և նման Ծառայությունների Բյուրոյի՝ առանձին թե մյուսների աջակցությամբ գործող որևէ գործընկերոջ, տնօրենի, պաշտոնյայի կամ աշխատակցի, կամ հաճախորդի որևէ ապօրինի կամ անազնիվ գործողություններից ծագած վնասի առնչությամբ Ապահովագրվողին Ապահովագրողի կողմից վճարում կատարվելուն պես, Ապահովագրվողի այնպիսի իրավունքները և գործողության շարժառիթները, որպիսիք նրանք կարող են ունենալ նման Ծառայությունների Բյուրոյի կամ հաճախորդի նկատմամբ՝ այդ կերպ կատարված գործողություններից ելնելով, նման վճարման չափով Ապահովագրվողը կփոխանցի Ապահովագրողին, կամ վերջինիս կողմից նախատեսված՝ Ապահովագրողներից մեկին, և Ապահովագրվողը կպատրաստի բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են սույնով նախատեսված իրավունքները Ապահովագրողին, կամ վերջինիս կողմից նախատեսված՝ Ապահովագրողներից մեկին վերապահելու համար:

19. ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

Եթե Ապահովագրվողը որևէ հայց ներկայացնի, իրազեկ լինելով, որ այն կեղծ կամ ապօրինի է՝ կապված որևէ գումարի կամ այլ բանի հետ, ապա սույն Պայմանագիրը կկորցնի իր ուժն ու նրա շրջանակներում բոլոր հայցերը կմերժվեն:

20. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Սույն Պայմանագրի դրույթների, բացառությունների, սահմանափակումների և պայմանների ձևակերպումն ու մեկնաբանությունը որոշվում է ըստ հայկական օրենսդրության և համաձայն սույն Պայմանագրում առկա անգլերեն տեքստի:

01/98
LSW983

ԲԱԺԻՆ Գ.
Մասնագիտական Պատասխանատվության Ապահովագրություն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ

Սույն Պայմանագիրը՝ հաշվի առնելով պայմանները, բացառությունները և սահմանափակումները, Ապահովագրվողին է տրամադրում երրորդ անձանց կողմից ներկայացված հայցի գծով երրորդ անձի հանդեպ Ապահովագրվողի պատասխանատվության հատուցում, որը համապատասխանում է հետևյալին.

Երրորդ կողմի ցանկացած հայց պետք է՝

(i) լինի հատուցվելի վնասների համար, նման հատուցումը իր մեջ ներառում է հայցվորի ծախսերը և Ապահովագրվողի պաշտպանության հաստատված ծախսերը, և

(ii) առաջին անգամ ներկայացված լինի Ապահովագրվողի դեմ Պայմանագրի գործողության ժամկետում, և

(iii) լինի Ապահովագրվողի Պաշտոնյայի կամ Աշխատակցի անփութությունից բխող գործողության, սխալի, կամ բացթողման արդյունքում պատճառված ֆինանսական կորստի համար, և

(iv) առաջանա Ապահովագրվողի կողմից իրականացվող, Հարցաթերթիկում բնութագրված, ֆինանսական ծառայությունների սովորական ընթացքում, և

(v) կատարված չլինեն ամբողջովին կամ մասամբ՝ ԱՄՆ-ի և/կամ Կանադայի տարածքում, և

(vi) առաջացած չլինեն որևէ անփութությունից բխող գործողության, սխալի, կամ բացթողման հետևանքով, որը թույլ է տրվել, կամ պնդվում է, որ թույլ է տրվել (ըստ դեպքի) ամբողջովին կամ մասամբ՝ ԱՄՆ-ի և/կամ Կանադայի տարածքում, և

(vii) կապված է այլ պատճառի, բայց ոչ անփութությունից բխող գործողության, սխալի, կամ բացթողման հետ, որը թույլ է տրվել, կամ պնդվում է, որ թույլ է տրվել (ըստ դեպքի) նախքան Ետին ամսաթիվը, որը նշված է Պայմանագրի Ցուցակում:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ

(a) Ապահովագրողի ընդհանուր պարտավորությունը (ներառյալ հայցվորի ծախսերը և Ապահովագրվողի պաշտպանության հաստատված ծախսերը, անկախ Ապահովագրվողի դեմ ներկայացված երրորդ կողմի հայցերի քանակը կամ գումարը) չի գերազանցում Ցուցակում նշված, Պայմանագրի գործողության ժամկետում Ապահովագրվողի դեմ ներկայացված երրորդ կողմի բոլոր հայցերի գումարի չափը:

(b) Ապահովագրողը ցանկացած պահին կարող է Ապահովագրվողին վճարել սույնում նշված որևէ երրորդ կողմի հայցի հետ կապված Հատուցման Սահմանաչափի գումարը, ինչպես ներկայացած է Ցուցակում (մասհանելուց հետո այն գումարը կամ գումարները, որ Ապահովագրողը արդեն վճարել է որպես ծախս կամ հատուցում) կամ կարող է վճարել ավելի փոքր գումար, ըստ որի նման հայցը կամ հայցերը կլուծվեն և նման վճարում կատարելու դեպքում Ապահովագրողը դրանց համար այլևս պատասխանատու չի լինի և կդադարեցնի նման հայցերի ղեկավարումն ու վերահսկողությունը (բացառությամբ սաբռոգացիայի գործողություններից):

(c) Անկախ այն բանից, թե քանի տարի է սույն Պայմանագիրը ուժի մեջ եղել և դեռ լինելու, ինչպես նաև հաշվի չառնելով վճարված և դեռ վճարվելիք պարգևավճարները, Ապահովագրողի գումարային պարտավորությունը տարեց տարի կամ ժամանակ առ ժամանակ չի ավելանա և ոչ մի դեպքում չի գերազանցի Ցուցակում նշված գումարի չափը:

2. ՖՐԱՆՇԻԶԱ

Համաձայն Հատուցման Սահմանաչափի, Ապահովագրողը պատասխանատու է միայն Պայմանագրի գործողության

ժամկետի ընթացքում երրորդ կողմի ցանկացած հայցի համար, ներառյալ երրորդ կողմի հայցի ծախսերը և Ապահովագրվողի պաշտպանության հաստատված ծախսերը, որոնք գերազանցում է Ցուցակում նշված Ֆրանշիզան:
Ֆրանշիզան կիրառվում է բոլոր երրորդ կողմի հայցերի դեպքերում և չի ենթարկվում որևէ ընդհանուր սահմանաչափի:
Եթե երրերդ կողմի հայցերը ծագեն անփութությունից բխող մեկ գործողության, սխալի, կամ բացթողման արդյունքում (կամ դրա հետ որևէ կերպ առնչվող գործողությունների արդյունքում), ապա անկախ հայցերի ընդհանուր թվից, Ֆրանշիզա կիրառելու նպատակով բոլոր նմանատիպ հայցերը կհամարվեն երրորդ կողմի մեկ հայց:

3. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրով երրորդ կողմերի կողմից կատարված վճարումների փոխհատուցումները կատարվում են (առաջին հերթին մասհանվում են նման փոխհատուցում ստանալու համար կատարված ծախսերը) հետևյալ հերթականությամբ՝
(i) Ապահովագրվողին առաջնահերթ փոխհատուցում են այն գումարները, համաձայն որի նրանց իրավական պարտավորությունը գերազանցում է սույն Պայմանագրով ապահովված Հատուցման Սահմանաչափը:
(ii) Այնուհետև Ապահովագրողին կփոխհատուցեն սույն Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորության գումարը:
(iii) Ցանկացած մնացորդային գումար կօգտագործվի սույն Պայմանագրով նախատեսված Ապահովագրվողի Ֆրանշիզայի փոխհատուցման համար:

4. ՍՈՒԲՌՈԳԱՑԻԱ

Ապավովագրողը համաձայն է հրաժարվելու Ապահովագրվողի որևէ Պաշտոնյայի կամ Աշխատակցի հանդեպ ունեցած սաբռոգացիայի իրավունքից բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ Պաշտոնյան կամ Աշխատակիցը ունենում է առանձին համապատասխան ապահովագրություն:

5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(a) Ապահովագրողը պարտավորված չէ վճարելու որևէ պաշտպանական ծախսեր, քանի դեռ չի ստացվել նրա նախնական գրավոր համաձայնությունը, նման համաձայնությունը անհիմն կերպով չի կարող մերժվել:

(b) Համաձայն սույնի Ապահովագրողից չի պահանջվի իրականացնել երրորդ կողմի՝ Ապահովագրվողի դեմ հարուցած հայցի պաշտպանության վարումն ու վերահսկումը, սակայն նրանք իրավունք (բայց ոչ պարտավորվածություն) ունեն ցանկացած պահին իրենց վրա վերցնելու երրորդ կողմի հայցի պաշտպանության կամ փոխհամաձայնեցման վերահսկումը, որը սույն Պայմանագրով պատասխանատվությունից ազատման առարկա է կամ կարող է դառնալ, եթե Ապահովագրողը այդ անելը նպատակահարմար գտնի:
(c) Այն դեպքում, երբ երրորդ կողմի հայցը կամ հայցերը ընկնում են սույնով ապահովված Հատուցման Սահմանաչափի սահմաններում, Ապահովագրողը կարող է բանակցության միջոցով համաձայնության գալ, ներառյալ պարտավորության ընդունումը, եթե Ապահովագրողը դա նպատակահարմար գտնի, իսկ կից ներկայացված Ցուցակում նշված Ֆրանշիզան կկիրառվի ցանկացած նմանատիպ համաձայնության դեպքում, անկախ նրանից, դա կատարվել է Ապահովագրվողի համաձայնությամբ, թե ոչ: Ապահովագրողը, նախքան համաձայնեցումը կամ պարտավորության ընդունումը, պետք է խորհրդակցի Ապահովագրվողի հետ, որը անհիմն կերպով չի մերժի նման համաձայնությունը և/կամ պարտավորության ընդունումը:
(d) Այն դեպքում, երբ Ապահովագրվողը և Ապահովագրողը չեն կարողանում առաջարկված համաձայնության և/կամ պարտավորության ընդունման շուրջ համաձայնության գալ, ապա (երկու կողմերի ընտրությամբ) վիճաբանությունը տեղափոխվում է դատարան:
(e) Եթե Ապահովագրողը նշանակում է ներկայացուցիչ, որպեսզի նա զեկուցի նրանց երրորդ կողմի ցանկացած հայցի մասին, ապա Ապահովագրողի կատարած ծախսերը (ինչպես արդեն նշել ենք պաշտպանական ծախսերը) Հատուցման Սահմանաչափի կամ Ֆրանշիզայի մաս չեն կազմի:

6. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ

Ապահովագրվողն առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության չի ընդունում կամ լուծում որևէ երրորդ կողմի՝ Ապահովագրվողի դեմ կատարված հայց: Չնայած դրան, Ապահիրվագրվողից չի պահանջվում դատարանում բողոքարկել դատական գործընթացները, քանի դեռ Խորհուրդը, որն ընտրված Ապահովագրվողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ, (փոխադարձ համաձայնությամբ ընտրված չլինելու դեպքում վերը նշված 5-րդ Հոդվածում նկարագրված Խորհուրդի ընտրության կարգով) չհայտնի, որ նման դատական գործընթացները պետք է բողոքարկվեն:

7. ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՅՑԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Սույն Պայմանագիրը կիրառվում է միայն երրորդ կողմի այնպիսի հայցերի համար որպեսիք առաջին անգամ են ներկայացվում Ապահովագրվողի դեմ Պայմանագրի գործողության ժամկետում:
Սույն Պայմանագրի սահմաններում, երրորդ կողմի հայցը համարվում է ներկայացված, անմիջապես երբ Ապահովագրյալը
(a) ստանում է գրավոր պահանջ սույն Պայմանագրով ծածկված վնասների համար, ներառյալ իրավաբանական կամ դատական ծառայությունները կամ դատական գործընթացները, կամ
(b) իրազեկ է դառնում որևէ անձի՝ իրենց դեմ նման պահանջ ներկայացնելու մտադրության մասին, կամ
(c) իրազեկ է դառնում որևէ փաստի, հանգամանքի կամ իրադարձության մասին, որը կարող է հետագայում նման պահանջ բարձրացնելու հիմք հանդիսանալ:
Ապահովագրվողը նմանատիպ երրորդ կողմի հայցի գրավոր ծանուցումը պետք է տա հնարավորին չափ վաղ ժամկետում, սակայն դա պետք է կատարվի Ցուցակում նշված Պայմանագրի գործողության ժամկետի լրանալուց հետո 30 օրերի ընթացքում:
Ապահովագրվողի դեմ բերված վնասների համար, որոնք հանդիսանում են համաձայն վերոհիշյալ (b) և (c)

պարբերությունների գրավոր ծանուցում ներկայացնելու ուղղակի արդյունք, ցանկացած հաջորդող դատական գործընթաց անկախ նրանից, այդ գործընթացը սկսվում է Պայմանագրի գործողության ժամկետում թե այն լրանալուց հետո, համարվում է երրորդ կողմի հայց՝ բերված Ապահովագրվողի դեմ այն ժամանակ, երբ նա առաջին անգամ իրազեկ է դառնում վերոհիշյալ գործողության կամ գործողությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, համաձայնեցվում է, որ Ապահովագրողը որևէ պարտավորություն չի ունենա այնպիսի գործողության կամ գործողությունների հետևանքով հարուցված դատական գործընթացների նկատմամբ, որոնք ծագել են Ապահովագրվողի դեմ վերոհիշյալ գրավոր ծանուցման օրվանից հաշված 6 (վեց) տարուց հետո:
Որևէ երրորդ կողմի հայցի գրավոր ծանուցում ստանալուց հետո (ինչպես նշված է վերը), Ապահովագրողը պետք է նշանակի մի ներկայացուցչի, որպեսզի վերջինս իր անունից ուսումնասիրի հայցը, իսկ Ապահովագրվողը իրեն հետաքրքրող հարցերով պետք է լիովին համագործակցի Ապահովագրողի ներկայացուցչի հետ, նաև պետք է նրան ապահովի անհրաժեշտ ինֆորմացիայով և փաստաթղթերով, քանի որ նա կարող է պահանջել հարցաքննել Ապահովագրվողի աշխատակազմի այն աշխատակիցներին, ում հիշյալ ներկայացուցիչը կարող է իր հարցումների համար կարևոր համարել:

8. ԵՐԱՇԽԻՔ

Երաշխավորված է, որ Ցուցակում նշված Հարցաթերթիկի դրույթները և մանրամասները, ինչպես նաև Ապահովագրվողի անունից կամ նրա կողմից ապահովված ցանկացած լրացուցիչ ինֆորմացիան հանդիսանում է սույն Պայմանագրի հիմք և դիտվում է որպես սույն Պայմանագրի անբաժան մաս:
Ընդունելով սույն Պայմանագիրը՝ Ապահովագրվաղը համաձայնվում է, որ
(a) Հարցաթերթիկի դրույթները և մանրամասները, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ ինֆորմացիա ներկայացված է եղել իրենց կողմից և, որ սույն Պայմանագիրը թողարկվում է՝ հիմնվելով նման ներկայացումների ճշնարտացիության հիման վրա, և
(b) այն դեպքում, երբ Հարցաթերթիկը կամ որևէ այլ լրացուցիչ ինֆորմացիա իրենց մեջ պարունակում է փաստերի խեղաթյուրում, որը էապես ազդի սույնով Ապահովագրողի կողմից ռիսկի ընդունման վրա, ապա սույն Պայմանագիրը ուժը կորցրած կհամարվի:

9. ԿԵՂԾ ՀԱՅՑԵՐ

Եթե Ապահովագրվող ներկայացնում է հատուցման հայց՝ իմանալով, որ այն կեղծ է կամ ապօրինի, գումարային կամ այլ առնչությամբ, ապա սույն Պայմանագիրը համարվում է չեղյալ և դրա շրջանակներում բոլոր հայցերը մերժվում են.

10. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(a) Սույն Պայմանագրով առաջարկվող հատուցումը կատարվում է միայն Ցուցակում նշված Օրենսդրության Երկրի Դատարանների Ապահովագրվողի դեմ կայացրած վերջնական վճռի հիման վրա, բայց ոչ մեկ այլ տեղում (ներառյալ Ամերիկայի Միացյալ Նահանգները և/կամ Կանադան) կայացրած վճիռների և ոչ էլ վերոհիշյալ Դատարաններում ուրիշ դատարանների (ներառյալ Ամերիկայի Միացյալ Նահանգների և/կամ Կանադայի) կողմից կայացված վճիռների ընդունման հիման վրա անկախ նրանից, դրանք ընդունվել են փոխադարձ համաձայնությամբ, թե ոչ:
(b) Ապահովագրողի և Ապահովագրվողի միջև համաձայնեցվում է, որ սույն Պայմանագրի համար նախատեսված Պարգևավճարը հաշվարկվել է համապատասխանաբար և մեկ այլ օրենքի կամ այլ Դատարանների օրենսդրության համաձայն պարտավորությունների ի հայտ գալը հաշվի չի առնվել:
(c) Սույն Պայմանագրից ծագող Ապահովագրողի դեմ սկսված ցանկացած դատական գործընթաց կարող է սպասարկվել Ցուցակում նշված Գործընթացի Սպասարկումը ընդունելու համար Առաջադրված Անձի կամ Անձանց կողմից, ովքեր սահմանված կարգով լիազորված են իրենց անունից ընդունելու նման ծառայություն:

11. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(a) Ապահովագրվողի վերահսկողության փոփոխություն

Ապահովագրվողի սեփականատերերի կամ վերահսկողության մեջ ֆինանսական կամ այլ առնչությամբ փոփոխություն լինելու դեպքում անկախ նրանից, դա կատարվել է օրենքով, Ապահովագրվողի կողմից ինքնակամ գործողության, թե ակտիվների կամ բաժնեմասերի միաձուլման, գնման կամ վաճառքի արդյունքում կամ էլ այլ պատճառով, ապա սույն Պայմանագրիի ծածկույթը այդ պահից ի վեր կդադարի դրանից հետո ներկայացված երրորդ կողմի հայցի համար գործելուց, քանի դեռ Ապահովագրողը գրավոր չի համաձայնվել շարունակել Պայմանագիրը, միայն այն պայմանների համաձայն, որոնք կառաջարկի Ապահովագրողը:

(b) Միաձուլում, Գնում կամ Ձեռքբերում

Այն դեպքում, երբ Ապահովագրվողը կմիաձուլվի, կգնի կամ այլ կերպ ձեռք կբերի որևէ այլ բիզնեսի համաձայնագրերը, ակտիվները կամ պարտավորությունները, սույն Պայմանագրիը չի ծածկի որևէ տեսակի երրորդ կողմի հայցեր, որոնք վերաբերվում են անփութությունից բխող գործողության, սխալի, կամ բացթողման, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագում է նման բոլոր կամ որևէ համաձայնագրերը, ակտիվները կամ պարտավորությունները ստանձնելուց կամ ձեռք բերելուց, քանի դեռ Ապահովագրվողը չի ստացել Ապահովագրողների գրավոր համաձայնությունը, որպեսզի Պայմանագիրը տարածվի նաև դրանց վրա, և այնպիսի պայմաններով, ինչպիսիք կարող են ներկայացվել Ապահովագրողի կողմից՝ Ապահովագրվողի կողմից բոլոր էական փաստերի լրիվ բացահայտումից հետո:

(c) Այլ նյութական փոփոխություններ

Հարցաթերթիկում եղած փաստերի ու հանգամանքների այլ տիպի նյութական փոփոխության դեպքում, և այլ լրացուցիչ ինֆորմացիայի առկայության դեպքում, որը կարող է ավելացնել Ապահովագրողի՝ սույնով ընդունած ռիսկը, Ապահովագրվողը հնարավորինս շուտ պետք է Ապահովագրողին ներկայացնի ծանուցում նմանատիպ որևէ փոփոխության վերաբերյալ, որի հիման վրա Ապահովագրողը կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը կամ առաջարկի Ապահովագրվողին շարունակել Պայմանագիրը, սակայն այս անգամ իր ներկայացրած պայմաններով:

12. ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սույն Պայմանագրի գործողությունը կդադարի անկախ չվաստակած պարգևի վճարվելուց կամ չվճարվելուց
(a) հենց որ Պայման 11-ում ներկայացված դադարեցմանը հանգեցնող որևէ դեպք պատահի,
(b) հենց որ Ապահովագրվողի դուստր ձեռնարկությունում պատահի Պայման 11-ում ներկայացված որևէ դեպք՝ կապված հիշյալ դուստր ձեռնարկության հետ,
եթե միայն նման դեպքում Ապահովագրողը, ունենալով տվյալ դեպքի հետ առնչվող բոլոր մանրամասները, առաջարկի Պայմանագրի ծածկույթը շարունակելու վերափոխված պայմաններ և այդ պայմանները Ապահովագրվողի կողմից ընդունված լինեն,
(c) երբ Ապահովագրողը Ապահովագրվողի կողմից ստանա Պայմանագրի դադարեցումը պահանջող գրավոր խնդրանք:
Ապահովագրողը կվերադարձնի ցանկացած չվաստակած համապատասխանաբար հաշվարկված Պարգևավճար, եթե Պայմանագիրը դադարի Պայման 11-ում ներկայացված որևէ դեպքի պատճառով:
Սույն Պայմանագիրը անմիջապես կդադարի սույն Պայմանագրի ներքո մի կամ ավելի վճարումներ անելուց հետո Հատուցման Սահմանաչափի սպառման արդյունքում, որի դեպքում Պարգևավճարը կհամարվի լիովին վաստակած:

13. ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ

Սույն Պայմանագիրը չի ծածկում որևէ կորուստ, որն ապահովագրված է կամ կապահովագրվի սույն Պայմանագրի առկայության դեպքում ցանկացած այլ Պայմանագրով, բացառությամբ որևէ գումարի գերազանցումը (չանցնելով Ցուցակում նշված Հատուցման Սահմանաչափը), որը պետք է վճարվի համաձայն նմանատիպ այլ Պայմանագրի կամ Պայմանագրերի, ներառյալ դրանցով կիրառվող ֆրանշիզան, որոնք չեն ազդում սույն Պայմանագրի վրա:

14. ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Սույն Պայմանագրի դրույթների ձևակերպումը, մեկնաբանությունն ու նշանակությունը որոշվում է ըստ ՀՀ օրենսդրության և համաձայն սույն Պայմանագրում առկա անգլերեն և հայերեն տեքստերի:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. **Ապահովագրվող** ասելով հասկանում ենք նրան, ով առաջինն է նշվում Ցուցակում և իր մեջ ներառում է Ցուցակում ինչպես նաև Հարցաթերթիկում գրավոր նշված այն Բանկային կազմակերպությունները, որոնք մեծամասնությամբ պատկանում և վերահսկվում են Ապահովագրվողի կողմից:
2. **Պաշտոնյաներ և Աշխատակիցներ** ասելով հասկանում ենք
(a) Ապահովագրվողի պաշտոնյաներին, նաև աշխատակիցներին (ինչպես նաև որպես պաշտոնյա ծառայող **Ապահովագրվողի** տնօրենը կամ այլ վարձատրվող աշխատակիցները) իրենց աշխատանքի սովորական ընթացքում, և
(b) Ապահովագրվողի որևէ տնօրեն, (բայց ոչ նա, ով աշխատում է որպես վարձատրվող պաշտոնյա կամ աշխատակից), միայն աշխատակցի կամ պաշտոնյայի սովորական պարտականություններից բխող գործողությունները կատարող, բայց ոչ այլ բնագավառում աշխատող անձ,
կասկածի տեղիք չտալու համար այստեղ չեն ներառվում գործակալները, խորհրդականները, ենթա-կապալառուները կամ անկախ պրոֆեսիոնալ խորհրդականները:
3. **Ամերիկայի Միացյալ Նահանգներ և/կամ Կանադա** արտահայտությունը նշանակում է Ամերիկայի Միացյալ Նահանգների և/կամ Կանադայի բոլոր գաղութները, կախյալ տիրույթները, իշխանությունները և պրոտեկտորատները:
4. **Փոխկապակցված** ասելով հասկանում ենք այն կազմակերպությունը, որտեղ Ապահովագրվողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է իր բաժնետոմսերի 51% -ից քիչ կամ 10% -ից ավելին:

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Պայմանագրով Ապահովագրվողին չի հատուցվի՝
1. Ապահովագրվողի կողմից ընդունված ցանկացած իրավական պարտավորություն
(a) որևէ պայմանագրի կամ համաձայնագրի պայմանների կամ երաշխիքների համաձայն, կամ
(b) երրորդ կողմի կողմից պարտավորության պահանջից ազատման կամ հրաժարման դեպքում,
բացառությամբ այն պարտավորության, որը նրա բացակայության դեպքում, անցնում է Ապահովագրվողին:
2. Որևէ իրավական պարտավորություն, որը ծագում կամ որի ծագմանը նպաստում է Ապահովագրվողի, կամ նրա որևէ տնօրենի, պաշտոնյայի, աշխատակցի, ենթա-կապալառուի կամ գործակալի անազնիվ, կեղծ, հանցավոր կամ վնասաբեր գործողության կամ բացթողման արդյունքում:

3. Որևէ իրավական պարտավորություն, որը ծագում է հետևյալից, կամ որի ծագմանը նպաստել է հետևյալը՝
(a) որևէ մարմնական, մտավոր կամ հոգեկան բնույթի վնասվածք, վատառողջություն կամ հիվանդություն, կամ մահ, կամ
(b) գույքի որևէ կորուստ կամ վնասում՝ որևէ երրորդ կողմի նկատմամբ:
4. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է ապրանքների կամ այլ սեփականության, ներառյալ արժեթղթերի, փաստաթղթերի և ցանկացած տիպի գրավոր գործիքների կորուստը կամ վնասը, հաշվի չառնելով դրանք պատկանում են Ապահովագրվողին թե ոչ, նրա կողմից պահպանվում են որևէ վայրում թե ոչ կամ այն, որ նա որևէ կերպ կարող է պատասխանատու լինել դրանց համար:
5. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է օրենքի դիտավորյալ խախտումը, սահմանադրության հետ առնչվող կանոնակարգերը և օրենքի ընդունումները, Ապահովագրվողի գործողությունը և ղեկավարումը և/կամ Ապահովագրվողի բիզնեսը կամ գործառնությունները բոլոր կամ մի քանի դատարաններում, որոնք ուղղակիորոն կամ անուղղակիորեն մեծ կարևորություն ունեն:
6. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է այն, որ Ապահովագրվողը մերժել է կատարել ֆինանսավորում կամ իրականացնել փաստացի կամ որպես այդպիսին ներկայացվող պարտավորությունը վարկի կամ վարձակալության կամ վարկի երկարաձգման տեսքով վարկ կամ որևէ գործարք կատարելու ուղղությամբ՝ հաշվի չառնելով տվյալ պարտականության լիազորված կամ չլիազորված լինելը:

7. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել է որևէ փաստից, հանգամանքից կամ դեպքից, որի համար Ապահովագրվողի դեմ երրորդ կողմի ներկայացրած հայցը հատուցելի կհամարվի համաձայն Բանկային Ընդհանուր Պարտավորվածության կամ դրան համարժեք պայմանագրի անկախ դրա գումարից և այն փաստից, թե արդյոք Ապահովագրվողը իրականում կնքել է նման պայմանագիր, թե ոչ:
8. Որևէ հայց՝ ներկայացված Ապահովագրվողի սեփականատեր ընկերության կողմից, նրա անունից կամ կամքով կամ Ապահովագրվողի կամ նրա սեփականատեր ընկերության սեփականություն հանդիսացող այլ ձեռնարկության կամ մեկ այլ ընկերության կողմից, որտեղ Ապահովագրվողը, կամ նրա Պաշտոնյաները կամ Աշխատակիցները ունեն գործադիր կամ վերահսկողական շահ:
9. Որևէ երրորդ կողմի հայց, որն առաջացել է Ապահովագրվողի անվճարունակության հետևանքով:
10. Երրորդ կողմի որևէ հայց, որն իր մեջ ներառում է կամ ծագել է մի փաստից, հանգամանքից կամ դեպքից, որը տեղի է ունեցել նախքան սույնի Ետադարձ ամսաթիվը և/կամ որի մասին տեղեկացվել են Ապահովագրողը նախքան սույն Պայմանագրի մեկնարկումը:
11.Երրորդ կողմի որևէ հայց, որն իր մեջ ներառում է կամ ծագել է մի փաստից, հանգամանքից կամ դեպքից, որոնց մասին տեղեկությունը անձին կստիպեր մտածել, որ այն կարող է Ապահովագրվողի դեմ երրորդ կողմի հայցի ներկայացման հիմք հանդիսանալ և որոնց մասին Ապահովագրվողը իմացել էր նախքան սույն Պայմանագրի մեկնարկումը:
Կասկածի տեղիք չտալու համար հայտարարվում և համաձայնեցվում է, որ այս դրույթը գործում է առանց Ապահովագրողի այն իրավունքները սահմանափակելու, ըստ որոնց նա կարող է տվյալ փաստը, հանգամանքը կամ դեպքը համարի էական փաստի չհայտնում կամ թաքցնում և հնարավորություն է տալիս Ապահովագրողին Պայմանագիրը համարել անվավեր կնքման պահից ի վեր:
12. Ցանկացած տույժեր, տուգանքներ, պատժիչ կամ օրինակելի վնասներ և ցանկացած բազմապատիկ վնասներ՝ բացառությամբ նախքան նման բազմապատկումը վնասների առանձին հատուցման գումարը:
13. Ապահովագրվողի դեմ դաշնային կամ պետական իշխանության, պետական մարմնի կամ պետական գործակալության կողմից կամ անունից ներկայացված ցանկացած հայց, բացառությամբ այն դեպքի, երբ դրանք գործում են միայն որպես Ապահովագրվողի հաճախորդ:
14. Ցանկացած դատական գործ կամ դատական գործընթաց, որ ներկայացված է Ապահովագրվողի բաժնետիրոջ կամ բաժնետերերի կողմից, անունից կամ կամքով՝ որպես այդպիսին:
15. Ցանկացած երրորդ կողմի հայց, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է ներդրումների առումով թերագնահատումը (կամ չգնահատումը), ներառյալ արժեթղթերը, ապրանքները, արժույթները, օպցիոնների, ֆյուչերսների գործարքները, կամ տվյալ գործիքների կատարման համար Ապահովագրվողի կողմից կամ անունից տրամադրված փաստացի կամ որպես այդպիսին ներկայացվող երաշխիքի կամ երաշխավորության արդյունքում:
Այնուամենայնիվ, համաձայնեցվում է, որ Բացառություն 15-ը չի կիրառվի Ապահովագրվողի Պաշտոնյայի կամ Աշխատակցի անուշադրության հետևանքով պատճառված կորստի համար, Ապահովագրվողի հաճախորդի որոշակի նախնական հրահանգների համաձայն որոշակի ներդրումային գործարքների վրա ազդեցություն չթողնելու պատճառով:
16. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է վարձակալած ապրանքի կամ ծառայության արժեքի կորուստը, արժեքի հանձնումը կամ արժեքի հետածգումը նմանատիպ ապրանքների կամ ծառայությունների արժեքի տատանման արդյունքում:
17. Որևէ երրորդ կողմի հայց վճարների, կոմիսիոնների, ծախսերի կամ այլ վճարումների համար, որոնք վճարվել կամ դեռ պետք է վճարվեն Ապահովագրվողին կամ որևէ երրորդ կողմին՝ հաշվի առնելով Ապահովագրվողի դեմ բողոքները՝ չափազանց մեծ վճարների, կոմիսիոնների, ծախսերի կամ այլ վճարների առումով:
18. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է որևէ տեսակի ապահովագրման չտրամադրումը՝ հաշվի չառնելով, տվյալ ձախողումը վերաբերում է գումարին, թե ոչ և անկախ տվյալ ապահովագրման գոյությունից կամ համապատասխանությունից:
Այնուամենայնիվ, համաձայնեցվում է, որ Բացառություն 18-ը չի կիրառվի Ապահովագրվողի Պաշտոնյայի կամ Աշխատակցի անուշադրության հետևանքով պատճառված կորստի դեպքում Ապահովագրվողի հաճախորդի որոշակի նախնական հրահանգների համաձայն որոշակի ապահովագրման վրա չազդելու կամ այն չպահպանելու պատճառով:
19. Ցանկացած իրավական կամ նմանատիպ բնույթի պարտավորություն, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել կամ որի պատճառ է դարձել՝
(a) ճառագայթումների իոնացումից, կամ ցանկացած միջուկային վառելիքի ռադիոակտիվության պատճառած աղտոտումից կամ միջուկային վառելիքի այրումից առաջ եկած միջուկային թափոնից, կամ
(b) Ցանկացած պայթուցիկ միջուկային նյութերի ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր տարրերից կամ էլ դրանց միջուկային բաղադրիչներից:

20. Ցանկացած երրորդ կողմի հայց, որ ծագել է որևէ փաստացի կամ փորձ արված
(a) Ապահովագրվողի կողմից այլ բիզնեսի հետ միաձուլումից, դրա գնումից կամ ձեռքբերումից, կամ
(b) Ապահովագրվողի բաժնեմասերի, Ապահովագրվողի սեփականատեր ընկերության կամ այլ սեփականություն հանդիսացող ձեռնարկության գնման կամ վաճառման գործարքներից, բացառությամբ սակայն այն դեպքի, երբ Ապահովագրվողը գործում է համաձայն Ապահովագրվողի հաճախորդի որոշակի նախնական հրահանգների:
21. Ցանկացած իրավական պարտավորություն, որ ծագել կամ որի ծագմանը նպաստել է փաստացի կամ որպես այդպիսին ներկայացվող ցանկացած տիպի արտահոսքը, աղտոտումը կամ կեղտոտումը:
22. Ցանկացած իրավական պարտավորություն, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել կամ որի ծագմանը նպաստել է Պատերազմը, հարձակումը, թշնամությունը կամ պատերազմանման գործողությունները /անկախ այն բանից, պատերազմ հայտարարվել է, թե ոչ/, քաղաքացիական պատերազմը, ապստամբությունը, հեղափոխությունը, բողոքը, զանգվածային իրարանցումը, ռազմական դրությունը կամ օրենքով սահմանված Իշխանության գործողությունը:
23. Ցանկացած իրավական պարտավորություն, որի պատճառ է հանդիսացել երրորդ կողմի կրած կորուստը, որը ծագել կամ որի ծագմանը նպաստել է Ապահովագրվողի կողմից տրված խորհուրդը՝ կապված Հեջինգային գործարքների հետ:

Այնուամենայնիվ, համաձայնեցվում է, որ սույն Բացառություն 23-ը չի կիրառվի Ապահովագրյալի Պաշտոնյայի կամ Աշխատակցի անուշադրության հետևանքով պատճառված կորստի դեպքում՝ Ապահովագրվողի հաճախորդի որոշակի նախնական հրահանգների համաձայն որոշակի Հեջինգային պայմանագրի վրա չազդելու պատճառով:
Ելնելով սույն բացառության նպատակներից՝ Հեջինգային նշանակում է մեկ կամ մի քանի պայմանագրերի կնքումը՝ արժեքների կամ գների փոփոխությունից պաշտպանվելու համար՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, արտարժույթի փոխանակումը, ապրանքները, և ցանկացած տեսակի արժեթղթերը:

17/12/87
NMA2273

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ Ա
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 9
ԱՎՏՈՄԱՏ ԳԱՆՁՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ստորև նշված հանգամանքների ուժով՝

(A) Ապահովադրի տարածքում տեղակայված Ավտոմատ գանձման մեքենայում (տես՝ ստորև սահմանումը) Գույքի գտնվելու ընթացքում Գույքի գողություն, կողոպուտ, գույքին վնաս հասցնելով գողություն կամ արտաքին ճնշման տակ հաճախորդի կողմից գույքի հեռացում կամ՝ անկախ պատճառից կամ մեղավոր անձից գույքի վնաս կամ փչացում

(B) Ապահովադրի կողմից ֆոնդերի վճարման իրականացում Բանկի Քարտատերերի 24-ժամյա սպասարկման ընթացիկ կամ ավանդային հաշվից (հաշիվներից) դեբետագրման միջոցով, որի ժամանակ Ապահովադիրը հիմնվել է Ավտոմատ գանձման մեքենայից ուղղված էլեկտրոնային հրահանգների վրա, ենթադրելով, որ դրանք մուտք են արվել Քարտատիրոջ կողմից, սակայն որոնք իրականում մուտք են արվել Քարտատեր չհանդիսացող մեկ այլ անձի կողմից, որը

(ա) ձեռք է բերել Ավտոմատ գանձման մեքենայից օգտվելու հնարավորություն 24-ժամյա սպասարկման Բանկային քարտի կորստի կամ գողության արդյունքում, կամ
(բ) գործում է խարդախ նպատակներով գործել է ակնհայտ չարամտությամբ:

«Ընդհանուր բացառություն 28»-ից անմիջապես հետո ավելացնել հետևյալը.

29. Ավտոմատ գանձման մեքենայի միջոցով որևէ կորուստ, եթե այդ Վնասը չի փոխհատուցվում Ապահովագրության հոդված <u>No.1, No.2, No.5, No.7 կամ No.10 շրջանակներում:</u>

Հատուկ սահմանումներ Սույն հավելվածի շրջանակներում՝

1. **<u>Ավտոմատ գանձման մեքենա</u>** նշանակում է ավտոմատ էլեկտրոնային կայան (Terminal), որը տեղակայված է Ապահովադրի տարածքում և կրում է Ապահովադրի կողմից սահմանված առևտրային նշանը կամ խորհրդանիշը, որը կարող է կարդալ 24-ժամյա սպասարկման Բանկային քարտի մագնիսային ծածկագիրը և հնարավորություն է ընձեռնում Ապահովադրի 24-ժամյա սպասարկման Բանկային քարտատերերին կատարել մի շարք հիմնական ֆինանսական գործառնություններ, ներառյալ՝ ավանդադրել և ստանալ դրամ կամ Գույք և ուղարկել էլեկտրոնային հրահանգներ տվյալների կենտրոն, լիազորելով ձևակերպել դեբիտային և կրեդիտային մուտքերը քարտատերերի հաշիվների վրա:

2. **<u>24-ժամյա սպասարկման Բանկային քարտ</u>** նշանակում է Ապահովադրի կողմից կամ նրա անունից տրամադրված քարտը, որը 24-ժամյա սպասարկման Բանակային քարտատիրոջը թույլ է տալիս օգտվել Ավտոմատ գանձման մեքենաներից: Քարտի վրա դրոշմված է քարտը ստացած անձի իսկությունը հաստատող հաշվի համարը, քարտն ունի առանձին մագնիսային ծածկագիր, որը համապատասխանում է անհատական գաղտնի համարանիշին, որի իմացությունը Ավտոմատ գանձման մեքենան լրացուցիչ պահանջում է այն օգտագործող անձից:

Հատուկ բացառություններ

ՍույնԱպահովագրության հոդվածը ՉԻ տարածվում այն վնասի վրա, որը՝

(a) առաջացել է Ավտոմատ գանձման մեքենայի մեխանիկական խոտանի պատճառով ոչ պատշաճ աշխատանքի արդյունքում կամ նպաստվել է վերջինիս կողմից,

(b) առաջացել է 24-ժամյա սպասարկման Բանկային քարտատերի և/կամ նրա պատասխանատվությամբ տեղի ունեցած վնասի պատճառով կամ նպաստվել է վերջինիս կողմից,

(c) չի հայտնաբերվել սույն Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև այն վնասը, որը շարունակվել է նախքան սույն Հավելվածի ուժի մեջ մտնելու վերը նշված օրը, որը հանդիսանում է և համարվում է սույն Հավելվածի նկատմամբ կիրարկելի Հետադարձ ուժի օր:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 10
Անհատական պահատեղերի հավելված

Սույնով հասկացվում և համաձայնեցվում է, որ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր սույն Պայմանագրին կից և նրա մաս կազմող Ցուցակը ճշգրտվում է հետևյալ կերպ.

(1) Ներմուծելով հետևյալ Ապահովագրական Հոդվածը.

(10) Անհատական պահատեղ

Հաճախորդների որևէ գույքի կամ արժեքավոր տարրերի կորուստը, կամ հաճախորդներին այլ անձանց կողմից վստահված գույքի կորուստը, որը գտնվում է Ապահովադրի որևէ ապահովագրված տարածքներում գտնվող Դրամապահոցում տեղադրված անհատական պահատեղերում, մինչդեռ տվյալ գույքը կամ տարրերը կամ պահատեղերը տեղակայված են նշված տարածքներում, բայց ժամանակավորապես գտնվում են Դրամապահոցից դուրս, որի համար Ապահովագրվողը կրում է իրավական պատասխանատվություն և որը առաջացել է որևէ վնասի, կործանման կամ կորստի, գողության կամ անհետացման պատճառով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 11
Անձի նկատմամբ շորթում-սպառնալիքների հավելված բացառությամբ մարդու առևանգման և փրկագնի

Ստորև նշված անձանց ֆիզիկական վնաս հասցնելու մասին Ապահովադրին հղված սպառնալիքի հետևանքով Ապահովադրի տարածքից Գույքի հեռացման արդյունքում տեղի ունեցած Գույքի կորուստ.

(1) Ապահովադրի տնօրեն, վստահված անձ, Աշխատող, գործընկեր կամ սեփականատեր (եթե Ապահովադիրը միակ սեփականատերը չէ), կամ

(2) վերը նշված անձանց ազգական կամ նրանց կողմից հրավիրված անձ,

որը պահվում է կամ հայտարարվում է որ պահվում է ազատազրկման մեջ, եթե նախքան տվյալ Գույքի հանձնումը՝

(a) սպառնալիք ստացած անձը գործադրել է ողջամիտ ջանքեր շորթողի պահանջի մասին գործընկերներից որևէ մեկին տեղեկացնելու ուղղությամբ

(b) ողջամիտ ջանք է գործադրվել շորթողի պահանջի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ուղղությամբ:

Մնացած բոլոր դրույթներն ու պայմանները մնում են անփոփոխ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 12
ՇՈՐԹՈՒՄ – ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ բացառությամբ Տարածքներին և պարունակությանը հասցվող վնասների

1. Գույքի կորուստ, որը պատճառվել է Ապահովադրի տարածքին կամ Գույքին վնաս հասցնելու մասին Ապահովադրին հաղորդած սպառնալիքի հետևանքով Ապահովադրի տարածքից Գույքի հեռացման արդյունքում, եթե նախքան տվյալ Գույքի հանձնումը՝

   (a) սպառնալիք ստացած անձը գործադրել է ողջամիտ ջանքեր շորթողի պահանջի մասին գործընկերներից որևէ մեկին տեղեկացնելու ուղղությամբ

(b) ողջամիտ ջանք է գործադրվել շորթողի պահանջի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ուղղությամբ:

Մնացած բոլոր դրույթները և պայմանները մնում են անփոփոխ:

ԿԵՂԾ ՏԵԼԵՔՍԻ ՀԱՎԵԼՎԱԾ

Ապահովագրության պայմանագրի շրջանակներում (որին կցված է սույն Հավելվածը) հասկացվում և համաձայնվում է, որ տվալ Ապահովագրության պայմանագիրը, ինչպես նաև դրա Հավելվածը փոփոխվում է հետևյալ ձևով.

Կետ 1. Ապահովագրության Հոդված 4 «Կեղծ անդորրագրեր», փոփոխվում է, ավելացնելով հետևյալ պարբերությունը՝

(c) Ապահովադիրը, որը փոխանցել, հատուցել կամ առաքել է դրամական միջոցներ կամ Գույք, հիմնվելով Ապահովադրին անմիջապես հասցեագրված և ուղարկված և այդ դրամական միջոցների կամ Գույքի փոխանցումը, հատուցումը կամ առաքումը լիազորող կամ ճանաչող սկզբնական տելեքսի հրահանգների վրա, մինչդեռ այդ տելեքսի հրահանգը խարդախորեն միտված են ենթադրելու, որ ուղարկվել են որևէ հաճախորդի կամ մեկ այլ բանկային հաստատության կողմից, սակայն ապացուցվում է, որ այդ տելեքսի հրահանգները ունեն՝

(i) Ապահովադրի և հաճախորդի, այլ բանկային հաստատության կամ Ապահովադրի այլ գրասենյակի միջև վավեր բանալիի փոխանակում, որը լիազորված է եղել վերոնշյալ մասնակիցների կողմից սովորական բիզնես գործընթացներում տելեքս հրահանգ կատարելու համար, սակայն ապացուցվում է, որ այդ բանալին սխալմամբ ձեռք է բերվել այն անձի կողմից, որը լիազորված չի եղել սկսել, կատարել, վավերացնել, ստուգել կամ օգտագործել այդ բանալին և

(ii) խարդախորեն միտված են եղել ուղարկվելու Ապահովադրի հաճախորդին, բանկային հաստատությանը կամ գրասեյակին, սակայն այդ տելեքս հրահանգները ուղարկվել են առանց ապահովադրի հաճախորդի, բանկային հաստատության կամ գրասեյակի իմացության կամ համաձայնության, որևէ անձի կողմից, որը չի հանդիսանում Ապահովադրի, բանկային հաստատության կամ ապահովադրի գրասեյակի հաճախորդ:

Հատուկ սահմանում.
"Տելեքս" բառը սույն պայմանագրում նշանակում է հեռահաղորդագրություն, տելեքսի, TWX-ի կամ նմանատիպ հաղորդակցության սարքավորումների միջոցով, որը փոխանցվել է ուղղակիորեն Ապահովադրի հաղորդակցման սենյակում գտնվող հաղորդակցության կայան:
Դա չի նշանակում ֆաքս կամ էլեկտրոնային հաղորդակցություն ուղղարկված ավտոմատացված միջբանկային հաղորդակցության համակարգի, հաճախորդների հետ հաղորդակցության ավտոմատացված համակարգի կամ այլ նմանատիպ էլեկտրոնային հաղորդակցության համակարգի միջոցով:

2) 26 Բացառությունը լրացվում է հետևյալ կերպ. "Ապահովագրական հոդված 1"-ը փոխարինվում է "Ապահովագրական հոդված 1 և 4"-ով
Բացառությամբ վերը նշվածի սույն Հավելվածը ենթակա է Ապահովագրության պայմանագրի (որին կցված է սույն Հավելվածը) բոլոր դրույթներին, սահմանումներին, բացառություններին և պայմաններին:

S.W.I.F.T. ՀԱՎԵԼՎԱԾ

Սույնով հասկացվում և համաձայնվում է, որ Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից՝

Ապահովագրության պայմանագիրը, որին կցված է սույն Հավելվածը (այսուհետև «Ապահովագրության պայմանագիր») փոփոխված է հետևյալ կերպ.

(1) Ապահովագրության հոդված 4-ում ավելացել է «Կեղծ անդորրագրեր և այլն».

(d) բանկային հաստատությունների կողմից S.W.I.F.T. համակարգով Ապահովադրին հասցեագրված հաղորդագրության վրա ցանկացած կեղծված ստորագրություն (վերը նշված S.W.I.F.T. համակարգով հաղորդագրություններ, որոնք հղվել են նշված բանկային հաստատություններից բացի այլ՝ նման հաղորդագության առաքման համար հավակնող անձանց կողմից, համարվում են կեղծ ստորագրություն կրողներ)

(2) «Ընդհանուր սահմանումներ» բաժնի 19-րդ կետին հաջորդել է հետևյալ կետը.

20. «S.W.I.F.T. համակարգ» նշանակում է Բելգիայի Բրյուսել քաղաքում տեղակայված Համաշխարհային Միջբանկային Ֆինանսական Հեռահաղորդակցության Միության կողմից կառավարվող հաղորդագրությունների փոխանցման համակարգը, իսկ «S.W.I.F.T. համակարգի հաղորդագրություններ» նշանակում են այն հաղորդագրությունները, որոնք

փոխանցվել են նշված համակարգով և ուղղվել են դեպի Գործառնական կենտրոն

(3) «Ընդհանուր սահմանումներ» բաժնի 31-րդ կետին հաջորդել է հետևյալ կետը.

32. Ցանկացած կորուստ, որն ուղղակիորեն և անուղղակիորեն տեղի է ունեցել S.W.I.F.T. համակարգի հաղորդակցությունների կեղծիքի կամ փոփոխության արդյունքում, մինչ տվյալ հաղորդագրությունը գտնվում էր համակարգի Համաշխարհային Միջբանկային Ֆինանսական Հեռահաղորդակցության Միության կողմից վերահսկվող հատվածում և օգտագործողների նկատմամբ այդ կազմակերպության պատասխանատվության և պարտականությունների շրջանակում

(4) Սույն Ապահովագրության պայմանագրին ավելացել է հետևյալ «Պատասխանատվության նախադեպ հանդիսացող պայմանները».

Բաժին 1-ի Ապահովագրության հողված 4-ի (գ) ենթակետով սահմանված ցանկացած պատասխանատվության համար Նախադեպ են հանդիսանում հետևյալ դեպքերը.

(a) Ապահովադրի կողմից օգտագործվում է Վավերացնող տեղեկատվություն (Authenticator) S.W.I.F.T. համակարգի բոլոր հաղորդագրություններում,

(b) Ապահովադրի կողմից օգտագործվում է Գաղտնագրային սարք (Crypto Equipment) Ապահովադրի տերմինալից դեպի S.W.I.F.T. Տարածաշրջանային պրոցեսոր,

(c) S.W.I.F.T. համակարգի հաղորդագրությունները պետք է ստուգվեն դրանք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում՝ հերթականության խախտման կամ կրկնակի հերթական համարի բացահայտման նպատակով:

ՍՈՒՅՆՈՎ ՀԱՍԿԱՑՎՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՎՈՒՄ Է, որ բացառությամբ վերը նշվածին հակասող առանձնահատուկ դեպքերի, սույն Հավելվածը ենթակա է Առաջարկի Ձևում, Ծրագրում և Ապահովագրության պայմանագրում (որին կցված է սույն Հավելվածը) նշված շրջանակներին, Ապահովագրության հոդվածներին, պատասխանատվության նախադեպ հանդիսացող պայմաններին, սահմանումներին, բացառություններին, սահմանափակումներին և այլ դրույթներին:

ԿԱՆԽԻԿԻ ՆԱՄԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

A. Ապահովադրի գրասենյակից մինչև մեկ այլ վայր հավաքագրման, ներկայացման կամ վճարման ընթացքում որևիցե պատճառներով կորած՝ Կանխիկի նամակին կցված նյութի կամ նյութերի ուժով: Այն դեպքում, եթե բանկը, որին ուղղված էր այդ նյութը, Ապահովադրին է վերադարձնում տվյալ նյութը, վերջինս համարվում է տարանցիկ՝ մինչև Ապահովադրի կողմից դրա ստացումը:

B. Հեռախոսավարձերի, հավելյալ Աշխատողներին վճարված աշխատավարձերի կամ մշտական Աշխատողներին վճարված արտաժամյա աշխատավարձերի հետ կապված ծախսերի պատճառով, որոնք կրել է Ապահովադիրը կորած նյութերի ավանդատուներին հայտնաբերելու և/կամ կորած նյութերի կրկնօրինակների ձեռքբերման ուղղությամբ ավանդատուներին աջակցելու առնչությամբ:

Սույն հավելվածի համար պայման է հանդիսանում այն, որ Ապահովադիրը պատրաստում և պահում է ոչ ավել քան մեկ փոխանցման ստորագրություն կրող յուրաքանչյուր նյութի առաջին (անվանական) էջի լուսանկարչական գրանցումը, իսկ մեկից ավելի փոխանցման ստորագրություններ կրող յուրաքանչյուր նյութի դեպքում՝ առաջին (անվանական) և վերջին էջերի լուսանկարչական գրացումը: Համարվում է, որ Ապահովադիրը բավարարել է այս պայմանը այն դեպքում, եթե լուսանկարչական գրանցումն անհնար է եղել այդ լուսանկարների համար օգտագործված լուսանկարչական սարքերի մեխանիկական խոտանի, որևիցե պատճառով ժապավենի վնասվելու կամ փչանալու, ժապավենի վրա տվյալ նյութի ընթեռնելի պատկեր ստանալու անհնարինության, կամ Ապահովադրի Աշխատողի կողմից կատարված սխալի կամ բացթողման հետևանքով:

Վերոհիշյալ պայմանը կիրառվում է միայն համապատասխան լուսանկարչական սարքեր ունեցող տարածքների համար:

Սույն հավելվածի պայման է հանդիսանում այն, որ յուրաքանչյուր նյութի վերականգնման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները գրանցվում, սկանավորվում կամ պատճենահանվում են նախքան փոխանցումը:

Մնացած բոլոր դրույթները և պայմանները մնում են անփոփոխ:

Պլաստիկ քարտերի լիովին բացառություն

Կորուստ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել է վճարման, ստացման, գանձման, մուտքի իրավունքի, հարմարման, անձի հաստատման կամ այլ քարտերի օգտագործումից կամ ներառումից, երբ այդ քարտերը թողարկվել կամ պատրաստվել են թողարկման՝ Ապահովագրվածի կամ ցանկացած այլ անձի կողմից:

ԲԱԺԻՆ Բ
ՄԱՔՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ –

Հաշվի առնելով Ապահովագրության պայմանագրի (որին կցված է սույն Հավելվածը) շրջանակներում գանձվող պարգևավճարը, հասկացվում և համաձայնվում է, որ տվյալ Ապահովագրության պայմանագրում կատարվում է փոփոխություն՝ ավելացնելով հետևյալ Ապահովագրության հոդվածը.

(9) էլեկտրոնային Համակարգչային Հրահանգների վավերացման և վերականգնման նպատակով, Ապահովադրի կողմից՝ Անդերռայթերների նախնական համաձայնությամբ, կրած կամ կատարած ծախսերի և/կամ վճարների կեղծման կամ անարդարացի փոփոխության ուժով, ինչը հանգեցրել է սույն Ապահովագրության պայմանագրի Ապահովագրության 2-րդ հոդվածով սահմանված վնասին:

Ծախսերի ավելացման առնչությամբ Ապահովագրված Գումարը սահմանափակվում է Ծրագրում նշված գումարի չափով, որը ներառված է պատասխանատվության հանրագումարում, այլ ոչ թե ի լրումն դրան:

Մնացած բոլոր դրույթները և պայմանները մնում են անփոփոխ:

Բաժին Գ
Դրամի լվացման բացառություն

Սույնով հասկացվում և համաձայնեցվում է, որ այս Պայմանագիրը վերափոխվում է հետևյալ կերպ.
(1) Բացառություններին ավելացվում է նաև հետևյալ բացառությունը.

«Դրամի լվացման հետ կապված որևէ գործողությունից կամ գործողություններից (կամ ենթադրվող գործողությունից կամ գործողություններից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխող պատասխանատվությունը, որը մտնում է դրամի լվացման օրինականացման (կամ որևէ կառավարական մարմնի կամ լիազորի կողմից հաստատված կարգավորման, կանոնավորման կամ պայմանավորվածության) ներքո խախտումների կազմում:
Հաստատելու պարտավորությունը, որ տեղի ունեցած հայցը չի վերաբերում այս բացառությանը, կրում է Ապահովագրվածը:

(2) Սահմանումներին ավելացվում է նաև հետևյալ սահմանումը.
«Դրամի լվացում» նշանակում է՝

(i) Անթույլատրելի գույք թաքցնելը, քողարկելը, փոխանակելը, փոխանցելը կամ տեղափոխելը (ներառյալ դրա բնույթը, աղբյուրը, տեղադրվածությունը, տեղաշարժը կամ սեփականությունը կամ դրա հետ կապված որևէ իրավունքը թաքցնելը կամ քողարկելը), կամ

(ii) Անթույլատրելի գույքի ձեռքբերման, պահման, օգտագործման կամ վերահսկման հետ ցանկացած ձևով առնչություն ունեցող գործարքի մեջ մտնելը կամ դրա հետ առնչվելը՝ այլ անձի անունից կամ միջոցով, կամ

(iii) Անթույլատրելի գույքի ձեռքբերումը, օգտագործումը կամ այն ունենալը, կամ

(iv) ցանկացած գործողություն, որը պարունակում է վերոհիշյալ (i), (ii) կամ (iii) պարագրաֆներում հիշատակված գործողությունների իրագործման փորձ, դիտավորություն կամ մտադրություն, կամ

(v) ցանկացած գործողություն, որը ներառում է վերոհիշյալ (i), (ii) կամ (iii) պարագրաֆներում հիշատակված գործողությունների աջակցություն, դրանցում մասնակցություն, խորհրդատվություն կամ երաշխավորություն:

«Անթույլատրելի գույք» նշանակում է գույք, որը պարունակում է հանցավոր գործունեության արդյունքում ստացված շահույթ կամ ներկայացնում է նման շահույթ (ամբողջապես կամ մասնակիորեն, ուղղակիորեն կամ անուղղակիորեն), ինչի մասին Ապահովագրվածը (կամ նրան ներկայացնող որևէ անձ կամ միավորում) տեղյակ է կամ ենթադրում է կամ ողջամտորեն պիտի տեղյակ լինի կամ ենթադրի, որ այն պարունակում կամ ներկայացնում է նման շահույթ»:

«Հանցավոր գործունեություն» նշանակում է գործունեություն, որը ներառում է (կամ կներառեր) հանցանք՝ իրագործված աշխարհի որևիցե մասում:

Մնացած բոլոր դրույթներն ու պայմանները մնում են անփոփոխ:

էլեկտրական/մեխանիկական ընդհատման դրույթ

Համաձայնեցված է, որ այս Պայմանագիրը չի վերաբերում որևէ կորստի, որը ծագել կամ առնչվում է մեխանիկական,

էլեկտրական կամ համակարգչային ծախողմանը, ընդհատմանը կամ ցանկացած սարքավորման կամ սարքավորումների համակարգի խափանված գործունեությանը:

Մնացած բոլոր դրույթներն ու պայմանները մնում են անփոփոխ:

Կանխամտածված Կորպորատիվ Գործողությունների Բացառում

Անդերրայթերները սույն Ապահովագրական պայմանագրով պատասխանատու չեն Կորպորատիվ կամ Բիզնես Ապահովագրական Պայմանագրի որևէ հայցի համար:

Ապահովադրի "Կորպորատիվ կամ Բիզնես Ապահովագրական Պայմանագիր"-ը պետք է հասկանալ որպես ապահովագրական պայմանագիր, որը բացահայտ կամ անուղղակի կերպով հաստատվել, հավանության է արժանացել կամ ստորագրվել է Ապահովադրի Կառավարման Մարմնի երկու կամ ավելի անդամների կողմից, և ինչի հետևանքով.

(a) Ֆինանսական վնաս է հասցվել Ապահովադրի նախկին կամ ներկա երկու կամ ավելի հաճախորդներին, կամ պոտենցյալ հաճախորդներին, որոնց նկատմամբ Ապահովադիրը կրում է իրավական պատասխանատվություն կամ պարտավորություն, և

(b) Ապահովադիրը ստանում է ֆինանսական շահույթ, որին նա այլապես ենթակա չէր, անկախ այն հանգամանքից, թե այդ շահույթը պահվում է նրա մոտ, թե ոչ:

"Ապահովադրի Կառավարման Մարմին" նշանակում է Ապահովադրի Նախագահ, Գլխավոր Գործադիր Տնօրեն, Նախագահ, Կառավարիչ, Ապահովադրի Կառավարող Խորհրդի որևէ անդամ, Ապահովադրի որևէ Տնօրեն, և ցանկացած անձ, որը համարժեք պաշտոն է զբաղեցնում կամ որը լիազորված է Ապահովադրի կողմից Ապահովադրի գործողությունների և կառավարման վերաբերյալ որոշումներ կայացնել:

Բոլոր մյուս պայմանները մնում են անփոփոխ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ (Վերաապահովագրություն)

Բացառությամբ սույն վերաապահովագրության պայմանագրին կամ դրա հավելվածներին հակասող դրույթների, սույնով հասկացվում և համաձայնվում է, որ վերաապահովագրությունը բացառում է որևէ բնույթի կորուստ, վնաս կամ ծախս, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է ստորև նշված հանգամանքների արդյունքում կամ դրանց կապակցությամբ՝ անկախ դրանց նպաստող մեկ այլ պատճառի կամ դեպքի միաժամանակյա կամ այլ հաջորդականությամբ տեղի ունենալու փաստից.

(1) պատերազմ, հարձակում, օտարերկրյա թշնամական գործողություններ, թշնամական կամ ռազմական գործողություններ (անկախ պատերազմի հայտարարված լինելուց կամ չլինելուց), քաղաքացիական պատերազմ, ապստամբություն, հեղափոխություն, խռովություն, քաղաքացիական հուզումներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել ապստամբության, հեղաշրջման կամ իշխանության բռնագրավման

(2) ահաբեկչական գործողություններ:

Սույն հավելվածի շրջանակներում, ահաբեկչական գործողությունը նշանակում է այնպիսի գործողություն, որը ներառում է (սակայն չի սահմանափակվում նշվածով) ինքնուրույն կամ որևէ կազմակերպության (կազմակերպությունների) կամ պետության (պետությունների) անունից կամ դրանց հետ փոխկապակցված գործող որևէ անձի կամ անձանց խմբի (խմբերի) կողմից ուժի կամ բռնության գործադրում և/կամ դրա սպառնալիք, որը հետապնդում է քաղաքական, կրոնական, գաղափարախոսական կամ նմանատիպ այլ նպատակ, այդ թվում նաև նպատակ ունենալով ներգործել որևէ պետության վրա և/կամ վախ տարածել հանրության կամ նրա մի հատվածի շրջանում:

Սույն հավելվածը բացառում է նաև որևէ բնույթի կորուստ, վնաս կամ ծախս, որն ուղղակիորեն կամ

անուղղակիորեն պատճառվել է վերահսկման, կանխման, ճնշման կամ վերը նշված (1) և/կամ (2) կետերում թվարկված հանգամանքների հետ որևէ կերպ առնչվող գործողությունների արդյունքում:

Եթե Վերաապահովագրողները հայտարարեն, որ սույն բացառության ուժով որևէ կորուստ, վնաս կամ ծախս չի ծածկվում սույն վերաապահովագրությամբ, ապա հակառակն ապացուցելու բեռը դրվում է Վերաապահովագրվածի վրա:

Այն դեպքում, եթե սույն Հավելվածի որևիցե հատված համարվում է անվավեր կամ անկիրարկելի, մնացած հատվածները մնում են լիարժեք ուժի մեջ և շարունակում են լիիրավ գործել: